

Գ. Թ. ՇԻՐԻՆՅԱՆ



Հ ԱՅԿԱԿԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Գ.Թ.ՇԻՐԻՆՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀ**

(ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 914(479.25)(07)

ՊՄԴ 26.89(2Հ) g7

Ը 646

Շիրինյան Պարիել

Ե646 Հայկական լեռնաշխարհի (Ֆիզիկական աշխարհագր.): Ուս. ձեռնարկ.-

Եր.: Հեղինակային հրատարակություն, 2008.- 220 էջ:

Չեռնարկը Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական վերլուծական ամփոփ ուսումնասիրություն է: Երկրաչափական մասեցմամբ և նորագույն մեթոդների կիրառմամբ ճշգրտված սահմաններում դիտարկված և վերլուծված են նրա բնական պայմանների բոլոր բաղադրիչները, որոնց առանձնահատկությունների համալիր եաշվառմամբ առաջին անգամ կատարված է մանր ներքին շրջանագում: Տրված է ռուսերեն և անգլերեն ամփոփում:

Նախատեսվում է աշխարհագրություն ուսումնասիրողների, աշխարհագրության հետաքննիչ մյուս մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

Գիրքը նվիրվում է հայրենի լեռնաշխարհը կորցրած Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Пособие является физико-географическим исследованием Армянского нагорья.

Новейшими методами геосистемного подхода подробно наблюдаются и проанализированы все его природные компоненты с уточнением таксономической границ "области". Учитывая особенности природных компонентов физико-математическим комплексными методами впервые сделано внутреннее районирование нагорья, включая таксономическую единицу "район".

Дано краткое содержание на русском и английском языках.

Пособие предназначено для изучающих географию и специалистов смежных с географией наук, а также широких кругов читателей.

Книга посвящается памяти жертвам геноцида армянского народа, потерявшей свою исконную Родину.

The manual is a physico-geographical integral and comprehensive of the Armenian highland.

By the geosystem approach and by applying the latest methods within the precise limits is considered and analysed all the components of its natural conditions. By calculating their specifications using physico-mathematical complex method for the first time highland internal physico-geographical zonation is done including taxonomic "area" unit. Here is given its Russian and English summery.

It is specified for the researchers of the geography, also for the other specialists and for the broad audiences of the readers.

The book is dedicated to the memory of the victims of Armenian Genocide who lost their native land.

ՊՄԴ 26.89(2Հ) g7

ISBN 978-9939-53-139-7

© Պ.Շիրինյան, 2008թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Աշխարհագետ, քարտեզագիր, մանկավարժ եւ բնագետ Գ.Թ.Շիրինյանի գիտական գործունեությունը սկսել է Երեւանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետում ուսանելու տարիներին: Տակավիճ առաջին կուրսից սկսած հայրենի բնաշխարհը տեսնելու եւ ծանոթանալու մպատակով կազմակերպել է տուրիստական արշավներ, դրանց մասին հոդվածներ գրել համալսարանական եւ հանրապետական մամուլում: Գերազանց ուսանելով եւ հասարակական ակտիվ գործունեությամբ զբաղվելով համագործակցել է Հայաստանի տուրիզմի հանրապետական ֆեդերացիայի եւ պատանի տուրիստների հարապետական կայանի հետ՝ օգնել մյանց միջոցառումների կազմակերպմանն ու իրագործմանը: 1967թ. բուհ-ն ավարտելուց հետո երեսուն տարի շարունակ հետազոտական գործունեություն է ծավալել, բազմիցս մասնակցելով հայրենի բնության ֆիզիկաաշխարհագրական ուսումնասիրությանը մվիրված զանազան գիտարշավախմբերին: Ջեկուցումներով հանդես է եկել գիտական կոնֆերանսներում եւ սեմինարներում: Կազմակերպել եւ ղեկավարել է հետիոտն տուրիստական բազմաթիվ արշավներ, հանրապետական հավաք-մրցումներ, անցկացրել գործնական եւ սեմինար պարապմունքներ: Այդ տարիներին քայլելով անցել է հազարավոր կիլոմետրեր, բարձրացել լեռներ, հաղթահարել բնակլիմայական բազմազան խոչընդոտներ եւ ավելի շատ գիշերներ անցկացրել է բնության գրկում, քան տանը: Առաջնորդվելով «բնությունը աշխարհագետի լաբորատորիան է» նշանաբանով, լավ ուսումնասիրել է մեր հանրապետության, Անդրկովկասի, Կովկասի եւ Դրիսի բնությունը: Ամխոնջ եւ եռանդուն բնասեր է: ՀՀ-ում բարձրացել է Արագածը եւ 2000 մ-ից բարձր շատ զագաթներ, մշակել եւ առանձին գրքով («Հայրենի արահետներով») ներկայացրել է հանրապետության 50-ից ավելի հետիոտն տուրիստական երթուղիներ: Կազմել է ՀՀ տուրիստական երթուղիների քարտեզներ, մասնակցել հանրապետության լեռնանցքների որակավարգման աշխատանքներին: Կովկասում բարձրացել է Էլբրոսը, Դոնգուզ օրին բաշին, Դրիում՝ Ռոման Կոշը, Անդրկարպատներում՝ Գովեռան, Իրանում՝ (բուլղար այլիմիստների հետ) Դեմավենդ եւ Մաբալան զագաթները: Բնության մկատմամբ ջերմ սերը նրան միշտ ձգել է ճամփորդելու, ճանաչելու եւ սովորելու բնաշխարհից: Դամփորդել է Միջին Ասիայում, Թուրքիայում: Սեռնովյան ու Կասպյան ավերից, Մերձբարխիկայով եւ Կարելիայով հասել է Մուրմանսկ: Աշխատել է ՀՍՀ խմբագրությունում, որպես քարտեզագիր-խմբագիր, ապա ԵՊՀ-ի Հայագիտության կենտրոնում, որտեղ կազմել եւ տպագրության է պատրաստել «Հայաստանի եւ Խորհակից շրջանների տեղանունների քառարան»-ի քարտեզները: Կազմել է ակադ., լեզվաբան Գ.Ջահուկյանի «Հայ բարբառներ»-ի 2 քարտեզը, ակադ. պատմաբան Ս.Երեմյանի մի քանի քարտեզները, Ազգագրության ինստիտուտի ֆիլաաշխատողներ Մրբ.Լիսիցյանի, Վ.Բդոյանի, Վ.Վարդումյանի,

Է. Պետրոսյանի, Հ. Կարազոյզյանի քենատիկ-քարտեզները, Լ. Հակոբյանի «Քարտեզագրված պատմություն հայոց» գրքի եւ այլ տարաբնույթ քարտեզներ: Միաժամանակ քարտեզագրություն է դասավանդել աշխարհագրական ֆակուլտետում:

Որպես ճանաչված քարտեզագրի 1975թ. հրավիրվել է աշխատելու ԽՍՀՄ-ի Հանրապետության տնտեսության համամիութենական ինստիտուտի (ՀՀՏՀԻ) Կովկասյան լաբորատորիայում: Այստեղ նրա պատրաստած երեք քենատիկ քարտեզները արժանացել են միութենական առաջին կարգի դիպլոմի, բարձրագույն մրցանակի եւ պարգևատրման: 1973-1982թթ. չորս անգամ մասնակցել է ՍՍՀՄ համամիութենական հավաք-մրցումներին որպես Հայաստանի պատանի տուրիստների թիմերի ղեկավար (1973թ. Անդրկարպատներ, 1976թ. Բելոռուսիա, 1979թ. Հայրավային Ուրալ, 1982թ. Ադրբեջան): Այդ հավաք-մրցումներից վերադարձել են տարրեր կարգի դիպլոմներով, մրցանակներով եւ արժանապատիվ ձևորբերումներով: 1978թ. ՀՍՍՀ լուսավորության նախարարության կողմից Գ. Թ. Շիրինյանը աշխատանքի է նշանակվում ՈՒԿՀԻ-ի Աշխարհագրության մեթոդ կաթինների վարիչի պաշտոնում: Այստեղ աշխատած տասնչորս տարիների ընթացքում պլանավորած գույծուղումներով եղել է հանրապետության համարյա բոլոր դպրոցներում, կատարել դասալուծումներ, քննարկումներ, վարել ուսուցիչների որակավորման կատարելագործման շուրջտարյա դասընթացները: Մշակել եւ մատուցել է ուսուցման մանկավարժական առաջավոր փորձը, հանդես եկել միութենական մամուլում: Նա զանազան մեթոդական բարեփոխումներ է կատարել ուսումնական ծրագրերում եւ դասագրքերում՝ դրանցում կարեւորելով աշխարհագրության կիրառական ուղղվածությունը: Տաս տարի շարունակ եղել է դպրոցական աշխարհագրության օլիմպիադաների հանրապետական Կազմկոմիտեի գլխավորատուղարը: 1989թ. որպես Հայաստանի թիմի ղեկավար, 3 աշակերտի հետ մասնակցելով Կեղեք քաղաքում կազմակերպված դպրոցականների աշխարհագրության համամիութենական առաջին օլիմպիադային, վերադարձել են փայլուն հաղթանակներով (1 առաջին եւ 2 երրորդ կարգի դիպլոմներով): Հանրապետությունում վաստակաշատ մանկավարժի եւ լավագույն մասնագետի ճանաչում ունեցող Գ. Թ. Շիրինյանը 1992թ. հրավիրվում է նոր կազմակերպված Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունում աշխատելու, որպես առաջատար ինժեներ եւ քննչության հետ տարվող աշխատանքների գծով կազմակերպիչ: Նույն տարում համառոտության կարգով աշխատանքի է հրավիրվել Երեւանի հայկական պետական ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի կիրառական մարզաձևերի ամբիոնում նոր կազմակերպված փրկարարների մասնագլխագման խմբում դասախոսելու: Իր բազմաբնույթ աշխատանքային գործունեության ընթացքում նա միշտ մեծ սիրով ու նվիրումով է իր գիտելիքներն ու փորձը սովել ուսանողներին, ուսուցիչներին, մարզիկներին եւ ուրիշներին: Առանձնապես մեծ է քննչետի, քարտեզագրի եւ վաստակավոր մանկավարժի

ճկարկունը հայրենամեծեր սաների կրթության ու դաստիարակության գործում: Ունենալով պատասխանատվության զգացողություն, ջանադիր աշխատասիրության շնորհիվ նա միշտ գտել է դժվարությունները հաղթահարելու ուղին: Բնավորությամբ անաչառ է, լայնախոհ, պրպտող, ամադդարության հանդեպ՝ ըմբոստ, բարեխոգի, լավատես եւ բարեկամասեր: Ունի բնաշխարհիկ աշխարհայացք: Նրա հետաքրքրությունների ոլորտը հայրենագիտությունն է, հայրենի բնաշխարհի բնության բազմակողմ դրսետրումները բացահայտելը, հայրենագիտությունն ու երկրակոլոգիական հետազոտությունները: Հեղինակ է վեց գրքի, գիտական հոդվածների, բազմաթիվ տարաբնույթ մասնագիտական քարտեզների, ուղեցույցների, ֆոնդային նյութերի, ինչպես նաեւ համահեղինակ է ուսումնական ձեռնարկների: Այս մեծագրությունը հրատարակման է ներկայացվել 2004 թվականին: Հրատարակման եւ պատրաստ նրա գրչին պատկանող ձեռագիր շատ գործեր (Տուրիստական տերմինների բացատրական բառարան, Հայոց տոհմաձառ, Երկրաբանապատմաաշխարհագրական ժամանակագրության աղյուսակ, Հայկական լեռնաշխարհի լճերը, Մարզական կողմնորոշում տեղանքում) եւ .սեյսմոտեկտոնիկայի վերաբերյալ թեմատիկ քարտեզներ: ՄՊԱԾ-ի Երկրադինամիկայի բաժնի աշխատակիցն ու խոհուն մտավորականը երիտասարդական ավյունով տոգորված շարունակում է բնատարածքներին եւ էկոլոգիայի խնդիրներին վերաբերվող գիտական ուսումնասիրությունը:

**Աշխարհագրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր
ԵՊՀ-ի դասախոս՝**

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայտնի է, որ գիտության առաջընթացի համար անհրաժեշտ են արտաքին նւ ներքին գործոնների համատեղ ազդեցությունները: Արտաքին գործունը դա կանքի պահանջն է՝ սոցիալական պատվիրը: Այն գիտության ճյուղի ձևավորման սկզբնապատճառային խթանիչն է: Այդ կտրվածքով, արտաքին գործունի առումով, աշխատանքում տրված է Հայկական Լեռնաշխարհի հասկացության ֆիզիկաաշխարհագրական էությունը, որն առայսօր տարբեր գիտությունների մասնագետների կողմից ներկայացված է ոչ ճիշտ ըմբռնմամբ, անորոշ սահմաններով նւ տեսնամաբարտախան անվանումներով: Այդտեղից ծագած սխալ ըմբռումը թափանցել է նաև այլ բնագավառներ նւ տեղի տվել հասկացության բուն էությունը ու բնայթղ աղավաղող գանազան մոտեցումների ու պատկերացումների: Առաջին՝ գիտության առաջընթացի արտաքին գործունի առումով որպես նպատակ սույն աշխատությունում նախ պարզաբանված նւ հստակեցված են լեռնաշխարհի հասկացության ֆիզիկաաշխարհագրական բնույթը, իսկ տեղիների բաաբանում սրված է նրա բացատրությունը: Ապա գիտականորեն հիմնավորված է ուսումնասիրվող այդ լեռնաշխարհի հայկական անվանումը: Երկրորդ՝ հայտնի է, որ գիտության առաջընթացի ներքին գործունը ամբողջ ուժով դրսևնորվում է ավելի ուշ, գիտության զարգացման այն մակարդակից սկսած, երբ ինքնուրույն ուժ է դառնում գիտության ինքնակտոարելւագործումը: Այդ ինքնակտարելւագործումը դառնում է տվյալ գիտության զնահատում, որպես հետագա զարգացման անհրաժեշտ պայման: Ակնհայտ է, որ գիտության կտարելւագործումը ապաեծվում է հատկապես սեփական մեթոդաբանության նւ մեթոդիկայի վերլուծության ու կտարելւագործման միջոցով: Այդ նպատակի առումով ֆիզիկական աշխարհագրության վերաբերյալ այս աշխատությունում առաջին անգամ կիրառված ֆիզիկամաթեմատիկական համալիր մեթոդիկաների միջոցով ճշտված են Հայկական Լեռնաշխարհի միաձույլ ամբողջականության արտաքին սահմանները: Այնուհետև, տրված են ֆիզիկաաշխարհագրական բոլոր բնույթագրիչների ներկա վիճակի վերլուծությունները, որոնց հիման վրա արված են գիտատեսական ընդհանրացումներ, իսկ մեթոդաբանական անդրադարձի շնորհիվ կտարելւագործված է ներքին շրջանացում՝ ներառյալ շրջան կարգաբանական միավորը: Եվ ահա, ընդհանուր գծերով, թե ինչպես է գիտությանը ներկայանում այդ տարածքը:

Երկրագնդի այն տարածքը, որը տեղադրված է Մեւ, Միջերկրական, կասպից ծովների նւ Պարսից ծոցի միջև՝ մարդկության պատմության ամենաանագույն ժամանակներից ի վեր կոչվում է Հայք, Հայաստան, Արմենիա: Այդ տարածքում է ձևավորվել արմենոիդ մարդաբանական տիպը նւ հետագայում առտիճանաբար սփռվել է շրջակա նւ ավելի հեաավոր տարածքներում: Նրանց սփռմանը վերաբերող պատմագիտական նւ լեզվաբանական ուսումնասիրություններում «ժողովուրդների մեծ գաղթ» հայտնի տեսությունում այդօրինակ գանգվածային տեղա-

շարժերի շարքում այն ընդունված է արհացիների ներթափանցում ձևավորվածում: Այդ տարածքից արհացիների շարունակական ախեւան արդյունքում Եվրասիա մայրցամաքի ամբողջ արմատյան կնտում (Հնդկաստանից մինչև Իտալիա) ձևավորվեցին հնդեվրոպական լեզվաընտանիքին սրտկանող ժողովուրդները: Արմենոիդ տիպի արմեններ գրուի մի մասը մնաց Արմենիա կոչվող հայրենի տարածքում և հաջորդ հազարամյակների ընթացքում կերտվով և իր գաղափարներն մշակութային որոշմի թողնելով շարունակում է իր ստաջրնթաց պատմությունը: Արմենիա «Հայաստանը» ավելի շուտ տարածքային էթնիկական (ազգագրական) պատկանելիություն է ցույց տալիս: Հայաստան անվան «աստան» վերջավորությունը պարզեցնելից է փոխառված և հայերենում էլ նշանակում է տվյալ ժողովուրդի ձևավորվելու և սարքելու վայր՝ հայրենիք, տարածք, նրկիր, ինչպես օրինակ, Պարսկաստան, Հնդկաստան, Հունաստան, Ռուսաստան, Չինաստան, Վրաստան և այլն: Հայոց աշխարհի՝ Հայաստան-Արմենիա-Արմենիաստան (Լ:րմենիաստան)-ի մասին գոյություն ունի լայնածավալ գրականություն թե հայերեն և թե օտար լեզուներով: Բազմաթույս է վիթխարի գրական ժառանգություն ունեցող հայ ժողովուրդը իր բնաշխարհի բնությանը՝ ֆիզիկական աշխարհագրությամբ վերաբերող առ այսօր ամփոփ աշխատություն համարյա չունի: Եվ դա պատահական չէ, քանի որ պատմական իրադարձություններում բազմիցս փոփոխված սահմաններով, բաժան-բաժան եղած և բզկտված Հայաստանը նվաճողների և ասարատակողների կողմից իրենց գավթողալու քաղաքականությունը ամրապնդելու և կառավարումը հնչտացնելու հստակ կատարվել են ամենաբազմազան և անբնական վարչական բաժանումներ: Դրա առավել դաժան դրսևորումը ավելի ուժգին արտահայտվեց դեռևս 15-րդ դարում թուրքերի կալմից նվաճված Հայաստանի տարածքում: Աստիճանաբար փոխվել, թուրքերեն են դարձվել բազմաթիվ տեղանուններ: Այդպիսի դաժան բզկտման նթարկվեց Հայաստան աշխարհի նաև Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Եվ ի վերջո 1920թ-ից հետո հային մնաց իր բնաշխարհի 1/15 մասը Խորհրդային միության կազմում (նկ.1): 1915թ. նրա տարածքի մեծ մասում հայերը նթարկվեցին նրիտ թուրքերի և քնալականների կազմակերպված նդեռնի (զոհվեց 1.5 մլն. մարդ) և կորցրեցին հայրենիքի մեծագույն մասը: Հայաստանն այսօր էլ մի միանական միավոր չի ներկայանում աշխարհի քաղաքական քաղտնզի վրա՝ բաժանված է Հայաստանի հանրապետության, Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի, Սիրիայի, Իրաքի և Վրաստանի միջև (նկ. 2):

XX դարի վերջում և XXI դարի սկզբում ԽՍՀՄ-ի փլուզմամբ պայմանավորված ազգային գաղթների հոր պայմաններում, ֆիզիկական աշխարհագրության տևսանկրունից ևս, կենսական անհրաժեշտություն է հայ ընթերցողին ներկայացնել իր ու ազգութապների ամբողջական հայրենիքը, նրա բնությունը, հարստությունները, հարազատ տեղանունները, սեր գաղգացնել այդ բնաշխարհի նկատմամբ և ննցունկ կանգնել Հայ Դատի հարցին: Ներկայացվող սույն ձեռնար-

կում գլխավոր ուշադրությունը դարձված է հայկական Լեռնաշխարհի բնական առևանանների և ֆիզիկաաշխարհագրական պայմանների բնութագրմանը: Մոկ-նարանված է նրա առանձնահատուկ կարգաբանական միավոր հանդիսանալը՝ Ալյա-Տիւալայան համակարգի Առաջավոր Ասիական լեռնային երկրներում՝ որ-պես լեռնային կղզի: Առաջին անգամ առանձնացված, հիմնավորված և բնութա-գրված են լեռնաշխարհի ներքին ֆիզիկաաշխարհագրական շրջանացման միա-վորները և բնատարածքային ազդեցիկ գոտիները: Ձևաբար շարադրելիս օգտվել ենք հայտատուի Աբգալին գրադարանում նդած հարուստ գրականությունից և ստորերև հեղինակների կողմից կազմված քարտեզներից, ինչպես նաև անձ-նական արշավախորտից և գիտարկումների նյութերից: Ձևաարկում զետեղված քարտեզները կազմված և ձևավորված են հնդիեակի կողմից: Որոշ քարտեզներում կատարված են հառնադատադիան փոփոխություններ և համալրումներ: Ազ-տագործված տեղանուններում ընտրիկ ենք հայկական (նախկին) անվանումը կամ վերականգնված ամենագործածականը, փակագծում նշելով շրջանառվող մյուս տարբերակները՝ նորոտակ ունենալով հնարավորինս փրկել մոտացման խաղարից անկայծող գրկու կորսված տեղանունները և դրանք նմրկայացնել հայկական Լեռնաշխարհին բնորոշ բնիկ տեղանուններով:



Նկ. 1 Հայկական լեռնաշխարհի դիրքը Թուսահմանները



Նկ. 2. Մերձավոր Արևմտյան թաղարքական թարսուղը
XX դ. վերջում և XXI դ. սկզբին

*Ինչ որ կա բնության մեջ՝ ըմբռնվում,
հասկացվում է միայն սահմանների մեջ
(ՀԵՊԵԼ)*

ԳԼՈՒԽ Ի

**1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Նախքան հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի նկարագրումը հսկող ներ համարում տալ լեռնաշխարհի բառի իմաստային, բառարանային բացատրությունը: Լեռնաշխարհ նշանակում է լեռների աշխարհ, լեռնային բարձրադիր նրկիր, սուղածք, սևիանք ցույց տվող իմաստ ունի: Այն բնութագրվում է լեռնաշղթաների, լեռնազանգվածների, սարահարթերի և նրբեմն հերթափոխվող լայն ու հարթ գոգավորությունների համադրմամբ, որոնք միասնորոն ունեն ծովի մակարդակից ընդհանուր բարձր տեղադրվածություն: Նկատված է, որ այս տերմինը (հասկացությունը) որոշ հնդհնավների կողմից դեռևս թյուրիմացաբար օգտագործվում է սխալ ըմբռնմամբ: «Լեռնաշխարհը» ֆիզիկաաշխարհագրական հասկացություն է և նույն իմաստը չունի ինչ «բնաշխարհ» կամ «բարձրավանդակ» հասկացությունը: Ընաշխարհը օգտագործվում է միայն նրկրային մակերևույթի ցամաքի ցանկացած բնույթ ունեցող տարածքների համար, իսկ բարձրավանդակ հասկացությունը՝ չունեն շատ ժողովուրդներ (բացարարությունը տես բառարանում):

Ինչպես գիտենք ֆիզիկական աշխարհագրությունը աշխարհագրություն գիտության մի ճյուղն է, որն զբաղվում է Երկրի մակերևույթի բնության, նրանում տնդի ունեցող գործընթացների ու նրնույթների, դրանց պատճառ-հետևանքային կապերի բացահայտման ուսումնասիրմամբ և կանխատեսմամբ:

Ուրեմն չպետք է շփոթել կամ սխալ գործածել հայկական լեռնաշխարհի հասկացությունը Հայաստան-Արմենիա-Հայոց աշխարհ, Պատմական Հայաստանի հասկացությունների փոխարեն: Դրանք միմյանցից որոշակիորեն տարբերվող հասկացություններ են: «Հայաստան» բառ – հասկացությունը օգտագործում ենք միայն հայերս՝ լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով հասկացվում է որպես պատմա-աշխարհագրական մի որոշակի տարածք, որտեղ ընթացել է հայ ժողովրդի ծագումը, ծնավորումը և զարգացումը: Նեղ իմաստով՝ հասկացվում է 1991թ. անկախություն հռչակած Հայաստանի հանրապետության տարածքը: Նույնպիսի իմաստով են հասկանում աշխարհի մյուս ժողովուրդները մեր նրկիրը անվանելով «Արմենիա», իսկ սուսուլմանական ժողովուրդները՝ «Էրմենիստան»-«Արմանստան»: Բացառություն են կազմում մեր հյուսիսային հարևան վրացի-

ներք, որոնք մեր երկիրը անվանում են «Մուխլթիա»: Այսպես, «Հայաստան» - «Արմենիա» - «Հայոց աշխարհ» հասկացությունը պատմաաշխարհագրական (ազգագրական) հասկացություն է, քաղաքական իմաստ ունի նաև որոշակի սահմանափակումներով, տարբեր սահմաններ ունեցող պետություն է և պետականություն բնութագրող իմաստ ունի, պատմագիտական հասկացություն է:

Հայոց աշխարհի տեղադիրքի մասին ամենահնագույն գրավոր տեղեկություններ հիշատակվում են շումերների և խեթների մոտ (Արատտա, Արմանի, Հայասա, Ազգի - III հազ. մ.թ.ա.), իսկ նրա զբաղեցրած տարածքի ու սահմանների նկարագրության մասին՝ հունա-հռոմեական պատմաբանների և աշխարհագետների մոտ (Միլևացի, Ստրաբոն, Պտղոմեոս, Պլինիոս Ավագ, Էստրոֆոն և ուրիշներ): «Հայկական լեռնաշխարհ» հասկացությունը գիտական բնույթի աշխատություններում սկսել է գործածվել XIX դարի նրբկրորդ կեսից (Ղ. Ինժիճյան, Հ. Աբիխ, Է. Ջյուս, Ղ.Ալիշան, Կ. Ռիտտեր և ուրիշներ):

Հայկական լեռնաշխարհի որպես ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական «մարզ» միավոր առանձնացման խնդիր ուսումնասիրող տարբեր հեղինակների մոտ սահմանագծված է տարբեր կերպ և կրում է ամենատարբեր անվանումներ (տես. Տավրնիև, Մ.Վազնիր, Հ.Լինչ, Մ.Ղուկասով, Հ.Աբիխ, Ս.Բալյան, Լ.Ջոնարթյան, Խ.Նազարյան, Հ.Գաբրիելյան, Ս.Երեմյան, Թ.Հակոբյան, Ա.Ոսկանյան և ուրիշներ):

Այժմ Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը ներկայացնում ենք ըստ ֆիզիկաաշխարհագրական համալիր մեթոդի և մաթեմատիկական մոդելավորման մեթոդների համադրմամբ ստացված մեր դիտարկման արդյունքների տվյալներով (տես. 55, 56): Հայկական լեռնաշխարհը գտնվում է նրկապնդի հյուսիսային կիսագնդի միջին լայնություններում: Այն տեղադրված է Փոքր Ասիա թերակղզու արևելքից մինչև կասպից ծովը և կոլխիդայի ու կուր-Արաքսյան գածրավայրերից մինչև Միջագետքի դաշտավայրը ձգվող տարածքում: Նրա ծայրակետերի աշխարհագրական կոորդինատներն են հյուսիսում՝ հյուսիսային լայնության 35°40' և 42°10', իսկ արևմուտքում՝ արևելյան նրկայնության 35°48' և 49°56': Լեռնաշխարհի տարածքը պատկանում է Սև, Միջերկրական և կասպից ծովերի ու Պարսից ծոցի ավազաններին և ամբողջությամբ տեղադրված է մերձայնուադարձային գոտում: Միջերկրական ծովից հեռու է 100 կմ, Պարսից ծոցից 650 կմ: Հայկական լեռնաշխարհը Արևմտյան Ասիայի լեռնային նրկրների առաջավորասիական իրեր լեռնաշխարհներից մեկն է և հանդիսանում է այդ շրջայի կենտրոնական կապող օղակը: Գտնվելով արևմուտքում՝ Փորասիական, իսկ արևելքում՝ Իրանական լեռնաշխարհների միջև: Լեռնաշխարհի առանձնապես հարաբերակից տարածքներից հիմնավորվում է նաև՝ ֆիզիկաաշխարհագրագումբ հարաբերակից տարածքներից հիմնավորվում է նաև՝ նրկաբանական զարգացման բնորոշ կան բնութագրիչների հատկանիշների և՛ նրկաբանական զարգացման բնորոշ առանձնահատկություններով: Դրանց մասին նշվում է համապատասխան գլուխ-

ներում: Վերոնշյալ մեթոդների մոտեցմանը կատարված է այդ լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական ներքին շրջանացումը:

Հայկական լեռնաշխարհի բնականից կզբաժանված է ծայրաբնկորավոր լեռնաշրջաններով և հարակից տարածքների նկատմամբ բարձրադիրք է: Այս ընդհանրագծված ձևակերպումը կատարել են տարածքը ուսումնասիրած նշանավոր շատ գիտնականներ: Սակայն նրանց սահմանագծումներից ոչ մեկինը լիարժեքորեն չի համապատասխանում բուն լեռնաշխարհի հավանության ֆիզիկաաշխարհագրական դիրքին և բովանդակությանը: Ուսումնասիրողներից յուրաքանչյուրը լեռնաշխարհի դիտարկել է ստորքեր մտնելով մեկուկ: Արդյունքում ստացվել է էականորեն իրարից տարբեր տարածքներ ընդգրկող, մոտավոր պատկերագծված մի շրջան, որի միայն կենտրոնական մասն է համապատասխանում իրական ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական այդ միավորին: Որոշ հեղինակներ էլ նրա տարբեր կողմերից որոշ մասերը կտրել-մտցրել են հարևան միավորների մեջ: Այլ աշխատություններում նկատվում է այդ տարածքի բազմաթիվ տեղափոխումների ոչ ճիշտ պատկերում: XIX դարում Ռուսական կայսրությանն անցած Անդրկովկասյան տարածքների քարտեզներում տեղագրական անունների զգալի մասը նշված են թուրքական անվանումներով կամ աղավաղված տառադարձությամբ կամ շատ դժգոհությամբ ոչ ճիշտ թարգմանությամբ, առանց հաշվի առնելու հայկական պատմական անվանումները: Այդօրինակ անվանումների շփոթը դեռևս շարունակվում է մինչև մեր օրերը: XX դարի սկզբում Անդրկովկասյան խորհրդային հանրապետություններում բուռն թափով սկսվում են ծավալվել տարածքների աշխարհագրական ուսումնասիրությունները: Ստեղծվում են գիտությունների ակադեմիաներ, դրանց կազմում՝ ինստիտուտներ և սեկտորներ, որոնք զբաղվում էին գիտական խոր ուսումնասիրությամբ և քարտեզահանմամբ: Կազմակերպվում են բազմաթիվ գիտաբաժանումներ, կատարվում է բնատարածքային հանույթ և տարածքի շրջանացում:

Խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում լույս են տեսել Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ գիտական բազմաթիվ մենագրություններ և ծավալուն աշխատություններ: Հայկական լեռնաշխարհը առանձին չի ուսումնասիրվել, այլ կատարվել է միայն թուրքական և իրանական տարածքների ֆոնի վրա կամ այրածքով է ոչ անմիջաբար այդ նպատակով, ինչպես նաև ծառայել է որպես որևէ գրքի նախաբան: Լեռնաշխարհի և նրա առանձին հատվածների վերաբերյալ Միլիթարյան Միաբանությունում և Սփյուռքի տարբեր նրկրներում հրատարակվել են բազմաթիվ գրքեր, առլատներ, բառարաններ: Դրանք հայրենասիրական պաթոսով գրված, կազմված, պատմահայրենասիրական և նկարագրական բնույթի են, որոնց գիտական կոզմը զգալիորեն գիջում է:

2. ՀԱՅԿԿԱՆ ԼԵՌՆԱՎՈՒՄԻ ՍԱՀՈՒՆԻՐԸ

Հայկական լեռնաշխարհի սրված ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական ուրույն միավոր, նրա սահմանների խնդիրը ուսումնասիրած հեղինակների մոտ այն պատկերված է տարբեր կերպ ևս ներկայացված է բավական անորոշ ձևակերպումներով: Այսպես օրինակ, Տ. Աբիխը այն անվանում է Անտիկոմկաս, որի մեջ ներառելով մե կոլիեիդայի և կուր-Արաքսի դաշտավայրերը, հարավում սահմանազատվում է Միջագետքի դաշտավայրից, արևմուտքում՝ Անատոլիան է, արևելքում՝ Իրանական սարահարթը [71]: Նշանավոր շատ գիտնականներ տարածքն ուսումնասիրելիս անտեսել են լեռնաշխարհի հասկացության ֆիզիկաաշխարհագրական բուն իմաստը և այն դիտարկել են յուրաքանչյուրն իր մասնագիտական ըմբռնմամբ (ներկայաբանություն, գեոմորֆոլոգիա, լեռնագրություն, կլիմա, պոտոլոգիան): Ֆիզիկաաշխարհագրական համալիր ստեղծում է նկատվում միայն 1980-ական թվականներից սկսած որոշ հետազոտողների կողմից (Ն.Կ.Գաբրիելյան, Ն.Ե.Նազարյան): Սակայն նրանց մոտ նույնպես բացակայում է Լեռնաշխարհի տեղադիրքի աբսոլյտ հատվածներում բաղադրիչներից որևէ մեկի կամ մյուսի հատկությունը, խախտված է ուսումնասիրողի կողմից ընտրված սկզբունքը: Ընդ որում, այդպիսի խախտումները խիստ աչքի են ընկնում ծառայակազմի այն տեղամասերում, ուր չկան բնատարածքային սահմանազատման առանձնակի բարդություններ:

Ֆիզիկաաշխարհագրական ցանկացած օբյեկտի համար սահմանագծման խնդիրը ունի գիտական խիստ կարևորություն: Հայտնի է, որ ամեն մի գիտական աշխատանք սկսում է որոշակի սահմաններում և ավարտվում նոր, ճշտված սահմաններով, քարտեզով: Խնդրի էությունը վերաբերում է ուսումնասիրվող օբյեկտի և հարևան ֆիզիկաաշխարհագրական մյուս միավորների աղտաքին սահմանների հետ ունեցած բնականոն փոխհամապատասխանելիությանը: Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական սահմանագծման այդ կարևոր խնդրին անհրաժեշտ խորությամբ ուշադրության չի դարձվել: Թերևս պետք է մասնավորապես նշել Յու. Լ. Եֆրեմովին, որը հաշվի է առել այդ խնդրի կարևորությունը [95], չնայած նրա մոտ կան այլ բնույթի սխալներ: Այդու ուսումնասիրողների մոտ այդ հանգամանքի անտեսումը հանգեցրել է ողջ տարածաշրջանի բնական միասնականության տարաբնույթ աղավաղումների: Ոմանց մոտ հայտնվում են այնպիսի բնատարածքներ, որոնք իրենց բնույթով չեն համապատասխանում կարգաբանական դասակարգվածությանը [71, 76, 88]: Կան նաև հեղինակներ, որոնք ընդունում են, որ Հայկական լեռնաշխարհի տարանջատող սահմանագիծը համեմատաբար դժվար է անցկացնել Փոքրասիական (Անատոլական) և Իրանական լեռնաշխարհների հետ կցման տեղամասերում: Կարծում ենք այդպիսի հետևությունը ոչ մանրակարկիտ ուսումնասիրման արդյունք է: Չնայած դրան, նրանց նկարագրություններում լեռնաշխարհի սահմանների խախտումներ կան նաև հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հարավային հատված-

ներում Այս լեռներ տիրապետում էր Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանը, ըստ Ա. Գ. Բուլյանի, Հ. Լ. Նոնրաբյանի և մի քանի այլոց [76, 97, 34], Բուրսիա լեռի հյուսիս արևելյան ծայրից անցնում է լեռի հարավ արևմտյան ծայրը (յճի մեկտեղով թե՛ արևմտյան կամ արևմտյան տվյալով, հայտնի չէ), սաքս կյորդվագ լեռների հարավով ու Տավրոսի հարավային տողորտներով հասնում է Լեփլաոս գետին (այսինքն սահմանագիծը կտրում է Արմենա լեռնաշղթան, ո՞րտեղով, հույսովն հայտնի չէ) ու Պազարչիկի գազավորությամբ, (ուշադրություն դարձրեք սահմանի անոթագրան անհատակությունը) Ըստ այդ սահմանագծան ստեղծվում է, որ Բուրսիա լեռ մի մասը մտնում է Հայկական լեռնաշխարհի մեջ, մյուս մասը Իրանականի Ավրիան, Բուրսիա լեռի հատվածի նշված սահմանը վերաբերում է Անո Հայքին (պատմական է)։

Հ.Կ Կարրիկյունը Հայկական լեռնաշխարհի մեջ ներառնելով Սարալան և Հարամդաղ (Առհուրյ) լեռնազանգվածները, սահմանի շարունակությունը անգլացնում է, «... Բուրսիա լեռի հարավային սեղաներով, սաքս կյորդվագ գետով ու Հինակ(ան) լեռնանցքով ու կյորդվագ լեռներով (ընդգծումներն մերն են) ձգվում է Տավրոսի հաջալային ստորջրտներով մինչև Լեփրատի այ վտակ Գյոկսուն [20]։ Ի նշագև կարող է սահմանն անգնել (անգլագնել) լեռներով, սահմանող հայտնի չէ թե՛ կյորդվագ լեռների ո՞ր մասով։ Եւ դա այն դեպքում, երբ կյորդվագ լեռներ հավաքական անվան տակ հասկացվում է իրականում տարբեր երկարությամբ և ուղղություններով ձգված բազմաթիվ լեռնաշղթաների ընդհանրությունը։ Գյոկսու վտակից հետո սահմանագծի շարունակությունում կան ավելի կոպիտ սխալներ, բայց բավարարվենք նշվածով։



Նկ. 3. Հայկական լեռնաշխարհի սահմանները

□ - ըստ Հ.Կ Կարրիկյանի, ■ - ըստ Գ.Թ Շիրինյանի

Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական սահմանագծի անցկացման սյուրեկտիվ մոտեցման մեկ այլ օրինակ նաև բերմնը, որն առնչվում է Ռուսիա լճի տեղամասի հետ: Խ.Ն.Նազարյանը [54] լեռնաշխարհի այդ հատվածում սահմանն անցկացնում է Ռուսիա լճային գոգավորության ջրավար ավազանի հարավային ջրբաժանով: Այստեղ կարծում են մասնակի սխալն այդ դեպքում Եսիբերդ լեռնաշխարհի հարավային լանջերը Հայկական լեռնաշխարհի մեջ չընդգրկելն է: Դրա պատճառով խախտվել է դիտարկվող օբյեկտի համալիր ամբողջականության գլխավոր հատկանիշի՝ սկզբունքային մոտեցումը (քարձրադիրությունը, ձևածապուսնային և ձևավառուցվածքային առանձնահատկությունները): Լեռնաշխարհի մյուս հատվածներում, հնդինակը ճիշտ է առաջնորդվում սահմանը անցկացնելով ցածրադիրքերով: Ռուսումասիերելով Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը վերաբերող հայերեն, շուսերեն և թարգմանական գիտական գրականությունը, պարզեցինք, որ այդ հնդինակների մոտ հիմնականում խախտված է օբյեկտի ֆիզիկաաշխարհագրական համալիր ամբողջականությունը: Սկզբունքային նշանակության այդ կարևոր խնդրի լուծման օբյեկտիվությունը ապահովելու նպատակով մեր հետազոտությունը կտառելի ենք Երկրի նոր գլոբալ (համասոցիալական) տեկտոնիկայի դրայթների համաձայն: Կիրառել ենք ֆիզիկաաշխարհագրական համալիր մեթոդի և մաթեմատիկական մոդելավորման մեթոդների գույակցում (մասրամասների մասին տես երառարակված հոդվածները [55, 56]): ԼՄթողը հնարավորություն է ընձեռում՝ 1) բացառել սյուրեկտիվ մոտեցումը սկզբունք ձևակերպելիս: 2) ճշտորեն որոշել ֆիզիկաաշխարհագրական համալիրի բաղադրիչներից յուրաքանչյուրի հատկանիշների ֆունկցիոնալ կախվածության ստորադասության աստիճանը՝ մոդելի ընդհանուր բազային ցանցում: 3) համակարգի միջոցով հաշվարկել այդ հատկանիշներից յուրաքանչյուրի դերի արժեքը (ցմեզը) բնատարածքի ցանկացած տեղամասի ձևավորման գործընթացում: Այդ զուգակցված մեթոդով ստացված խոշոր և միջին մասշտաբի քարտեզագրական ուրվագրերը, ըստ առանձին բաղադրիչների, համադրելով տիեզերական և օդալուսանկարային տարամաշտաբ ինֆորմացիայի հետ կատարել ենք ապաշիֆում: Այդպիսով ստացել ենք Հայկական լեռնաշխարհի արտաքին սահմանների վերջնապատկերային շերտաժառագմանը: Այն իրենից ներկայացնում է մի շերտագիծ, որը օբյեկտի տարբեր հատվածներում ունի փոփոխական լայնություն: Այդ շերտագիծը հիմնավորված է սահմանակից տարածքների ֆիզիկաաշխարհագրական բոլոր գործոնների գնահատված դերարժեքի տեսանկյունից: Այդպիսով ստացել ենք Հայկական լեռնաշխարհի արտաքին տարանջատող եզրաշերտը, որն իրենից ներկայացնում է հաշվարկային փոփոխվող լայնությամբ մի ժապավենագոտի, որի տարբեր հատվածներում փոխվում են բնատարածքը բնորոշող ձևածագումնաբանական, ծագումնաբանության և մթնոլորտի խոնավացման ցուցանիշները: Լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական առանձնացվածությունը հարակից

ապրաժնեցից, վերոնշյալ մկրտողների ընձևած հնարավորությունը՝ հիմնավորվում է այսուհետև հաշվի են առնված ու՝ ֆիզիկաաշխատհագրական թնտթագրիչների հատկանիշները ու՝ նրիթարանովան գարգացման ոլյայն առանձնատեղաթյունները: Այդ առանձնատեղաթյունների մասին նշվում է համարադասարան գրովներում: Նույն մտոնցմամբ է կատարված նաև Տայկավան լեռնաշխարհի ֆիզիկատաշխարհագրական ներքին շրջանագուրը (տևս Գլուխ 11):

Ոստ այդ վերջնագրակերպին սահմանաշերտի, Տայկական լեռնաշխարհի հարակից ֆիզիկաաշխարհագրական միավորներից առանձնանում է հետոնյալ սահմաններում: Տյուտխում այն սկսում է Եշիլլոյնակի գետաբերանից ու Սև ծովի հարավային ափով ձգվում է մինչև Ճորոխի գետաբերանը: Այնուհետև սկսած ծովի մակարդակից առաւ Մարքիկան (Մեւիների) լեռնաշղթայի ելուտիսային ստորտներով, առաիճանարաթ՝ 100-200 մ լայնության շերտով, բարձրանում է մինչև Սուրամի լեռնանցքը (910 մ): Սուրամի լեռնանցքից հետո սահմանաշերտը կտրուկ իջնում է կուր գետը ու որպես բնական սահման ընթանում է այդ գետով մինչև նրա աչ վտակ Աղստևի գետախառնուրդը: Տյուտխ-արննլքում՝ Աղստևի գետախառնուրդից անմիջապես հետո սահմանը շարունակվում է Փոքր կովկաս լեռնահամակարգի լեռնալանջերի ստորտներով՝ պահարանելով սկզբում ծ.մ.-ից 200, ապա 300 մ բարձրությամբ: Այդպես պահպանելով բարձրությունը սահմանաշերտը կուր-Արարայան դաշտավայրի արևմտյան եզրով շարունակվում է դնայի Արարս գետը (70-250 մ լայնությամբ), որից հետո ընթանում է Թալիշի լեռների արևելյան ստորտներով ու Լենթրան քաղաքի մոտ հալվում է կասպից ծովին:

Արևելքում լեռնաշխարհի սահմանը կասպիականի ծովափով ձգվում է մինչև Սևֆիդոույի գետաբերանը, հետո այդ գետափովով (90-60 մ լայնության շերտով) ձգվելով հասնում էզլլուզկն գետի ակունքը ու բարձրանում է Արմածին լեռնագագաթը (3173 մ): Այդ լեռնագագաթի մատույցներում սահմանաշերտունի 50-30 մ լայնություն: Տարաբովում սահմանը Ճարերը, Գուտակ և Զագրու լեռնաշղթաների լեռնահանգույցային Արմածին գագաթից իջնում է փոքր Ջարի հովիտ, ընթանում մինչև նրա արևմուտք ծնկադարձը, հետո այդ տեղից 80-160 մ լայնության շերտով շարունակվում է փոփոխելով սահմանաշերտի լայնությունը (110-200 մ) Չայկնիսար-Արչադ կուլիսածու ձգվող լեռնաշղթաների հարավային ստորտներով ծ.մ.-ից 500 մ բարձրություններով մինչև Տիգրիս գետը: Այնուհետև յղոված սահմանաշերտով (150-350 մ) ընթանալով Մարդինի, Վերանչևհիլի, Ուտայի (Ելնիս) սարահարթերի հարավային եզրամասերով (ծ.մ. 450-500մ բարձրությունով) Ելիրատի Բիրնիկ քաղաքի մոտ կտրում է Ելիրստը ու նրա աչ վտակ Սաջուր գետափովով (30-80մ լայնության շերտով) հասնում է Պագարջիկի գագավորություն: Արևմտյան սահմանաշերտը Պագարջիկի գագավորությունից շարունակվում է Մարաշի գագավորությունով, որանդ սահմանաշերտի լայնությունը չի անցնում 130մ-ից, հետո Ջահանի (Ջուհան) հովտով բարձրանում է Ալիստամի գագավորություն ու շրջանցելով Բիրնոդա և Թախուտասար գագաթ-

ներք (մինչև 100 մ շերտով) մտնում է Պապարվիրանի գոգիովիտ: Այդ տեղից մեկնելով լեռնաշղթայի ենձր (եհնձոր, եհնգր) գագաթի հարավային ստորտով (150-200 մ ժառագվեռով) շարունակվելով ձգվում է դեպի Կզրլլրմակ գետի Գեմնրնկի (Կամնարակի) գոգիովիտ ու Կզրլլրմակի հոսանքով վեր բարձրանալով հասնում է Ավազի գոգավորության արևմտյան եզրին: Ասոր այդ տեղից ընթանում է Չոչր վտակի ակունքառաս ու կտրելով Ակդատու և Եշիլլրմակ լեռնաշղթաների միացման լեռնանոցը՝ մտնում է Թոքրատի գոգավորություն: Այնուհետև լեռնաշխարհի արևմտյան սահմանաշերտը (50-80 մ և մինչև 120 մ լայնքով) Եշիլլրմակ գետահովտով ընթանում է մինչև Սև ծով (նկ. 1): Նշված սահմաններով ներփակված Հայկական լեռնաշխարհի բնականից եզրավորված է ծալքաբեկորավոր լեռնաշղթաներով և միածույլ ամբողջությամբ հարակից տարածքների նկատմամբ բարձրադիրք է: Այն Փորրասիական (Անատոլական) բարձրավանդակից բարձր է 500 մ, իսկ Իրանականից՝ 700 մ: Նրա միջին բարձրությունը ծովի մակարդակից 1850 մ է: Կազմված է Հայկական լեռնաշխարհի բարձրաշխարհային աղյուսակը և բարձրազրիական կորը (տես աղ. 1 և գծ. 1):

Հայկական լեռնաշխարհի բարձրաշխարհային աղյուսակը

Աղյուսակ 1

Բարձրության ինտերվալը (մետր)	Տարածքը (քառ.կմ)	Տարածքի տոկոսը (%)
0-100	4 600	0.898
100-200	6 800	1.32
200-500	13 000	2.53
500-1000	54 200	10.58
1000-1500	132 000	25.78
1500-2000	164 000	32.03
2000-2500	72 000	14.00
2500-3000	40 000	7.81
3000-3500	24 000	4.68
3500-4000	1 360	0.26
4000-4500	85	0.016
4500-5000	7	0.0013
5000-ից բարձր	2	0.0039
Գումարը	512 000	100


Հակակուսն լեռնաշխարհի և այնտեղ ապրած մարդկանց է փոյուցիոն գարգացման և քաղաքակրթության ընթացքի համառոտ պատմաաշխարհագրական նկարագիր ունի ժամանակագրական հետմյալ պատկերը:

20-րդ հազարամյակ (Հին քարի դար, Ազիլ) Վերի հվալինյան միջառոցապատում. Հրաբխականության ուժգնացում և լավային ժածկոյթների առաջացում: Հավառամքը՝ տոտևիզմ: Մայրիշխանության ծնւակորում: Չորս տարագուն մարդտեսակներից բաղկացած նախադատմական ցեղերը տնվմբ տնդտփոխվել են տարբեր աշխարհամասեր: Աֆրիկայից սեւամորթները թափանցել են Ասիա՝ շտղկապված ցամաքամասերով (Սինայի թըրակղզով և Բար-էլ-Մանդերի նեղուցի տեղով) (նկ. 5): Հազարամյակի կեսերին սկսում է ծնւակորվել արմնեղ մարդարանական տիպը, որոնց հիմնական գթաղմունքը հավաքչությունն էր և որսորդությունը (տնկ և նետ աղեղ):

10-րդ հազարամյակ (Միջին քարի դար, Տարդնեուազ): Նորկասպան կամ Հոլոցենյան հրաբխականություն: Ժամանակակից սառցապատում: Անաւտունների լստմյացում: Անցում նստակյացության: Հայտնվում են առաջին բնակավայրերը թայց հիմնականում շնակվում են քարանձակներում և քարձ կացարաններում: Այտովում են կրակից, բնտնյացքնլ են այժ և շուն: Խոթաամոանություն: Սյունուց լեռներում հայտնվում են առաջին ժայռաուտակները: Արևապաշտությունից որոշ տոհմերի աստիճանական անցումը լուսնաարաշտության: Բրտուագործությանը սկսվում է ցեղերի առաջացումը, ծնվում է նրկրագործությունը: Ընտկյացվում են ոչխարը, տավարը, ձին: Ձարգանում է խնկցգործությունը և մանամագործությունը: Հագարամյակի վերջում անցում գուգամտանության:

5-րդ հազարամյակ (Պղնձի դար): Հայտնվում են կագանկերպված բնակավայրեր: Լոսաւգաւրատման ժամանակաշրջան: Լեռնաշխարհի և հարակից տարածքների որոշ վայրերում հայտնվում են պղնձ գործիքներ: Քիչ ավելի ուշ վենը. ցլանդյուր կուգքեր: Ձնւակորվում են փոքր ընտանիք-համայնքներ: Ծաղկում են պղնձագործությունն ու արհեստները, որով սկզբնակորվում են գանգվածային տնկաշարժերը դնակի Փոքր Ասիա և Բալկաններ, Միջագետք՝ ոռոցման հմտությամբ (նկ. 6): Սկսվում է հնդմկրուպական մայր լեզվի տրոհումը, մշակույթի ու առաւելմների սփռումը: Ձարգացման է հասնում նրկրագործությունն ու անասնաւրախությունը: Արևի և կրակի պաշտամունքը դառնում է պաշտոնական:

4-րդ հազարամյակ (Բրոնզի դար): Հիմնվում են Ըննգավիթ, Մեմամոր, Սատանի դար և այլ բնակավայրերը: Յուրացվում է համաձուլվածքների ստացումը և արտային նրկրագործությունը: Լուսատունների պաշտամունքը աստիճանաւրար հանգնցում է աստղագիտության քարգավածմանը: Հաստատվում է հայրիշխանությունը նախակետական գնդաստանով և խոյի պաշտամունքով: Աստիճանաւրար կնքարաւորվում է արևի-խորթիների արիական էությունը և մշակույթը: Հայտնվում են կրուլեխներ, մենհիրներ, դամբարանաւորներ: Ստեղծվում է անիվը, քիչ ուշ մարտակառքերը: Ծաղկում են ապրում արհեստները, աւել-



Պղնձի արդյունաբերության շրջանները ————— աղանձի արտահանման ուղղությունները ————— արհագինների գանգվածային տնդաշարերը (ափսուսը)

Նկ. 6. Պղնձի արդյունաբերության շրջանները 8-5-րդ հազարամյակներում և արհագինների գանգվածային տնդաշարերը




Նկ. 7. Բրոնզեդարյան կազմակերպված բնակավայրերը և ստրկատիրական անտառայինները մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակում

տուրք և ներկրագործությունը: Ակտում են ձևավորվել լեզվաբնուստանիքները: Առեղծվում են առաջին ստրկատիրական պետությունները (Արստուտա, Շումերիա, Խեթիա, Միտանի): Չարագացած առևտրական փոխհարաբերությունները և պատերազմները ուղեկցվում են մշակութային փոխազդեցությամբ՝ խորրհարիական, շումերական, եգիպտական և սեմական: Հայկական լեռնաշխարհում հորինվում են պատկերագրերը (նկ. 7):


3-րդ հազարամյակ (Երկաթի դար): Ակսվում է Միջագետքի սեմականացումը և արքադական պետության հիմնումը (Մարգես): Լեռնաշխարհի ժողովրդի մոտ տարին սկսվում է նրկների ամենաարայծառ աստղ՝ Շաստողի ծագմանը (Միրիու): Վիշապաքարերը, շարժական կլոր օջախները ցույ-խոյ արձանիկները սփռված են ողջ նրկրով: Արքադական պետության պատմության մեջ հայտնվում է հարևան Արմանի պետության անունը, իսկ խեթների մոտ՝ Հայասա (նկ. 8):

2-րդ հազարամյակ: Հայկական լեռնաշխարհի հիմնական մասի տերերը հարի-խորիական ցեղերն էին՝ կամ նրանց կուզեր, արիացիները, որոնց հայրենիքը բարձրավաճում էր ևս իրենք էլ տարածվելով, ամենուր պետություններ էին հիմնում սփռելով գիտություն և մշակույթ: Մինչև հազարամյակի կեսերը Մերձավոր Արևելքը քաղաքական խմորման մեջ էր: Ասորեստանը նոր էր ձևավորվում, Էլամը դեռևս գոյություն չուներ, կային սեմական ցեղախմբեր միայն Չագրոսի մոտակայքում: Բաբելոնը վերակազմավորվում էր: Խեթերը միավորվելով պետության սահմանները հարավում հասցնում են Միջերկրափնի ափերը, իսկ արևելքում՝ Հայիս ցեղի (Կզղլըրմակ) ավազանը: Օգտվելով մ.թ.ա. 18-րդ դարի նպաստավոր քաղաքական պայմաններից լեռնաշխարհի հիքոսոս անվանումով ցեղերը արշավում են Եգիպտոս, իսկ արիացիները՝ անցնելով Իրանական բարձրավանդակը մտնում են Ինդոսի ավազան ու միաձուլվելով տեղաբնիկների հետ աստիճանաբար զբաղեցնում են Գանգեսի հովիտը: Հզորացող Ասորեստանը մ.թ.ա. 14-13-րդ դարերում վերջնականապես կործանում է Բաբելոնը, նվաճում Խուրի-Միտանիս և սկսում պատերազմել Հայկական լեռնաշխարհի Նաիրի նրկրի հետ: Մ.թ.ա. 11-րդ դարում արաբական անապատների քուշերը ցեղերը՝ արամնացիք քայքայում են Ասորեստանին և հիմնում են իրենց պետությունը՝ Ասորիքը (Նս.Միրիա) և ամբողջ Միջագետքը աստիճանաբար սեմականացնում են (նկ. 9):

1-ին հազարամյակ: Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից շրջաններում ապրող ժողովուրդների բազմաթիվ արձանագրություններ և հիշատակություններ են թողնել Նաիրի նրկրի, Ռուբարտու պետության, Վանի թագավորության, Արմենիա (Արմանի) նրկրի աշխարհագրական դիրքի, բնական պայմանների և այնտեղ ապրող ցեղախմբերի մասին: Մ.թ.ա. 8-7-րդ դարերում Իրանի հյուսիսում ստեղծվում է Մարաստանը, մ.թ.ա. 6-րդ դարում՝ Բաբելոնը:



Նկ. 8. Թաղարական կազմավորումները մ.թ.ա. III-II հազարամյակում



Նկ. 9. Արարատյան թագավորությունը մ.թ.ա. I-ին հազարամյակում

Մ.թ.ա. 6-րդ դարում Արմենիա անվանումը արդեն համընդհանուր ճանաչում ուներ: Դա երևում է հույն քարտեզագիր Հեկատոս Միլեթացու քարտեզի վրա, ուր Հայկական լեռնաշխարհի տեղում գրված է «Արմենիա» (նկ. 10): Նույնպիսի նշում է արված մ.թ.ա. 5-րդ դարի բաբելյական քարտեզում, որտեղ ընդամենը ութ երկրների թվում հիմնորոգը Արմենիան է: Մ.թ.ա. 4-րդ դարում Հայկական լեռնաշխարհում ձևավորվում է Երվանդունիների թագավորությունը: Հզորանում է Հունաստանը, հենա Հռոմը:



Նկ. 10. Հայաստանը մ.թ.ա. VI դ. ըստ Հ.Միլեթացու քարտեզի

Պատմաաշխարհագրական ենտաքրքիր նկարագրություններ կան հույն պատմագիր Բսինոֆոնի «Անաբասիս» գրքում՝ Հայաստանի տարածքի բնության, բնակիչների կենցաղի և այլ հարցերի մասին: Մ.թ.ա. 3-րդ դարում Արմենիան բազմիցս հիշատակվում է Էրատոսթենեսի աշխատություններում: Հեյլենական երկր դարյա ժամանակաշրջանում (մ.թ.ա. 4-1 դդ.) Հայաստանի աշխարհագրական ուսումնասիրման գործում մեծ ավանդ են ներդրել Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Պլուտարքոսը, Պտղոմեոսը և ուրիշներ: Արտաշեսյան հարստության արքա Տիգրան Մեծը թոթափելով հունա-հռոմեական լուծը Հայաստանը ընդլայնում է մինչև Կիլիկիա և Կասպից ծով: Հնտագա մի քանի դարերի ընթացքում Հայաստանը բազմիցս կռվախնձոր է դարձել ու բաժանվել է Բյուզանդիայի, Հռոմի և Պարսկաստանի միջև:

1 սվական: Բրիտանի ծնունդը: 301թ -ին Հայտատանում քրիստոնեությունը ընդունվում է որպես պետական կրոն:Այդ ժամանակնկյում առանձնապես աչքի ընկնող աշխարհագրական ուսումնասիրություններ չկան ընդհուպ մ.թ. 5-րդ դարը: 5-րդ դարում հայոց Վրահապուռի արքայի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի գոտտով արագ թափով զարգանում է մշակույթը: Խաչոյ մտածողները և՛ արամիյները (Խորենացի, Կոլոյն, Բյուզանդ, Եղիշե, Ագանթանգեղոս, Փարպեցի, Անհաղթ, Շիրակացի, Ալ. Երկրաչափ, Մտ. Սյունեցի) ասելովում են բարձրարժեք աշխատություններ, որոնցում հանգամանորմն տրված են Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ աշխարհագրական գաղափարներ: Այսպես, Մ.Խորենացին հանգեց վերինթագ գոտիականության գոյությանը և՛ առանձնացրել է բնակլիմայական չորս գոտիներ՝ ցածրադիր, անտառային, միջին բարձրության լեռնային և բարձր լեռնային: Նշված մյուս հեղինակների մոտ հավաքական առումով կան ՄՆձ և Փոքր Հայքների մասին որոշ նկարագրություններ դրանց բնության և տեղադիրքի վերաբերյալ: ԱՇխրակացին ստեղծեց «Աշխարհագրացոյ», որը միջնադարյան աշխարհագրության գլուխգործոցն ասույս է 16 քարտեզներից բաղկացած: Դրան կցվել է Ալ. Երկրաչափի «Մյունաչափք» քարտեզը: Հայկական համալսարաններում և՛ վաերերում դասավանդվել է աշխարհագրություն:

7-9-րդ դարերի արաբական արշավանքներից առաջ հայոց աշխարհի ուսումնասիրությանն են վերաբերում Յակոբոսի և Իսմայիլ Արու Ֆեդայի աշխատությունները: 11-րդ դարում մտնողական և՛ հետո թուրք-անլյկական նվաճումների ժամանակաշրջանում թուրքական որոշ հեղինակների նկարագրությունները խիստ մակերևային էին (Փնլեմի, Բաթթիր և՛ այլք): Այդ դարում հայ ականավոր մանկավարժ և՛ խոչոր մտավորական Գր. Մագիստրոսի կողմից ստեղծվել է հայ դպրոցներում դասավանդվող առարկաների ծրագիր, որում հաստատուն տեղ է գրադեցրել աշխարհագրությունը: 13-17-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի աշխարհագրության զարգացման ասպերեզում իրենց համնետ ներդրումն են ունեցել հայ և՛ օտարազգի գործիչներ, ճանապարհորդներ և՛ ականավոր մտավորականներ (Ն. Լամբրոննցի, Մ. Երզնկացի, Կ. Բաղիշեցի, Գր. Կնսարացի, Հ.Անկյուրացի, Հ. Կլարնցի, Ավ. Տիգրանակերտցի, Ու. Ռուբրոկվիս, Մարկոպոլո, Ռ. Գոնգալես, Կ. Չննոն, Ջ. Բարբարոնի, Աֆ. Նիկիտին և՛ այլոց աշխատությունները):

1512թ.-ից սկսած տուգրությունը Հայաստանից դուրս, իսկ 1711թ.-ից՝ Էջմիածնում, մեծ խթան հանդիսացան աշխարհագրության մտքի տարածման և՛ զարգացման գործում: Գլխական լուրջ ներդրում էր.1695թ.-ին Ամստերդամում վանանդեցիների հրատարակած «Համարտարած աշխարհագոյց» կիսագնդերի քարտեզը: 18-20-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի աշխարհագրության ուսումնասիրման գործում խիստ նշանակալի ավանդ են ունեցել Մխիթարյան Միաբանության բազմաբերդուն գործիչներ Ղ. Ինժեռյան, Ս. Աղոնցը, Ղ. Ալիշանը,

Ա Չամչյանը ևս ուրիշներ: Նրանց կողմից առաջին անգամ հիմք է դրվել Հայկական լեռնաշխարհի գիտական ուսումնասիրությունը: Ջգալխյանն մեծանուն է հետաքրքրությունը Հայաստան աշխարհի նկատմամբ նվիրաբաշխան և բուսական հետազոտողների կողմից: Դրվասանքի ևն արժանի բարևիսիոճ գիտնականներ Տավերնին, Տարնեփոր, Գ Անվիլը, Մին Մարդներ, Գ Մոսպյուն, Մ. Բիններ, Գրանդը, Տամիլյունը, Մ. Վագները և ուրիշներ: 19-րդ դարի I քառորդում Հայաստանի սրևեկյան մասը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ: Բուռն թափով սկսվեց նոր տարածքների բազմաստրատեգիական և տնտեսական յուրացման նպատակներով հետազոտումը: Մեծավիճին կլիմայի, հողերի, բուսականության, բնյկրի, քրերի մասնագիտական և երևույթների պատճառակալ կազերը բազանապատ ուսումնասիրություններ (Լաստորը, Վոնյիկով, Մոլոկոնով, Լ. Պայրոտ, Ռեյնգադը, ժուկովիկի, Գրոսեյսլ, Լեվիան-Լեանգ, Գոկույսով, Ձախարով, Ե. Մարկով և ուրիշներ): Այդ ժամանակների աշխարհագրական մարի գաղապամար մեծապես նպաստեցին Լազարյան (Մոսկվա), Սերսիյան (Եփիիս), Գեկորյան (Էջմիածին) և Լաբանները: 19-րդ դարի II կեսում հիմնաբար ուսումնասիրություններ ևն կատարել Հ. Արիխը, Հ. Լինչը, Լ. Օսիայը, Ա.Ղուկասովը, Կ. Ռիտտերը, Սիվերսը, Ռեկյուն, Մ.Քաթունին, Գ.Մերուպը և այլոր: 20-րդ դարի սկզբներին թուրքական կառավարության կողմից կազմակերպվեց իր պետության 1.5 միլիոն տնդարնիկ հայ բնակչության գնդապանությունը, որով Հայկական լեռնաշխարհի արևմտյան զգալի մասը գրկվեց հագարսիյա իր բնաշխարհիկ տարածքներից: Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1920թ. ին աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեցին Անդրկովկասյան նրքը հանրապետությունները, որտեղ հաստատվեցին խոյերդային կարգեր, իսկ մերձավոր Արևելքում նոր սահմաններ գծեցին Թուրքիան, Միքիան, Իրաքը, Իրանը և դրանք առ այսօր մնացել ևն համարյա անփոփոխ (նկ. 1):

Մերձավոր Արևելյան տարածաշրջանի աշխարհագրական ուսումնասիրության աստիճանով խորիլդային Անդրկովկասյան հսվածը ամննալավ ուսումնասիրված տարածքն է: Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ խորիլդային տարիներին յույս ևն տեևել սկազնմիական չորս ծավալուն գիտական աշխատություններ, կազմվել ևն ազգային և թմատիկ առլասներ, գրվել ևն մննագրություններ, բաաարաններ, ձևեարկներ, կատարվել ևն թազմարնոյթ հետազոտություններ: Հայկական լեռնաշխարհի առանձին հատվածների վերաբերյալ գրված թազմաթիվ աղլյուրներ ևն հրատարակվել նաև սփյուռքում: Ընդհանուր առմամբ դրանցում նկատվում է զգալաչին հետազոտությունների և ժամանակակից գիտական մակարդակով վերլուծությունների բացակայությունը: Այդ հանգամանքը բացատրվում է ՀՀ-ում գիտական հոլվածների պարբերական մամուլում բուսերն հրատարակվելու փաստով, որի պատճառով սփյուռքահայ հեղինակները հետաքրքրություն չեն ունեցել յախարնն օգտվելու գիտական և ննդ մասնագիտական գրական այդ աղլյուրներից, որպիսիք նրանց համար հաճախ

մնացել են անհայտ: Ճիշտ է, արտասահմանյան գիտնականների կողմից ուսումնառություններ կատարվել են Հայկական լեռնաշխարհի մի նրան հարակից տարածքների պնտություններում, սակայն դրանք կատարվել են տվյալ պնտության ընդհանուր ֆունի վրա: Հայկական լեռնաշխարհը որքան ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական «մարզ» միավոր առանձին չի ուսումնասիրվել: Այդ բացը լրացնելու նպատակով 2000թ.-ին հրատարակվել է ՀԳ-աբրիևյանի «Հայկական լեռնաշխարհ» ուսումնական ձեռնարկը, որտեղ ֆիզաշխարհագրական բաղադրիչները ներկայացված են ընդհանրության մեջ և տրված են դրանց գիտական վերլուծությունները: Սակայն այդ գովնի ձեռնարկում, այդուհանդերձ, ակնատու է նրկու կարևոր թնություն: Առաջին՝ Առաջավոր Ասիական տարածաշրջանում Հայկական լեռնաշխարհը ներկայացված է բնական ոչ ճիշտ սահմաններով, որով խախտված է ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական միավորի ծանալիք անբողջականությունը՝ դրանից բխող բոլոր հնտություններով: Երկրորդ՝ ձեռնարկում բացակայում է ֆիզիկաաշխարհագրական ներքին շրջանացումը: Այս թնությունների մասին նշված է էջ 14-ում:

Պ.ՈՒՒՆ 11

1. ԵՐԿՐԵՐԱՆԱԿԱՆ ՉԱՐՎԱՅԻՆ ՊԱՏՄԻՔՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհի ներկայիս նրկարանական կառուցվածքը այն հիմքն է, որ սկսվել է ձևավորվել դեռևս վերին պրոտերոզոյան դարաշրջանում (մինչ քննք ?): Մակերևույթին մերկացած ամենաինչև ապարները, որոնք ելուստներով հանդես են գալիս Սուրառի լեռներում, Լոքի գանգվածում, Ծաղկունյաց լեռներում, Հախում գետի ակունքում, Հայկական Տավրոսում և Արդա-հաճում, ունեն շուրջ 600 մլն. տարվա հասակ: Արարտայան դաշտում դրանք հայտնաբերվել են 500 մ խորությունում (Փարաբար) և փոխակերպված թերթա-քարային նույն կազմն ու հասակն ունեն ինչ Մեծ կոպկասի կենտրոնական քյուրեկային հատվածի ապարները [Ա.Ալանյան]: Ստորին պալեոզոյում (քննք, օրվոլիզ, սիլուր) լեռնաշխարհի հարավային եզրամասում՝ Միջագետքի ծայրա-մասային իջվածքում կոտակվել են ծանծաղ ծովային նստվածքները: Միջին պալեոզոյից սկսած (D,C,P) մինչև չորրորդական ժամանակաշրջանը ներառյալ կան նրկարանական բոլոր հասակների նստվածքները: Դրանցից առավել մեծ տարածում ունեն յուրայի, կամօհի, պալեոգենի և նեոգենի ծովային, երաբխա-նստվածքային, երաբխային և լծագնտային նստվածքները: Որոշ նրկաբանների կողմից սրպես վարկած ննթադրվում է, որ վաղ պալեոզոյի սկզբում, իսկ օրիշների կարծիքով մեզոզոյում, Երկրի վրա գոյություն է ունեցել նրկու մայրցամաք՝ հյուսիսային կիսագնդում Լավրասիան, հարավայինում՝ Գոնդվանան, իսկ դրանց միջև տարածվել է Թեոխ օվկիանոսը: Հետագայում, տեկտոնական գործընթաց-ների շնորհիվ Գոնդվանան մասնատվել է առանձին բեկորների, որոնք տեղաշարժվել են տարբեր կողմեր: Այդ բեկորներից Արաբականը և Հնդկականը տարե-կան 2-3սմ արագությամբ տեղաշարժվելով հյուսիս բախվել են Լավրասիային՝ ստեղծելով բախման գոտի (կոլիզիոն գոտի): Այդ գոտում Հայկական լեռնաշխար-հը կազմող ենթասայնը նույնպես տեղաշարժվել են և ենթարկվելով կոտրատ-ման տարածվել են հովհարածնի դճախի հյուսիս արևմուտք և հյուսիս արևելք՝ առաջացնելով թեփուկային կառուցվածքներ: Ստորին պալեոզոյան հասակի ծանծաղ ծովային նստվածքները հետագա հողմահարումից պահպանվել են Ադանիքում, Հայոց Միջագետքում, կորզվաց լեռներում (Միխորական և Դասն գավառներ) կուլիսածնի տարածվող բեկորների վրա [Ա.Վեհանի]: Միջին և վերին պալեոզոյի պալեոթեոխ օվկիանոսի ծանծաղ ծովային նստվածքները ավելի լայն առածում ունեն և մեծ հզորության են հասնում Արառաքի բեկորում, Բալախատում, Բաղնշում (P=500-3000 մ) և ավելի հյուսիս արևելք՝ Արտագ-Նախիջևնան-Շարքո-Ուրծ գոնայում, որտեղ կարբոնատային նստվածքների հզորությունը հասնում է 800-1400 մ: Այդ գծից հյուսիս ծալքավոր գոտին ծովային նստվածքներ չի պարունակում և փաստորեն եամարվում է պալեոթեոխյան

օվկիանոսի հյուսիսային սահմանը և հանդիսանում է 1000 կմ ձգվող Երզնկա-Սևան օֆիալիտային գոտին՝ այդ համալիրին թնորոշ բոլոր բաղադրիչներով: Մակայն Փոքր Կավկասի շերտագրական համալիրի հետ դրանց ֆորմացիաների և շերտագրական ոչ լրիվ համընկնումը Ձիբուլի ու հյուսի թթու ապարների նյքերը վկայում են, որ սրվեղոդյի վերջում Հայկական լեռնաշխարհի ՄՖժ Կովկասից բաժանվում էր ցամաքային նեղ շերտով, իսկ նրա հարավային լանջերին կուտակվում են մի քանի կմ հաստության հրաբխածին և մասամբ ցամաքային նստվածքներ: Այդ պարագան ինքնին վկայում է, որ նույնիսկ միջին մեզոթեոսիայան օվկիանոսում տարածաշրջանը հանդիսացել է կողադեղային մարզ:

Հայկական լեռնաշխարհում վերին սրվեղոդյում տևող ունեցած հնրցինյան լեռնակազմության գործընթացները ավարտվել են տրիասի վերջում: Դրա շնորհիվ տարածաշրջանը վերածվել է պալեոֆորմացիան համալիրի: Այդ հանգամանքի պատճառով տրիասի ծովային նստվածքները ունեն սահմանափակ տարածում: Մեզոզոյան դարաշրջանում (Մ, Յ, Կ) թևտիսյան ծովը ձգվել է Միջագետքի հյուսիսի ծայրամասային իջվածքի սահմանով: Յուրայի հասակի ծովային նստվածքների հզորությունը արունուտրում հասնում է 1300 մ և նվազելով, Ուրմիայի ավազանում մոտենում է գոյին: Կավճում ծովի ներխուժումը կատարվել է հարավից և լեզվակներով (կիրճերով) հասել է Վան-Մուք ուղղությամբ ձգվող գոգավորությունները: Նստվածքները հիմնականում կավճի կարբոնատային կրաքարեր են 500-2000 մ հաստությամբ: Հետագայում ծովն առաջխաղացել է և ծածկել Արագածոտն-Գողթ ծայրավոր գոտին և ավելի հյուսիս տարածվելով ընդգրկել է ևսողտաց-Կարին-Գուգար-Սուր-Արգախ կրաքարային ապարներից կազմված ծայրավոր գոտին 500-2500 մ: Արևելքում և հյուսիս արևելքում մեզոթեոսիայան համալիրի ապարները աստիճանաբար թաղվում են կոյր-Արաքսյան գետահովտային ճկվածքների տակ, տեղ-տեղ հասնելով մինչև 10 կմ հաստության (Սահառուլիի գերխար կորստանցք): Եթե հաշվի առնենք կասպից ծովի Լենքորան-Ռեշտ հատվածում գրանիտային շերտի բացակայությունը, ապա համալիրի հզորությունը փոխակերպային հիմքի հետ միասին կազմում է 20-25 կմ:

Ալյան լեռնակազմությունը Հայկական լեռնաշխարհում արտահայտված է երկու ննթահամալիրով՝ 1. վաղալյան (կիմերյան) և 2. միջինալյան [Հ.Սարգսյան]: Վաղ ալյանը սկսվել է յուրայից և տևել է շուրջ 90 մլն. տարի, ողնկզվելով հրաբխային արտափսումներով, որի վկայությունները արտահայտված են նստվածքային ապարների հերթափոխությունները հրաբխային ծագման ապարներով (Ալավերդի, Արդն, Կալան, Գյումուշխանա ևն): Յուրայի ապարների վրա տեղադրված են կավճի նստվածքահրաբխածին տարտունակները, որոնք տարածված են լեռնաշխարհի ծայրավոր լեռնահունակայրերում (Պոնտոս, Փոքր Կովկաս, Հայկական Տավրոս, Ներքին Տավրոս, Ծախրլոդ): Միջին ալյան լեռնակազմական համալիրը ընդգրկում է վերին կավճի ու Լոցնի ապարաշերտերը: Դրանք ներկայացված են նստվածքային ապարների մեծ հզորությամբ


Բոլորիս հայտնի մթնոլորտի բաղադրությունը կազմող բնական գազախառնուրդներից բացի, տեխնածին աղտոտանքներով այնտեղ մուտք են գործում նաև զանազան գազեր և աէրազոլներ: Ահա այդպիսի մթնոլորտի առկա վիճակը համարվում է նրա աղտոտվածությունը: Բնության մեջ պնտք է մթնոլորտային տեղումները հեղուկ (անձրև, ցող) կամ պինդ, կոշտ (ձյուն, կարկուտ, եղյամ, ջննջառ) վիճակում շատ սաքորը լինելին, քանի որ ջրի գոլորչին լուծված նյութեր չի պարունակում, հետևաբար անձրևի քուրը թորած պնտք է լիներ: Իրականում մթնոլորտ արտաննտված արտադրական թափոնները եւ այլ փոշիներ ու աէրոզոլներ, ներքնոլորտի վերին շերտերում, գոլորչիների համար խտացման կենտրոններ են հանդիսանում: Արդյունքում, տնդումներից հետո մթնոլորտը մաքրվում է փաշուց ու այլ աղտնիություններից, օղը մաքրվում է, թափանցնիությունը մնծանում: Ուրեմն մթնոլորտային տեղումները նույնպես աղտոտված են այն աստիճան, որքան տվյալ վայրի օդն է աղտոտված: Սակայն պարզվում է, որ տվյալ վայրի մթնուլորտի աղտոտվածությունը վերջին ժամանակներս կապվում է համամթորակային աղտոտման հետ՝ պայմանավորված օդային զանգվածների տնդաշարերով: Ստացվում է, որ ջրի Մնծ շրջապտույտը ձնոք է բերում համաշխարհային մասշտաբներ: Իմացանք նաեւ, որ Հայկական լնեաշխարհ են թափանցում բարեխաեն, արեադարձային ևւ արկտիկական օդային զանգվածներ, որոնցով աղտոտվում է տեղանքի մթնոլորտը: Հայտնի է համեմատաբար ավելի աղտոտված մթնոլորտի առկայությունը փակ գոգավորություններում: Ընորհիվ լնեաշխարհի բարձրադիրքայանը ևւ ռնիեֆի բարդությամբ պայմանավորված, օդային զանգվածների ազդեցություն կրած փոփոխությունները զգալիորեն նվազեցնում են աղտոտվածության աստիճանը: Հայկական լնեաշխարհի մթնոլորտի համեմատաբար ավելի աղտոտվածություն ունեն Արարատյան դաշտը՝ կապված Երևանի, Արարատի արդյունաբերական ևւ տրանսպորտային մթնոլորտ արտաննտված թափոնների հետ: Նույնատիպ աղտոտվածություն ունեն նաեւ Թավրիզի, Կարնո, ևւ Դիարբեքրի դաշտերը: Այդտն մթնոլորտային ջրերի միներալացումը (հանքայնացումը) 100 մգ/լ-ից ավելի է: Մնացած վայրերում համեմատաբար մաքոր են ևւ 25-50 մգ/լ-ից չի անցնում: 2500 մ-ից բարձր լնեներում այդ ցուցանիշը զգալիորեն նվազում է: Մարդածին ազդակներով պայմանավորված, տվյալ վայրի ջերմության ու խոնավության փոխաբաբերությունն այնպիսին է, որ շատ շրջաններում սկսում են հայտնվել բնատարածքների վատբարացման (դեգրետացիա) երևույթներ: Այդ երևույթը գիտության մեջ հայտնի է «անապատացում» արվամբ (ՄԱԿ-ի բնորոշմամբ): Անապատացման հիմնախնդրով զբաղվում է UNEP կազմակերպությունը, որն առանձնացնում է հիմնախնդրով զբաղվում է 1. գերշոր (հիպերարիդ); 2. շոր (արիդ); 3. կիսաշոր (սուբարիդ); 4. կիսախոնավ (սուբխոնիդ): Վերջին երեք տիպերը արտահայտված

նն Հայկական լեռնաշխարհում, սակայն միայն տարվա տար կեսում: Չոր (արիւղ) նն Արարատյան, Նախիջնանի և Ուրմիայի գոգավորությունների ցածրադիր մասերը, որտեղ խոնավացման գործակիցը 0.2- 04 է: Կիսաչոր են Մալաթիայի, Մշո, Շիրակի, Սիսիանի, Շոռի, Ախաթի, Ուեռայի, Ջիզրնի գոգավորությունների 1500-1800 մ բարձրությունները (այդտեղ մթնոլորտի խոնավացման գործակիցը 0.4-0.6 է): 2000 մ-ից վեր՝ կիսախոնավ (սուբհումիդ) տարածքներն են, որտեղ խոնավացման գործակիցը 0.6-0.8 է: Մնացած մասերում խոնավացման գործակիցը մեծ է 1.0-ից և անապատացման վտանգ ընդհանրապես չկա (տես քարտեզ 5):

Հայկական լեռնաշխարհի կլիմայի հիմնական տիպերը³

Աղյուսակ 2

N	Կլիմայի հիմնական տիպերը	Բարձր. ծ.մ.-ից (մետր)	Օդի միջին ցերմ.		Մթնոլորտային տեղումների միջին քանակը (մմ)	Մթնոլորտային տեղումների տեսակը
			ամառ (VI)	ձմեռ (I)		
1	խոնավ մերձարևադարձային	0-500	+23°	-2°	1000-3000	անձրև
2	Չոր մերձարևադարձային	200-700	+25°	-8°	300-500	անձրև, ձյուն
3	Չոր գամաքային (ցուրտ ձմեռ, շոգ ամառ)	700-1200	+31°	-20°	200-300	անձրև, ձյուն
4	Բարնխառն - տաք (մեղմ ձմեռ, շոգ ամառ)	600-900	+26°	-7°	350-400	անձրև, ձյուն
5	Բարնխառն-տաք (մեղմ ամառ, ցուրտ ձմեռ)	1500-2000	+20°	-22°	400-600	ձյուն, անձրև
6	Բարնխառն-ցուրտ (զով ամառ, ցուրտ ձմեռ)	1600-2800	+12°	-26°	600-800	ձյուն, անձրև
7	Բարնխառն չափավոր (մեղմ ամառ, մեղմ ձմեռ)	950-1250	+18°	-12°	700-1200	ձյուն, անձրև
8	Լեռնատունդրային (խիստ ցուրտ ձմեռ, զով ամառ)	2800-ից բարձր	+10°	-30°	800-1000	ձյուն

³ Կլիմայի հիմնական տիպերի քարտեզը տրված է ենթդիրում (քարտեզ 5):

4. Հնագույն և ժամանակակից սառցապատումներ

Հնագույն սառցապատումները Երկրի վրա եղել են երկրաբանական վաղ անցավում, սակայն Հայկական լեռնաշխարհում վերին պլիոցենից մինչևն այժմ եղել է երկու սառցապատում, որոնց անժխտելի հետքերը լավ արտիպատված են. Առաջինը համապատասխանում է միջին չորրորդալեռնի սելյան սառցապատման շրջան փուլին: Այն եղել է հզոր, հովիտներից բարձրացել է ցրտածանների վրա (սկանդինավյան տիպի): Ձյան գիծը իջել է 2800-2500 մ բարձրությունները: Վերջին սառցապատումը տևող է ունեցել վերին չորրորդալեռնում (հոլոցենում) և հանապատասխանում է սելյան սառցապատման վտորմյան փուլին, որի նահանջը ավարտվել է 8-10 հազար տարի առաջ: Վտորմյան սառցապատումը կառահովտային է, եղել, այսինքն կառերում (կրկնաներում) գոյացած սառցադաշտից դեպի հովիտներն են շարժվել լեզվակները, որոնցում էլ տեղի է ունեցել սառցադաշտի հալը (արլայցիա): Հայոցբայբերը, շատ տեղերում փակված մնալով, վերջնամրենային թմբաշարերում գոյացրել են փոքր լճակներ: Հայկական լեռնաշխարհի սառցապատումների մասին ուսումնասիրությունները սկսվել են 19-րդ դարի վերջում: Պարզված է, որ մերձարևուդարձային գոտու երկրներում սառցադաշտեր կարող են առաջանալ միայն բարձր լեռներում (3000 մ-ից բարձր), որտեղ ձյան ավելցուկ կա, և ամռն տարի թափված ձյունը կուտակվելով վերածվում է սառցադաշտի, եթև ռելիեֆն ու փչող քամիները նվազեցնում են կամ չեն խանգարում: Լեռնային տարածաշրջանների համար գոյություն ունի ձյան կլիմայական սահման հասկացությունը, որից վեր առաջանում են սառցադաշտեր: Կանան ձյան լեռնագրական սահման, որից բարձր, հյուսիսաւսայաց կամ ստվերոտ լանջերում ձյունը պահպանվում է ամբողջ տարին (ֆիռնային դաշտ): Այդ ձևագիծը տարբեր լեռներում գտնվում է տարբեր բարձրությունների վրա: Հայկական լեռնաշխարհի լեռնագրական ձևագիծը Պոնտոսում սկսվում է 2600-2800 մ, Արագածում՝ 3200 մ, Տավրոսում՝ 3300 մ, Սարալանում՝ 3500մ, Արարատի հյուսիսային լանջին՝ 4250 մ, Հարավային լանջին՝ 4400 մ բարձրության վրա: Լեռնաշխարհում միջինացված ավայներով ֆիռնային դաշտեր կարող են գոյանալ 3300 մ-ից ավելի բարձրում, իսկ սառցադաշտեր՝ 4000-4200 մ-ից բարձր լեռնագագաձներում: Ամենամեծ սառցադաշտը գտնվում է Մեծ Արարատի գագաթին և գրադնցում է 25 քառ. կմ-ից ավելի մակերես: Ոչ մեծ սառցադաշտեր կան Բաքար, Արագած, Սարալան, Ջիլո, Սիփան, Չարսուպ լեռնագագաձներում: Լեռնային սառցադաշտերի աշխատանքային գործունեության ընթացքում ծնւաձորվում են ռելիեֆի նոր ձևեր՝ քայքայման-ծնւաձորման (կրկններ, տրոգներ, խոյի ճակատներ, սառցաքրորում) և տեղափոխման-կուտակման (սառցադաշտային լեզվակներ, սառցավեժքեր, մորեններ, մորենային թմբաշարեր, միջմորենային լճակներ): Սառցադաշտային կրկններ հանդիպում են գրեթե ամենուրեք՝ 3000 մ-ից բարձր լեռներում Դրանցից որևէ կողմի վրա տարածվող հովիտը, եթև

լայնական կորիսածրում տաշտակածն է կոչվում է սրոպ: Նրա հարթ ու լայն հատակով ցած է սահում կամ սահել է սառցադաշտի լեզվակը, ուր վերջանում է մորենային կատակումներով: Դրանից էլ ցած, սառցադաշտային լեզվակի կամ կրկնի սառցադաշտի հալոցքաբերից սնվող գետը մտնում է իր ձեփտաեռոնի մեջ կամ մխրվում նեղ կիրճի մեջ: Տանդիկում են նաև այնպիսի տրոգներ, որոնցում սառցալեզվակը հաղթահարում է բնական խոչնդուտը, գեղավիժում է կամ կոտորվելով թափվում ցած՝ առաջացնելով առցավձեռք, այնուհետև շարունակում իր առաջընթացը: Հայկական (լեռնաշխարհում հնագույն սառցապատման հետքեր պահպանվել են Դոնտոտում, Ճոթոի, Արսիանի լեռնաշղթաներում, Չավախքի բարձրավանդակի բարձր լեռներում, Բարձր Հայքի լեռնաշղթաներում, Բյուրակն, Արագած, Կերդվագ, Արմածին, Գնդամա և Վալդենիսի լեռներում, Սյունիքի բարձրավանդակի մի քանի գագաթներում: Մեծ Արարատի գագաթին այդպիսի ձևերը նկատվում են ձյան գծից ներքև, Մառվի, Մուռնի լեռնաշղթաների կատարային մասերում և կապուսպուղի մերձգագաթային մասում: Դրանց հետքերը լավ պահպանված են նաև Սոհունդի, Թունդրակի հրաբխազանգվածների կատարային գագաթում և ճիշտ նման են Արագածի սառցապատման հետքերին՝ շատավաճնե դասավորություն ունեն: Բավականին շատ կրկններ, տրոգներ և մորենների կոտակումներ կան Կոլոփաց լեռների մի քանի գագաթների (Մորաս, Ականիք, Ազարակ, Ջիդ, Այգառք, Հերսովիլ, Սամքի և այլ) և Արմածին, Գուտակ և Եսեբերդ լեռնաշղթաների կատարային գագաթում, իսկ մորենային կոտակումներ և ֆիռնային դաշտեր կան կլիմայական գծին մոտ: Այդտեղ, բարձրաբերձ գագաթների գագաթային լանջերին, սառցադաշտային ձևիների ձևերի մի զգալի մասը հողմնաեռարման ենթարկվելով ձևախախտվել են, քայքայվել արտաշայտված են հնագույն նրկու սառցաաբառումների անժխտելի վկայությունները: Լեռնաշխարհի ժամանակակից սառցաաբառման ամենահարավային օջախ կարելի է համարել Արմածին լեռնաշղթայի Չարսապ լեռնագագաթը (3612 մ), որի հին կրկնում այժմ էլ կա մի վարդ սառցադաշտ և բավականին հզոր՝ 4-6 մ հաստության, մոտ 300 քառ. մ մակերեսով ֆիռնադաշտ (թուրքեստանյան տիպ), նրկու տրոգ՝ 1.5 կմ երկարությամբ, որանց վերջնամորենների փոքրիկ լճակներից սնվում են Փոքր Չաքի և Արասիի վտակները (նկ. 20): Լեռնային սառցադաշտերի վիթխարի քանակության քաղցրահամ ջրի շտեմարտներ են: Դա մի հարզամանք է, որ շատ մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրվում է, քանի որ այլևադարձային և մերձարևադարձային երկրներում պարզապես տառապում են խմելու ջրի պակասից: Մաքուր միջոցներ է որոնում այդ պաշարները առավել նպատակային օգտագործելու համար:

ԳԼՈՒԽ V ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. **Ջրային հաշվեկշիռ** Հայկական լեռնաշխարհի ջրագրության գլխավոր աբանձնահատկությունը մթնոլորտային տեղումներից ստացած ջրի քանակի (մուտքի) և հոսքի ու գոլորշացման (նյքի) տարբերությունն է: Լեռնաշխարհի ջրային հաշվեկշիռ ստորև բերված աղյուսակում (տես աղ.) ներկայացված է յոթ գլխավոր շրջաններով, որոնցից վեցը հոսք ունեն նյա սահմաններից դուրս, իսկ մեկը անհոսք է՝ վան և Ուրախա լճաավազաններով: Ընդհանուր աբամբ Հայկական լեռնաշխարհում տարեկան թավփում է 650-670 մմ մթնոլորտային տեղումներ, որը կազմում է 237 կմ³, որից 138 կմ³ գոլորշանում է (55.7%): Գետների միջոցով հոսքը կազմում է 97կմ³ (41%), իսկ ստորգետնյա հոսքը լեռնաշխարհից դուրս ստացվում է մոտ 2-3կմ³ (այս թիվը կարիք է գգում ճշտման): Տնտնտության բոլոր բնագավառներում միացյալ օգտագործվում է շուրջ 6կմ³ ջուր, որի մեծ մասը գոլորշանում է (տես աղ. 3): Լեռնաշխարհի անհոսք (փակ) ավազանը զբաղեցնում է տարածքի 15,6%-ը, որը կազմում է մոտ 80 հազ քառ.կմ: Այդ փակ ավազանները միատին մթնոլորտից ստանում են մոտ 30կմ³ տեղումներ, որն ամբողջությամբ գոլորշիանում է:

Հայկական լեռնաշխարհի ջրային հաշվեկշիռը ընդհանրացված տնարով.

Աղյուսակ 3

Ջրային հաշվեկշիռի բաղադրիչները	Տարածքը (հազ կմ ²)	Ջրի քանակը		
		մմ	կմ ³	%
Մուտք				
1. Մթնոլորտային տեղումներ	512	650-670		100
2. Գոլորշիներ խտացում			232 5	237
Ելք				
1. Գոլորշացում հոսք ունեցող գամաթիս	430	373	103	43.4
2. Գոլորշացում լճային ավազաններից	80	452	29	12.3
3. Հոսք անտնողով	430	297	97	41.0
4. Ստորգետնյա հոսք լեռնաշխարհիս			1-2?	0.08
5. Տնտնտության մեջ օգտագործվող ջրեր			5-6	2.6
Գումարայինը՝	512	650-670	237	99.8

2. **Մտորգետնյա ջրերը:** Հայկական լեռնաշխարհի հստաբ Էալան նշանակություն ունեն ստորգետնյա ջրերը, որովհետև տարեկան թափված մթնոլորտային անոլումների մի զգալի մասը ներծծվում է ու հետո այլ տեղերում դուրս է գալիս աղբյուրների ձևով կամ սնում է մոտակա գետային կամ լճային ավազանին՝ հատկապես Միջնաշխարհում: Այդ երևույթը նախատավոր է դառնում հտոկուպն այն առումով, որ մեծ մասամբ լրացնում են լեռնաշխարհի համեմատաբար ցածր մթնոլորտային տեղումներ ունեցող շրջանների ջրի պակասը: Ստորգետնյա ջրերը երկրակեղևում բազմաթիվ ջրատար հորիզոններ կարող են առաջացնել: Այդ ջրատար շերտերից ամենավերինը, որ համարյա զուգահեռ է Երկրի մակերևույթին, կոչվում են գետնաջրեր: Մի քանի մետր խորք փորելով կարելի է հանդիպել այդ շերտի ջրին ու բազմաթիվ ջրհորներով այդ ջրերը հանելով օգտագործել: Գետնաջրային հորիզոնները առավել բնորոշ են հրաբխային շրջանների միջլեռնային գոգավորություններին, անկախ նրանց ծովի մակարդակից ունեցած բազալթակ բարձրությանը: Սակայն դա չի նշանակում, որ նման վայրերում ամենուր մի քանի մետր փորելով անպայման գետնաջրի կհանդիպեր: Այստեղ խիստ կարևորվում է տեղանքի երկրաբանական կառուցվածքը (ապարաշերտերի ուղղությունը, կազմը, հնրթադրվածությունը, հաստությունը), կլիմայական պայմանները: Օրինակ, Արարատյան, Մալաթիայի, Աշոցքի, Ուրմիայի եւ այլ գոգավորություններում կարող են հանդիպել այնպիսի տարածքներ, որտեղ գետնաջրերը շատ խորն են, բայց քիչ հնձվում են արավոր է աղբյուրի հանդիպել: Դա կախված է ապարաշերտերի դասավորվածությունից: Հայկական լեռնաշխարհում ստորգետնյա ջրերը շատ անհավասարաչափ են բաշխված: Դրանք առատորեն հանդիպում են հրաբխային կառուցվածք ունեցող շրջաններում, ավելի քիչ՝ ծայրաբևեկորավոր կառուցվածքի լեռնային շրջաններում: Դա բացատրվում է լավաների հտոկությամբ (ծակոտկենություն, սառնամանիքային ճեղքավածություն, որոնք մակերևութային հոսք չեն առաջացնում, թափված մթնոլորտային տեղումների զգալի մասը անմիջապես կլանում, ներծծում են): Գետնատակ ներթափանցած այդ ջրերը երկար ժամանակ՝ ամիսներ, նույնիսկ տարիներ, թափաճելուց հետո ապարակցման ճեղքերից կամ ջրամերձ շերտերից դուրս են գալիս մակերես՝ աղբյուրի ձևով: Հրաբխային տարածքներում այդպիսի աղբյուրները մեծ մասամբ ունենում են 1մ³/վրկ ծախս, որոնք լավաների տակ թաղված նախկին գետերի հունների ելքերն են: Եթե Հայկական լեռնաշխարհի հրաբխային բարձրավանդակներում լավային ծածկոցները չլինեին, ապա լեռնաշխարհի Միջնաշխարհը այնպես չորային կլիմեր ինչպես Իրանական, Արարական եւ Փոքրասիական սարահարթերը: Հրաբխային շրջանների ջրերը ունեն նու սնկ այլ առավելություն, դրանք համարվում են աշխարհի ամենապակագույն իմուռ ջրերը: Այդ ջրերի մեջ լուծված նյութերը քիչ են, հանքայնացումը մեկ լիտր ջրում կազմում է 100-200 մգ: Գրանիտային եւ այլ ներծայթուկային ապարակազմ ունեցող տարածքների աղբյուրների ջրերը նույնպես համարվում են լավորակ:

Նրանցում հանրայնացումը չի անցնում 350 մգ/լ –ից: Ծայրաքնկորավոր լճերի կրաքարա-մերգվային կազմի ապարներից ու ավազաքարներից դուրս եկող ջրերի հանրայնացումը մեծ է՝ 400-600 մգ/լ, եւ խմելու համար նպաստավոր չեն, համարվում են կոշտ ջրեր: Հայկական լեռնաշխարհի միջլեռնային ցածրադիր գոգավորություններում (Արարատյան, Բաւննի, Այաշկերտի, Շիրակի, Մալաթիայի, Դիարբեքի, Արգաթի, Միաննի, Վանի եւ այլ) ստորգետնյա ջրերը մտնելով նրկու ջրամերժ շերտերի արանքը գոյացնում են ճնշումնային ջրեր (արտեզյան ջրեր): Հանդիպում են նաեւ գոգավորության լճա-գետային ջրատար շերտերի մնջ մտած ճնշումնային ջրեր, որոնք առաջացնում են մի քանի հորիզոններ (Արարատյան, Ահարի, Ուրմիայի, Ջիզնի, Պազարջիկի, Բաւննի): Դրանց վերին հորիզոնների ջուրը քաղցրահամ է, ստորին հորիզոններինը՝ աղի: Արտեզյան ջրերի օգտագործման ուղղությամբ գործնական լուրջ աշխատանքներ են կատարվել Հայաստանի հանրապետությունում: Այժմ ստորգետնյա ջրերին մեծ ուշադրություն են դարձնում Թուրքիայում, Իրանում, Սիրիայում: Ստորգետնյա ջրերի խմբին են պատկանում հանրային եւ կուսական (յուվենի) ջրերը, որոնց մասին խուսվել է դեղների հարստությունները բաժնում: Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, որտեղ երկրակեղևում հանդիպում են կերակրաաղի, գիպսի եւ այլ աղերի շերտեր (Միանն, Ուրմիա, Մծքին, Ոռեա) այդտեղ մակերևույթ դուրս եկող ստորգետնյա ջրերը հազեցած լինելով լուծված աղերով, ուժեղ գալթրչիացման պայմաններում առաջացնում են աղուտներ, իսկ աղբյուրների ջուրը խմելու համար պիտանի չէ (Կողբ, Խնուս, Կաղզվան, Ահար, Սեւակերակ):


3. Գետերը Հայկական լեռնաշխարհի գետերը պատկանում են Սեւ, Կասպից, Միջերկրական ծովերի, Պարսից ծոցի եւ Վան, Ուրմիա եւ մի քանի այլ լճերի անհոսք ավազանների: Աղյուսակ 6-ից երևում է, որ Հայկական լեռնաշխարհում ամենամեծ տարածք զբաղեցնում է Պարսից ծոցի ավազանը, ապա Կասպից ծովի, հետո Սեւ ծովի, իսկ ամենափչը՝ Միջերկրական ծովի ավազանը: Ըստ գետային ավազանի մեծության ամենամեծ տարածք զբաղեցնում է Պարսից ծոցին պատկանող ավազանը: Այդ ավազանի հիմնական գետերն են Եփրատն ու Տիգրիսը (տեւս քարտեզ 6): Էփրատը Առաջավոր Ասիայի ամենաերկար գետն է 2700 կմ (673 հազ. քառ. կմ) մեկազանով, որից Հայկական լեռնաշխարհում 925 կմ (152,1 հազ. քառ. կմ) ավազանով, որի 40հազ քառ.կմ-ն ամենամեծ վտակի՝ Արածանիի ցրիավար ավազանն է: Եփրատը սկիզբ է առնում Ծաղկավետ լեռնաշղթայի Ոսկեանց (3914 մ) գագաթաից թևող աղբյուրներից: Մի քանի կմ անց մտնում է Կարնո դաշտ, առաջացնում ճահճաբար շամբուտներ, որից հետո անցնում է Դերջանի ու Երզնկայի գոգավորություններով, ապա Կարախի սարահարթի կիրճից դուրս գալով, ծնկադարձ շրջվելով հարավ, մտնում է Խարբերդի սարահարթ: Այստեղ ձախից նրան է միանում ամենամեծ վտակը՝ Արածանին: Հետո Եփրատը նորից է մտնում կիրճի մնջ (Կարպան /Զեբան/), որի ելքի մոտ համանուն ջրամբարի պատվարն է: Այդ արտավարի շնորհիվ նրկու գետերի

միացման տնդամատում առաջացել է մի հսկայական ծով-ջրամբար, որի բարձրացված ջրերի մակարդակը Արածանիով հասնում է մինչև Բալուխ գոգհովիտ: Մալաթիայի գոգավորությունից հետո Եփրատը կրկին ձնկադարձում է ու մխրճվում Տավրոս լեռնաշղթայի մեջ: Այստեղ, անտնցնղննտ այդ կիրճի խորությունը 1500 մ է, երկարությունը՝ 100 կմ, որտեղ գետը առաջացնում է բազմաթիվ ջրվճճներ ու քարվազներ (նկ. 23): Կիրճից դուրս գալով անցնում է ՄԱ + ավերակի (Սուեբեկ) ու Արածանուտրի (Աղյամանի) ասրա Ուռհայի, Այնթափի սարահարթերով, որտեղ մի քանի վտակ ընդունելուց հետո, նորից մտնում է ժայռոտ պատեր մեջ, կառաղի սղոցում հատակը ու փնչալով քախվում բնտոնն ամբարտակին՝ գայացնելով երկարածոված ու բարդ ճյուղավորված երկրորդ՝ Սամոսատի ջրամբարը: Դրանից հետո հոգնած գետի ջրերը, ու աչից ընդունելով Նիզիպ և Սաջուր վտակները, սահունորեն ու հեզանագ ընթացքով դուրս են գալիս կիրճից ու մտնում են Բնիջիկի դաշտ, որից հետո դուրս է գալիս Հայկական լեռնաշխարհի սահմաններից, անցնելով 1000 կմ-ից ավելի ճանապարհ: Եփրատը ունի խառը սնում: Մինչև կապանի ջրամբարը տարեկան ջրի ծախսը 350-400 մ³/վրկ. է, իսկ Արածանիին միանալուց հետո միջին ծախսը հասնում է 800 մ³/վրկ.: Գարնանային հալոցքի ժամանակ գետի ծախսը կազմում է 7000 մ³/վրկ., իսկ տարեկան հոսքը 28կմ³ է: Արածանի (Մուրատ) գետի երկարությունը 650 կմ է, տարեկան միջին ծախսը 400-450 մ³/վրկ., իսկ տարեկան հոսքը՝ 15կմ³: Ունի ճանաչմանային սնում, մառամբ նամու աղբյուրային: Հորդանում է գարնանը: Այդ ժամանակ ծախսը կազմում է 3000 մ³/վրկ., սակավաջուր է ամառն երկրորդ կեսին և՛ ձմեռանը: Ըստ տղմատար է, տարեկան տեղափոխում է 10-12 մլն տոննա տիղմ: Արածանին սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հյուսիսային լանջերից, որի ջրերին Դիադինի դաշտում խառնվում են Թոնդրակ հրաբխակոնի ֆումարոլային տաք ծծմբաաղբյուրների ջրերը (վարչակի ջերմուկներ): Աղբյուրներից անջատված աղերից առաջացած տրավերտինները այդտեղ առաջացրել են երկու բնական կամուրջ, որոնց տակով անցնում է Արածանին: Ալաշկերտի գոգավորությունում գետը ընդունում է բազմաթիվ վտակներ, ասրա կտրուկ շրջվում հարավ, անցնում Դութաղի, Մանազկերտի, Հարքի, Տարոնի (Մշո) հարթահատակ դաշտերը ու մտնում խոր կիրճ, որտեղ առաջացնում է Գրգուռ որոտածայն ջրվճճը: Կիրճից դուրս գալով անցնում է Ճաբաղջրի գոգավորությունով ու նորից արցանվում աաբաաժոտ կողմերում: Այդտեղից դուրս գալով մտնում է Բալուխ գոգհովիտ ու Եփրատին չհասած դառնում սահմոված, լայնաեռն ջրամբարագետ: Արածանին սուրբ գետ է համարվել. նրա ջրերում են լողացել հայոց հեթանոսության աստվածուհիներ Աստղիկն ու Անահիտը և այլ դիցուհիներ: 301թ. Նսրատ լեռան ստորոտում Գրիգոր Լուսավորիչը Արածանիի ջրերում մկրտել է Տրդատ թագավորին, նրա ընտանիքի անդամներին և զորքին:

Տիգրիսը Պարսից ծոցի ավազանի մյուս խոշոր գետն է և՛ Հայկական լեռնաշխարհի ամենաջրառատը: Տարեկան հոսքը կազմում է 16 կմ³: Սկիզբ է առ-

նում Մովս Երեմ, հայկական լեռնաշխարհի սահմաններում նրկարությունը 500 կմ է, ցիսիար ավազանը 52 հազ. քառ. կմ, իսկ միջին ծախսը 530 մ³/վրկ.: Լճից դուրս գալով անմիջապես կորում է հայկական հարթու լեռնաշղթան առաջացնելով անտեղեկներ: Կիրճ, ապա այցից և ծախից վտակներ ընդունելով մտնում է բնական թունկ ու դուրս է գալիս Տիգրանակերտի սարահարթ: Այստեղ մի քանի ոլորտներ ու քարվազներ առաջացնելով աստիճանաբար թաղվում է Դիարբեքի լճա-գետային նստվածքների մեջ ու կտրակ շրջվում արևելք: Դիարբեքի գոգավորությունում ընդունում բազմաթիվ վտակներ՝ Ամբար, Պամուկ, Զաղիբու, Կապուսկ, Սափուր և այլ, ապա հեզանագ սահրով մտնում է Արզանի գոգավոր: Այնու թաղաքի մոտ ընդունում է Ջերմ (Արլ. Տիգրիս, Բոհտան) վտակը, թնքվում հարավ-արևելք ու խրվում է 60 կմ նրկարության խոր սանդղածորի մեջ: Սանդղածորում առաջացնում է նրկ բարձր ցրվածներ, որոնցից ամենաբարձրը Ջրփռան է (57 մ) ու մտնում է Ջիզրի գոգավորություն: Արևմտյան հարթու վտակն ընդունելուց հետո դառնում է ավելի լայնածուր ու ջրառատ, հոսում է Արցաղ և Թարակոկ ցածրադիր լեռնաշղթաներից գուգահեռ, որտեղ մի քանի գալարներ տալով դուրս է գալիս հայկական լեռնաշխարհի սահմաններից՝ Գոհուկ վտակի գետախառնուրդից հետո: Տիգրիսը նույնպես շատ տղմոտ գետ է: հատկապես վերին հասանքում՝ աշնանային, կրքեմն գարնանային հորդացումների ժամանակ և տարեկան լեռնաշխարհից դուրս է տանում մոտ 15 մ լն տոննա գետաբերուկներ, որոնց մի մասը կուտակվում է Միջագետքի դաշտավայրում: Գետը հորդանում է աշնանար և ձմռանը՝ թափվող անձրևներից, ձյուն համարյա չի գալիս (նկ. 23):

Կասպից ծովի ավազանը հայկական լեռնաշխարհում ընդգրկում է մոտ 161 հազ. քառ. կմ մակերես, որտեղ ձևավորվում են Կուր, Արաքս և Կզրլուզեն գետերն իրենց վտակներով: Կուր գետի նրկարությունը հայկական լեռնաշխարհի սահմաններում 520 կմ է, ջրհավաք ավազանը 33 հազ.քառ. կմ: Գետը սկիզբ է առնում Կոզ (Կլոյն, Գյուլնի) բարձրադիր գոգավորության ճահճից: Ակզրում հոսում է լավային սևաբաժնի նեղ ձորով, ապա մտնում Արդախանի գոգավորություն, որտեղ սողցելով առաջացրել է լավային սանդղածոր: Ծարունակելով ընթացքը գետը անցնում Ջավախքի սարահարթով, որտեղ նույնպես հոսում է քառաստիճան ասիմետրիկ սանդղածորով, որտեղ բարձր ժայռաքարվանդանի վրա թառել է Թմուկ ամրոցը: Քիչ այն կտավ վարձիայի Թարայրներն են: Ախալցխայի գոգավորությունում Փոցխով վտակն ընդունելուց հետո նորից մտնում է խոր կիրճի մեջ ուր գտնվում է Բորժոմ առողջարանը: Անտառապատ կիրճից դուրս գալուց հետո գետը անցնում է մի քանի միջլեռնային գոգավորություններով, ապա Ալզևու, Կրամ, Աղստև և աջակողմյան վտակներն ընդունելուց հետո դուրս է գալիս հայկական լեռնաշխարհի սահմաններից արդեն հունվով Կուր-Արաքսյան ցածրավայրով: Աղստևի և Կուրի գետախառնուրդը ծ.մ.-ից բարձ է 100 մ: Կուրը լեռնաշխարհի տարածքում ունի մեծ անկում և կատարում է խորքային էրոզիա: Մնումը խառն է,



Նկ. 23. Հայկական լեռնաշխարհի ջրվեժները

իյնականում ձևա-անձրեւային, վարարում է գաբնանը: Գետի միջին տարեկան ծախսը Թբիլիսիում 200 մ³/վրկ. է, իսկ տարեկան հոսքը 11 կմ³: Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրական հրաբխազանգվածից և Հայկական լեռնաշխարհով անցնում է մոտ 900 կմ, ապա ստորին հոսանքում միանալով Կուրին թափվում է Կասպից ծով: Արարտի ջրահավաք ավազանը 108,3 հազ.քառ. կմ է: Նախկինում ստորին հոսանքում հոսել է Լրկու առանձին հուներով, որոնք հետագայում ծածկվել են իր գետաբերուկներով և գետը ստիպված փոխել է իր հունը, միագել է Կուրին: Արաքս գետը վերին հոսանքում մինչև Բասենի գոգավորություն մտնելը Կտրում է Այծառկուտը և Սուկավետ լեռնաշղթաները միացնող լավային ծածկոցը՝ գոյացնելով խոր սանդղածոր: Բասենի դաշտում մի քանի գալարներ տալուց հետո մտնում է Երասխածորի կիրճը, որի խորությունը հասնում է 1000 մ-ի: Կիրճի վերջում, ձախից ընդունում է Ախուրյան վտակը ու մտնում է Արարատյան դաշտ: Արարատյան դաշտը Արաքսի նրկու կողմերում փռված հարթահատակ, նրկաբաժված ոչ խորը տաշտականման հովիտ է, Արարատ, Արագած և Գեղամա լեռնազանգվածների ու Հայկական Պար լեռնաշղթայի միջև տարածված: Մեծ անկում ունեցող գետը իր գետաբերուկներով խցանվելով Արաքսը այստեղ բազմիցս փոխել է հունը: Գարնանային վարարումների քանդել է շատ կամուրջներ ու անկայան թափառել: Այժմ սահմված է Նախիջևանի մոտ կառուցված ամբարտակի ջրամբարում: Ջրամբարից հետո, նեղ կիրճում, նրան է միանում Կոտուր վտակը: Անցնելով Ջուլֆայի նեղ գոգածված ու Մեղրու կիրճով, որտեղ Կտրում է Ջանգեզուրի լեռնաշղթան (անտնցնդնետ հովիտ) մտնում է Հազարտի դաշտ ու լայնահուն փռված հովտով հոսում է դեպի Կուր-Արաքսի ցածրավայր: Այստեղ աչ կողմից ընդունում է Ահար (Կարառու) վտակը ու շտապով մտնում Միլիի հարթություն և դուրս գալիս Հայկական լեռնաշխարհի սահմաններից: Արաքսը խիստ տղմուտ գետ է, ունի շատ մեծ անկում: Մնվում է ձնաանձրեւային և ստորգետնյա ջրերից: Գետի տարեկան միջին ծախսը 280 մ³/վրկ. է, իսկ տարեկան հոսքը մոտ 9 կմ³: Գարնանային ուժեղ վարարումների ժամանակ ծախսի առավելագույնը հասնում է 1600 մ³/վրկ.: Ուժեղ խորքային էռոզիայի շնորհիվ գետը տարեկան իր ջրհավաք ավազանից տանում է 25 մլն. տոննա գետաբերուկային նյութ, իսկ Կուրի հետ միասին՝ Կասպից ծով են տանում մոտ 60 մլն. տոննա գետաբերուկ:

ԼՂՂՂԻԳԼԻՆ ԳԵՏՈՂ ՍԿԻԶԲ Է ԿՐՆՈՒՄ ԾԱԽԵՆՈՂ ԼԵՐՆԱՇՂԹԱՅԻ ԾԱՅՐ ԽԱՐԱՎԱՅԻՆ ՎԻՐՋԱՎՈՐՈՒՅԱՆ ԱՐՈՒԾԻՆ ԳԱՎԱՅԻԳ (3173 մ): Այդ լեռնագագաթը ջրբաժան է հանդիսանում Պարսից ծոցի, Ուրմիա լճի, Ծախբերո և Գուռտակ լեռնաշղթաների և Զագրու լեռնահամակարգի համար: Գետը վերին հոսանքում ակոսելով Ծախբերո լեռնաշղթայի մերձգագաթային հնագույն սառցադաշտման մորենները ու խորը V-աձև ծորից դուրս գալով մտնում է Դիվանձորի գոգավորություն: Ջախակողմյան վտակները ընդունելուց հետո գետը սրբնթաց հոսանքով մխրճվում է Մարական սարահարթի նստվածքային արաբների մնջ, որտեղ առաջացրել է

դարավանդավորված լայն հովիտ: Թեև վտակի գետախառնուրդից մի քանի կմ անց կզըլուզները 90° ծնկադարձով շրջվում է հյուսիս ու մտնում է ժայռապատ ու խորը անտեցնդենտ կիրճ: Կիրճի խորությունը տեղ-տեղ անցնում է 700մ-ից: Գետը այստեղ խիստ սնդմվում է նևղ պատերի արանքում. արա աստիճանաբար հաղթահարելով 150 կմ նրկարությանր կիրճը մտնում է Կարմրանի դաշտ: Այստեղ թողնելով իր գետաբերուկների մի մասը, ճյուղավորվում է նրանց միջև: Զախից ընդունելով Աղաջուր վտակը, իսկ ձախից՝ Ձենջան վտակը, որոնց շնորհիվ դառնում է առատաջուր ու ծուղորեն մեանդրներ տալով մտնում է Միաննի գոգավորություն: Գոգավորությունում նրան նն միանում ձախակողմյան Բառանգու, Ծաերի, Սսինաջուր վտակները, որից հետո գետը սողոցում է Ձենջան լեռնաշղթան, ապա 90° շրջվելով վախում է ուղղությունը, ընթանում է հարավ-արևմլք: Արևմլքից Գեղմանց, այլումուտից՝ Ձենջան լեռնաշղթանների միջև սնդմված գետը հոսում է ասիմետրիկ հովտով: Այդ սնպածնի հովտում գետը ուժեղ խորքային էռոզիա է կատարում՝ ընդամենը 175 կմ հատվածում 1050 մ-ից իջնում է մինչև ծ.մ.-ից 250 մ բարձրությունը (անկումը 800 մ է): Այստեղ գետը ամբարտակվում է Ոսկերասի տաշտակածնի գոգավորությունում առաջացնելով Ծաբանատի ջրամբարը: Ջրամբարից հետո մեկ անգամ նու 90°-ով փոխելով ուղղությունը սկսում է աղբյղ Գնդանց և Էլբուրս լեռնաշղթանների ժայռոտ կողմը, առաջացնելով անտեցնելնտ կիրճ, որից հետո մտնում է Գնլանի (Գիլանի) Հարավ-Մերձկասպան ցածրավայր: Մինչև կասպից ծով թափվելը առաջացնում է ճահճապատ մեծ դկտա: Կիրճից հետո գետը կրում է Սեֆիդտոջ անունը: Կզըլուզներ իր ողջ ընթացքում Հայկական և Իրանական լեռնաշխարհների համար հանդիսառնում է սահմանային գետ և միաժամանակ բնական անջրպետ է 685 կմ նրկարությամբ: Կզըլուզներ ունի ձնաանձրևային և ստորգետնյա խաշը սնունդ, վառաղում է գարնան նրկոթոդ կնիսն: Գետի տարեկան միջին ծախսը 260 մ³/վրկ. է, իսկ տարեկան հոսքը մոտ 8 կմ³: Գարնանային վառարումների ժամանակ առավելազույն ծախսը հասնում է 1600 մ³/վրկ.: Հայկական լեռնաշխարհում նրա ջրհավաք ավազանը 18.2 հազ. քառ. կմ է, որտեղից էռոզելով վանում, տանում է 18 մլն տոննա գետաբերուկային նյութներ:

Մև ծովի ավազանը Հայկական լեռնաշխարհում զբաղնցնում է 71 հազ. քառ կմ մակերես, որի ամենախոշոր գետերն են Ըորոխը, Գայլ գետը Եշիլլըմակի հետ և Կզըլլըմակի վերին հոսանքը: Ըորոխը ունի 516կմ նրկարություն, որի ջրհավաք ավազանը մոտ 20 հազ. քառ. կմ է: Գետը սկիզբ է առնում Ըորոխի լեռնաշղթայի Զորմայրի գագաթից (3255 մ) ու հոսում է դեպի արևմուտք: Վերին հոսանքում մտնում է Բարնրդի գոգավորություն, ընդունում բազմաթիվ կարճ վտակներ, ապա շրջվելով 180° հոսում է արևմլք, հյուսիս-արևմլք: Հոսում է խոր, գառիթառի լանջերով կազմված ասիմետրիկ հովտով, որը միջլեռնային գոգհովիտ է Արևմյան Պնտոտ, Ըորոխ, Արսիան և Ծավշեր լեռնաշղթանների արանքում: Մինչև Մև ծով թափվելը աջից ընդունում է Օլթի, Բնրտա, Աջարա վտակները ու կոռում է


Պոնտական լեռնաշղթան՝ առաջացնելով անտեցեղենտ կիրճ: Վտակները ջրառատ են, հոսում են խոր կիրճերով, առաջացնում են սահանքներ ու ջրվեժներ: Լեռնաշխարհում ամենալարձր են գեղեցիկ ջրվեժը Օլթիի վտակ Թորթումի վրա է (40 մ): Ճորձի սնուցումը ձնաանձրևային է: Հորդանում է գարնանը եւ աշնանը, տարեկան միջին ծախսը 190 մ³/վրկ է, տարեկան հոսքը մոտ 6 կմ³ է, իսկ հոսքի մոդուլը՝ 11/վրկ.կմ²: Ջրառատ է: տարեկան Սև ծով է տեղափոխում մոտ 13 մլն. տոննա գետաբերով: Գայլ գետը սկիզբ է առնում Գյումուշխանն լեռնաշղթայի Հոլուպար գագաթից (2500 մ) եւ մինչև Եշիլլըմակի հետ միանալը հոսում է արևմուտք՝ Պոնտական լեռնաշղթայի հարավային ստորոտներով: Եշիլլըմակ վտակն ընդունելուց հետո շրջվում է հյուսիս ու թափվում է Սև ծովը՝ անցնելով 500 կմ: Ծովափնյա ափամերձ հարթությունում առաջացնում է գետաբերովային գոյացման ճախիճներ եւ ճահճավճեր: Գետավազանը գրադնցնում է (Եշիլլըմակի հետ միասին) շուրջ 17 հազ քառ.կմ տարածք: Տարեկան միջին ծախսը կազմում է 95 մ³/վրկ., իսկ հոսքը՝ 3 կմ³: Գայլ գետի հովիտը ծայրեծայր տեղիկ միջլեռնային նեղ գոգավորություն է: Գետի սնուցը ձնաանձրևային է, հորդանում է գարնանը (նկ. 24): Եշիլլըմակ գետը սկիզբ է առնում նույնանուն լեռնաշղթայի Լերկաուար գագաթից (3570 մ) եւ ինչպես Գայլ գետը՝ հոսում է արևմուտք 320 կմ նրկարությամբ: Սա Գայլ գետից եւ կարճ է եւ սակավաջուր, համարվում է Գայլ գետի վտակ: Միջին հոսանքում ոչ խորը սանդղածորից դուրս գալով մտնում է Թորատի գոգավորություն: Եշիլլըմակը որպես Հայկական լեռնաշխարհի սահմանային գետ ծախից Չեքերեկ մեծ վտակն ընդունելուց հետո ստորին հոսանքում շրջվում է հյուսիս-արևմուտք ու Անատիա ըաղաքի մոտից սկսում է տղցել յուրաքանչեւ կալճի ստաբարներ անտեցեղենտ նեղ կիրճում: կիրճից դուրս գալուց հետո միախառնվում է Գայլին եւ արդեն որպես հարթավայրային գետ ընդարձակ հովտով ընթանում է Սև ծով: Գարնանային հորդացումների ժամանակ ծովափնյա հարթության արտաբերման կոնուս մեանդրում է: Եշիլլըմակ գետի տարեկան միջին ծախսը 82 մ³/վրկ. է, իսկ տարեկան հոսքը կազմում է 2.5 կմ³: Կզլլըմակ գետը սկիզբ է առնում Եշիլլըմակ լեռնաշղթայի Ալսար գագաթից (3017 մ) ու հոսում է դեպի հարավ-արևմուտք: Սկզբում անցնում է Սվազի երկարածոված գոգավորությունով, որտեղ աչից եւ ծախից ընդունելով բազմաթիվ վտակներ դառնում է հորդահոս, ապա լայն ու փոփած հովտով ընթանում է հարավ արևմուտք, դեպի Գամիթրի (կամարակ-Գեմլերեկ) գագաթիտ, որից հետո դուրս է գալիս Հայկական լեռնաշխարհի սահմաններից՝ անցնելով 345 կմ: Գետավազանի տարածքը լեռնաշխարհում 10 հազ. կմ² է: Տարեկան միջին ծախսը կազմում է 62 մ³/վրկ., իսկ տարեկան հոսքը՝ 2.4 կմ³: Մտումը ձնաանձրևային է, հորդանում է գարնանը: Բացի այս մեծ գետերից Սև ծովի ավազանում՝ Պոնտական լեռների հյուսիս-հայաց լանջերից 3000-3500 մ բարձրություններից սկիզբ են առնում 30-150 կմ նրկարության բազմաթիվ ջրառատ գետեր, որոնցից համեմատաբար նշանավոր

ին Բալասան, Մկնթ, Խարշիս (Մանսխոցոր), Բարածոր, Խալդիզն, Պազար, Սուրա, Յանթոլու և այլ գետերը, որոնք ուժգին խորքային Լազիա են կատարում:

Հայկական լեռնաշխարհում Միջերկրական ծովի ավազանին սրտովանող գետավազանային տարածքը ամենափոքրն է՝ քիչ ավելի է 5000 կմ²-ից: Նրա վազանին են պատկանում Սահան (Սնյհան) գետի վերին հոսանքի՝ Մամրնդավի (Ջամանտի) ավազանը մինչև Պազարվիրանի գոգավորությունը (մոտ 2.0 հազ. քառ. կմ) և Ջահան (Ջնյհան) գետի վերին հոսանքի ավազանը՝ շուրջ 3.2 հազ. քառ. կմ մակերեսով: Ջահանը սկիզբ է առնում Փոքր Հայքի կառուցվածքա-տեղա-տարումնային բարձրավանդակի Բյուրևափ- (Բինրուպ) գագաթից (2830 մ): Ալբիտանի գոգավորությունում ձախից լնդունում է Կուրմա, Լյուրին, Մոդուտ և այլ վտակները, շրջվում է հարավ ու մյուսձվում անսնցեղենա կիրճի մեջ: Կիրճից հեռու, Մարաշի գոգավորությունում ձախից նրան է միանում ճերմակչոր (Ակսու) վտակը, որից հետո Ջահանը դուրս է գալիս Հայկական լեռնաշխարհի սահմաններից՝ անցնելով 226 կմ: Գետի տարեկան միջին ծախսը այդ սահման-ներում մոտ 40 մ³/վրկ. է, իսկ հոսքը՝ 1.8 կմ³: Գետը սնվում է ձնհալի, անձրևի և ստորգետնյա ջրերով, շատ տղմատար է: Ուժգին խորքային Լազիա է կատարում, ունի որոտորոտ հոսք: Սահան (Մամրնդավ) գետը Հայկական լեռնաշխարհի սահմաններում ունի 133 կմ երկարություն, որի ջրահավաք ավազանը սահմանա-փակված է Փոքր Հայքի բարձրավանդակի շրջանակներում: Գետը սկիզբ է առնում առանցքային Ռեչեր լեռնաշղթայի Յիզականց բարձունքից (2114 մ) ու ավանդով թույլ սլիքավոր սարահավաք սնվում է, կնձր լեռնաճյուղի ու կենտրոնական Տավրոս լեռնաշղթայի արանքում: Այդ սնվածու աշիմտողիկ հովտից դուրս գալով մտնում է Պազարվիրանի գոգավոր, գետաբերովկենդի մի մտը նստեցնելով այնտեղ: Գետը վարարում է գալիս: Տարեկան միջին ծախսը 16 մ³/վրկ. է, իսկ հոսքը 0.7 կմ³ (նկ. 24):

4. Լճերը Հայկական լեռնաշխարհում կա 3 խոշոր լիճ և կան բազմաթիվ փոքր լճեր: Լեռնաշխարհում կան տեկտոնական, լավային արգելատիակման, հրաբխային (խառնարանային), սառցադաշտային, սողանքա-փլուզումնային, մնացողային, ճահճային և այլ ծագման լճեր: Բնութագրվենք դրանք հերթականությամբ:


Վան լիճ Լիճը գտնվում է Հայկական լեռնաշխարհի Հարավային հրաբխային բարձրավանդակում, ծովի մակարյակից 1716 մ բարձրության վրա: Լճի հայելին զրաղեցնում է 3760 քառ. կմ տարածք, իսկ սնման ավազանը՝ 17.8 հազ. քառ. կմ է: Անհոսք է, աղիությունը մոտ 22 պրոմիլ է: Ունի տծու կտրտված ափագիծ, երկարությունը 125 կմ է, լայնությունը 51 կմ, խորությունը, որը տվյալների համաձայն 145 մ է, իսկ մեկ այլ չճշտված տվյալների (ամերիկացի ուսումնասիրողների կողմից)՝ լճի արևմտյան մասում այն հասնում է 451 մ: Լճի հարավային ափով ձգվում են Հայկական Տավրոսի, Շառտախի և Ռշտունյաց լեռնաճյուղերը, որոնց գաթիթափ լանջերը մխրճվում են լճի մեջ: Լճում կան Լիմ,



Նկ. 24. Խոշոր գետերի երկայնական կտրվածքները

Աղթամար, Կտուց, Աստևր, Չափանակ կղզիները, որոնցից ամենամեծը Ախթամարն է: Վան լիճը լավային արգելափակման ծագում ունի: Ենմբուր ձև Սիփան հրաբխազանգվածների ժայթքման լավաները փակել են գետերի հունը, որի պատճառով տեկտոնական գրարեն հոփոտմ գոյացել է լիճը: Լճի շատ հետազոտողները նրա տարրեր մասերում հայտնաբերել են լճային դարավանդներ՝ տարրեր բարձրությունների վրա, նույնիսկ մինչև 45 մ լճից բայծր: Դրանից հետևում է, որ դարավանդների առաջացումից հետո տեղանքը աստիճանաբար բարձրացել է: Լճի հարավային ափին այսօր էլ Փնլի լեռնազագաթի (3074 մ) արևմտյան ստորոտի ժայռեկոտ պատրաստված է լճի սահարդակից 15-20 մ բարձրության վրա գտնվող, մոտ 400 ս որկարության սր բազալ թունդ, որով էլ է եղել դևայի Մոկս գետ, որը պատկանում է Տիգրիսի ավազանին: Լճի սակարդակը շատ անգամ է տատանվել, զատ շատ սովորյալ սրվաբանական ոչ վաղ անցյալում և նույնիսկ պատմական ժամանակաշրջանում՝ լճի սակարդակի բարձրացման վերաբերյալ: Առումնասիրություններից պարզվել է, որ լճի արևմտյան ծանծաղ մասում մի ժամանակ ցատաք է ողջ, բուսականություն մարդիկ զբաղվել են այգեգործությամբ: Հավանական է համարվում, որ քստ Քսենոֆոնի նկարագրության, հունական 10 ուղևորական բանակի տեսարանը սրբուղին անցել է լճի այդ մասով: 1841թ. լճի ցրի մագաղապար սորից բարձրացել է և ողողել հյուսիսային ափին գտնվող Արճնշի բերդը: Լճի սևումը խառն է, գլխավորապես ճնաճանճրնային, իսկ հյուսիսում ու արևմուտքում ստանում է նաև ստորգետնյա սնուցում, որտեղ հրաբխային ծածկույթներն են, իսկ հարավում և հարավ-արևելքում ավազանը ծալքաբնկորակվոր կառուցվածք ունի, ուստի աղբյուրները համեմատաբար քիչ են: Լճի ցրի ծայսը ռազմատարակշուծ է, որքան գետներն ու տեղումներն ջուր են բերում (4.5-5 սլոք. մ³), այդքան էլ գոլորշանում է: Լճի մեջ են թափվում Հնդի-շատ, Բերկրի, Արճնշ, Մարմնո, Խոշաք և այլ գետեր: Լճում բազմաբնում է տառելի ձկնատեսակը: Հնագույն ժամանակներից լճում գոյություն ունի նավարկություն: Կարևոր նավահանգիստներն են Վանը, Դատվանը, Արճնշը, Կոշաքը: Վանի և Դատվանի միջև գործում է նրկաթուղային լաստանավ: Լճի ամենամեծ Ախթամար կղզում է գտնվում Գագիկ Արծրունի թագավորի կողմից կառուցված (918, 921թթ.) բարձրարվեստ Սուրբ Խաչ նկնդնցին՝ հայկական ճարտարապետության գոհարներից մեկը, որը առ այսօր լրիվ կանգուն է (նկ. 25):

Ուրմիա (Կապուտան, Ռեզայի): Լիճը տեղադրված է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում, ծ.մ.-ից 1275 մ բարձրության վրա և զբաղեցնում է 5.8 հազ.քառ. կմ մակերես, նրկարությունը 140 կմ է, լայնությունը՝ 65 կմ, խորությունը՝ 15մ: Ջրհավաք ավազանը մոտ 50 հազ. քառ. կմ է: Անհոսք լիճ է, ծանծաղ և մակարդակի տատանումների պատճառով ունի թափառող աղիք: Գարնանային վարարումներին ծածկում է առափնյա ճահիճներն ու աղուտները: Առաջնը ուժգին գոլորշանալով ևս է, քաշվում իր ափերի մեջ, այնտեղ թողնելով աղի շերտ: Լիճը տեկտոնական ծագում ունի: Կարծիք կա, որ լիճը հնում կզրուզեն գետի



Նկ 25 Հայկական լեռնաշխարհի գետային գտային լճան աղագանների

միջոցով հոսք է ունեցել, հետագայում Սոհունդի լավաները փակել են գետի ճանապարհը: Ոստ մեկ այլ կարծիքի, Եիրական լեռնաշղթայի այսօրվա բանուկ լեռնանցքի տևողով, երկրաբանական ոչ վաղ անցյալում լիճը հոսք է ունեցել Արարսի ավազան, ուր պահպանված են լճա-գետային դարավանդների հետքերը, որպեսզի կան նաև կարմիրջուր (Աչի Վարարար) գետի հովտալանջերին, որոնք դեպի լիճը աստիճանաբար գածրանում են: Այդ փաստերը հիմք են տալիս հենտևություն անել, որ լճի գոգավորության հատակը իջնում է կամ նշված տեղերի լեռներն են բարձրանում: Ուրմիա լիճն են թափվում Ջաղաթու, Մայմատ (Ձուլ), Ջարիկ, Ռուզն, Մարի, իսկ, կարմիր ջուր, կաղնի (Արասխ) նո այլ գետերը: Լիճը ունի անձրևային և մասեր ստորգետնյա սնուցում: Ջրային հաշվեկշիռի գումարային մուտքը կազմում է 7-8 միլիարդ մ³, որն ամբողջությամբ գոլորշանում է: Լճի ջրի աղիությունը շատ մեծ է, գարնանը ու ամռանը տատանվում է 150-250 ‰/տարածվի միջև, որի պատճառով կենդանական աշխարհը բացակայում է, կան միայն որոշ ջրիմուռներ: Լողալ չիմացող չի սուզվում: Լճում կան ժայռտ կղզիներ՝ Էշակ, Թեյա, Ձիերի, Ոչխարի և այլ փոքրերը:

Սևան լիճ. Լիճը գտնվում է Հայկական լեռնաշխարհի կոուսիս-արևելքում, Ժ.մ.-ից 1900 մ բարձրության վրա, 1416 քառ. կմ. մակերևույթ: Լճի ավազանը զբաղեցնում է մոտ 5(XX) քառ կմ տարածք և ավերարում է մոտ 60 մլրդ. մ³ ջուր: Հոսք ունեցող լիճ է: Աշխարհի քաղցրահամ մեծ լճերից ամենաբարձրն է: Նրանից սկիզբ է առնում Հրազդան գետը: Լճի նրկարությունը 75 կմ է, լայնությունը՝ 40 կմ, խորությունը՝ 82 մ: Լճի գոգավորությունը տեկտոնական ծագում ունի (իջվածք է, գրաբն): Լճի առաջացումը կապված է Գեղամա լեռնավահանի հրաբխային լավաների միջոցով գետի հունը փակելու հանգամանքի հետ: Շրջակա ծայրաբնկորավոր եւ հրաբխային լեռների գագաթները հասնում են 3000 մ բարձրության, իսկ մի քանի գագաթներ՝ Աժդառակ, Սպիտակտաար, Վարդենիս, Ծար, Հինալ՝ 3500 մ-ից բարձր են: Հագարամյակների ընթացքում լիճը մի քանի անգամ ունեցել է մակարդակի տատանումներ: Պարզված է, որ IV հազարամյակից մինչև մ.թ.ա. VI դարը լճի մակարդակը եղել է 1900 մ-ի վրա, որից հետո սկսել է բարձրանալ եւ հասել է 1916 մ նիշին: 1936թ., նրբ արհեստական կերպով իջնցվեց լճի մակարդակը, Լճաշեն գյուղի մոտ հնագետները 1950-ական թվականներին պեղեցին դարբարաններ, որոնք 12-14 մ ցած էին գտնվում 1936թ. մակարդակից: V դարից նշվում է Սեւանի կղզու մասին, որը լճի ջրի մակարդակը իջնցնելու պատճառով 1960-ական թվականներից վերածվել է թերակղզու: Լիճն են թափվում Արգիճի, Մարիկ, Գավառագետ, Ծակբար, Մալտունի, Վարդենիս, Ջկնագետ, և այլ գետեր ու գետակներ: Լիճը սնվում է գետերով, մթնոլորտային տեղումներով, ստորգետնյա ջրերով: Տարեկան ստանում է 1320 մլն.մ³ ջուր և համարյա այդքանն էլ գոլորշանում է: Հիդրոէլեկտրակայանների աշխատանքի եւ Արարատյան դաշտի սռզման համար արհեստականորեն իջնցվեց լճի մակարդակը, որը իր հետ բերեց նաև բացասական նրևույթներ: Սկսեցին աճել ջրի-

մուտնր, վատացավ ձկնատնեսակների վնասարտադրության արայմանները, ամեն տարի ծնածնր լիճը սկսեց սառցակալել, գետների խորքային էտզիան ուժեղացավ, գրեթե բոլոր կամուրջները քանդվեցին և այլն: Լճի մերձափնյա բնատարածքների բնական հավասարակշռությունը մասամբ վնասվեցանելու նպատակով կառուցվեց 49 կմ երկարությամբ ստորգետնյա ջրատար թունել, որով Արփա գետի ցրտից Սևան լիճ է տեղափոխվում տարեկան 250մլն.մ³ քաղցրահամ ջուր: Այժմ լրացուցիչ կարգով կառուցված է Որոտան-Արփա-Սևան ջրատար 160-200 մլնմ³ տարեկան ծախսով, որի շնորհիվ ըստ հաշվարկի լճի ջրային հաշվեկշիռը կդառնա դրական: Լճում բազմաանում են էնդեմիկ իշխանը, կողակը և Լադգա լճից բերված սիգ կլիմայավարժված ձկնատնեսակներ: Լճում կանոնանավոր նավագնացություն կա Սևան, Մարտունի, Նորատուգ, Ծովակ և Ծործա նավահանգիստների միջև: Լճի գոգավորությունը ունի ռեկրեացիոն հիանալի շնորհներ, որոնք այժմ օգտագործվում են որպես զբոսանքների և հանգստյան գոտու վերածված ազգային պարկի: Հայկական լեռնաշխարհում բացի նկարագրված երկր մեծ լճերից կան բազմաթիվ համեմատաբար փոքր լճեր, որոնց մտին կտանք ընդհանուր կարգի ծանոթագրական տեղեկություններ: Լավային արգելափակման ծագում ունեցող լճեր շատ կան Հյուսիսային հրաբխային բարձրավանդակի, Ջավախքի, Կարսի, Սյունիքի սարահարթերում և Հարավային հրաբխային բարձրավանդակում: Հյուսիսային հրաբխային բարձրավանդակում գտնվող այդպիսի լճերից ամենամեծը **Ծովակ... Հյուսիսի... (Չիղը)** լիճն է, ծ.մ.-ից 1960մ բարձրության վրա, 85 քառ կմ մակերեսով: Նրա խորությունը 42մ է: Լճից դուրս է հոսում Մեծաջուր գետը: Ջնջանը սառցակալում է: Լճում բազմաանում է Կարմրախայտ ձուկ: Մյուս լճերից են **Փորվաճան** (39 քառ կմ) հոսք ունի դեպի Կուրը: Մյուսներից նշանավոր են Խոզապի, Տաթածղորի, Արփի (այժմ՝ ջրամբար), Խանչուլի, Մաղաթափա, Ծավկա (այժմ՝ ջրամբար), Սաղամո և մի քանի այլ փոքրերը: Մյուսիքի սարահարթում նշանավոր են Մեծ և Փոքր Ալ լճերը: Մե լիճը հարավային հրաբխային բարձրավանդակում լավային արգելափակման լիճ է **Գալլատուն** (Բալրկ գյո), որը գտնվում է Հայկական Պար լեռնաշղթայի Սինակ գագաթի հարավային լանջին՝ ծ.մ.-ից 2247 մ բարձրության վրա: Ունի 34 քառ. կմ մակերես: Լճից դուրս է հոսում Ձկնջուր գետը, որը Մեծ Արարատի հարավ արևմտյան ստորտեղի զոգում ստեղծում է ճահճալճեր, ապա շարունակվում դեպի Արարս գետը Դեղինջուր (Մակու) անվամբ: Նույնպիսի ծագում ունեն Սիփան հրաբխազանգվածի արևմտյան կողմում, Բզունյանց սարահարթում գտնվող **Նազիկ** (60 քառ.կմ) և Մանազկերտի գոգավորության հարավում՝ Բլեզան հրաբխակրի լավային լեզվակի ափսնածև փոսորակում գտնվող **Խալլ** (25 քառ. կմ) լիճը: Հայկական լեռնաշխարհում որպես ջրագրական առանձնահատկություն պետք է նշել այն, որ այստեղ կան հրաբխային ծագման խառնարանային տիպի լճեր, որպիսին չկա ողջ Մերձավոր Արևելքում: Դրանցից ամենահնչանավորը **Նևուրոսի** լիճն է՝ նույնանուն լեռնագագաթի խառնարանում: Լիճն ունի 9 քառ. կմ

մակերևույթ, ուր այժմ էլ բխում են ծծմբաքային տար աղբյուրներ (Ֆումարոյներ): Խոտեարանային լճեր կան նաև Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաների շատ գազարներին, Արտաղանի, Թոնդուրնկի, Սոհունդի, Սարալանի, Սիփանի ու այլ հրաբխականների կատարին: Լեռնաշխարհում ամենաշատ սառցադաշտային ծագման լճերն են, որոնք գոյացել են սառցադաշտային կրկնանքում մի մորճնային թմբերի միջև: Դրանք հիմնականում փոքր լճեր ու լճակներ են (Ջարի, Ակնա, Գազան, Սնու, Ալ. Խորի, Կոփակ, Փիրուզ ու այլն) Արագածի, Գեղամա, Կապուտջուղի, Մեծ Եշիանասարի, Եղբկի, Թոնդուրնկի, Հունդրարի, Ջարասալի, լեռնագագաթների մերձգագաթային մասերում: Այդպիսի լճեր կան նաև Բյուրակն և Սարալան հրաբխազանգվածներում, Գուտուակ, Շահբերդ և Կորդվաց լեռներում, ինչպես նաև Արևելյան Պոնտոսի բարձրադիր գոտում: Հայկական լեռնաշխարհում սողանքա-փլուզումնային ծագման լճերն առաջացել են ծալքարձկորավոր կառուցվածք ունեցող լեռներում: Այդպիսի լճերից ամենամեծը **Արճակն** է, Վան լճի արձնելում: Լիճը տեղադրված է Վասպուրականի կառուցվածքա-տեղադրումնային յարձրավանդակում, ծ.մ.-ից 1803մ բարձրության վրա մի զբաղմվում է 100 քառ. կմ մակերես: Դեպի արևմույթ բացված պայտածնու, անհոսք լիճ է: Եջափակված է Հաղթնու, Թրակալի ու Պոզնր լեռնաշղթաներով: Արձնելից լիճն է թափվում Արձիշակ գետը: Անհոսք լճի սնումը ծնաանձրնային է և ստորգետնյա, սակայն ջուրը քաղցրահամ է: Մեծությամբ սրան քիչ զիջում է **Շուվե լիճը**, որը գտնվում է Հայկական Տավրոս լեռնաշղթայի արևմուտյան հատվածում՝ տեղադրված հյուսիսից մի հարավից զուգահեռ ձգվող բարձր լեռնաշղթաների միջև: Լճի մակերեսը 78 քառ. կմ է: Նրանից սկիզբ է առնում Տիգրիս գետը: Լճի շրջակա լեռնալանջերը ընդհուպ ափերը ծածկված են փարթամ ու մթին անտառներով: Տեղանքը ունի կուսական գեղմեցություն և առողջարանային կլիմա: Նույնպիսի ծագում ունեն անտառազատ լեռների գոտորիկ վայրերում գտնվող **Պաղք** լիճը (Դիլիջանի լեռնաճյուղում), Թորթումի լիճը (Օլթիի վտակ Ազոդի հովտում), **Կապուտ** լիճը (Գյոկզյուլ)՝ Ալիարակ լեռան ստորոտում, Ալմուս լիճ-ջրամբարը՝ Մամուլ լեռան հյուսիսային ստորոտում (Եշիլըմակի հովտում): Մնացորդային (հնահունային) ծագման տիպի լճեր Հայկական լեռնաշխարհում հանդիպում են գոգավորությունների հատակին: Դրանք նախկին լճերի մնացորդներ են կամ գետի գալարների մնացորդներ, որպիսիք են **ԱԷ** կամ **ԱՂ** լիճը Արաքսի միջին հոսանքի աջ ափին, Մեծամոր լիճը, որը նախկին Ախուրյանի հնահունի նլքն է: Այդպիսի լճեր ու լճակներ կան նաև Արածանիի, Եփրատի, Արաքսի հովիտների ողողաններում: Ըահճային ծագման տիպի լճեր ու լճակներ Հայկական լեռնաշխարհում հանդիպում են հատկապես այն գոգավորություններում ու բարձրադիր սարահարթերում, որտեղ ստորգետնյա ջրերի նլքեր (աղբյուրներ) շատ կան կամ տարեկան թափվող տեղումների քանակը գերազանցում է գոլորշացմանը (կա խոնավացման ավելցուկ): Նման լիճ-լճակներ կան Գայլ գետի, Սեֆիլլուղի գետաբերանային հարթություններում,

Պագարջիկի գոգավորությունում, Կարսի, սյունիքի, Լոռվա սարահարթերում և Կողովազ լեռների Ուսիբանքի գոգհովտում:

5. Ճահիճները Հայկական Լեռնաշխարհի գտնվում է Կլիմայական չոր մերձարևադարձային գոտում, որտեղ ճահիճները շատ սահմանափակ տարածություն են զբաղեցնում: Ճահիճների առաջացման համար այստեղ առայմանները նույնն են, սակայն տարվա լինթացքում ջրի մուտքի մի միջի հաշվեկշիռը գետնի սակերևույթին դրական է միայն որոշ գոգավորությունների հարթություններում: Արզնիսի գոգավորություններում գետնաջրերը ուղղակի դուրս են գալիս նրերի մակերևույթը և ճահեացնում տեղանքը Շատ հաճախ, խիստ չորային առայմաններում, նրբ գոլորշուսակությունը 1-ից մեծ է, ճահիճների փոխարեն առայմանում են աղուտներ: Հայկական Լեռնաշխարհում իրենց գոյացման առայմանների առանձնահատկությամբ տարբերակվում են ճահիճների նրկու տիպ՝ ա) ցածրադիր գոգավորությունների ճահիճներ մի բ) բարձր լեռնային ճահիճներ: Ցածրադիր գոգավորությունների ճահիճներ հանդիպում են Արևմտյան Պոնտոսի Մն + ծովյան ափերի՝ գետաբերանային մասերում, Կասպյան ծովափին, Մեֆիդառի գետաբերանային դելտայում մի Գմդայքի ցածրավայրում, Արարատյան դաշտում՝ Արարսի աջ ափին, Ուրմիա լճի ափերին, Պագարջիկի իջվածքում մի Արևմտյան Խաբուրի վերնազավառում (Հասնկնի դաշտում): Մն մի Կասպից ծովերի մերձափնյա հարթություններում ճահիճների առկայությունը առայմանավորված է մթնառորտային տեղումների առատության հետ: Ուրմիա լճավազանի, Պագարջիկի իջվածքի մի Արարատյան դաշտի ճահիճները առայմանում են շրջապատի բարձր լեռներից գետնաջրերի ձևով ափամերձ հարթություններում մերկանալով: Սակայն դրանց մեծ մասը ամառն նրկորդ կմսին ուժգին զոլորչանալու պատճառով հաճախ վերածվում են աղուտների: Հայկական Լեռնաշխարհում ամենամեծ աղուտային ճահիճները Ուրմիա լճի գոգավորությունում են: Բարձր լեռնային ճահիճները տարածված են ծ.մ.-ից 1500 մ մի ավելի բարձրություններում, հիմնականում գետաառվտային գոգավորություններում ու լեռագոգերում մի ամենուրեք ունեն քաղցրահամ ջուր: Դրանք դժվար ջրառիտանակման տարածքներ են: Առավելապես ծածկված են շամբով (շամբուտ), նրկոզով (նրկոնուտ), շորանա-ճմա-մարգագետնային բուսականությամբ (շոռուտ): Այդ ճահիճների մի մասը ամառն չորանում է մի վերածվում խոտհարքների: Բարձր լեռնային ճահիճներ կան Ջավախքի սարահարթում, Աշոցքի սարավանդում (Արփի լճի գոգավորությունում), Լոռվա դաշտում, Կոլր գետի վերին հոսանքի շրջանում (Կոլիսի գոգավորությունում), Արդահանի սարահարթում, Երզնկայի հարթությունում, Լճորումի հյուսիսում (Շամբ-Կարնո), Բասնում, Կոգովիտում (Ձկնագետի ակունքում), Բերկրիի գետաբերանում (Վան լճի հյուսիս արևելքում), Աբաղայի լեռնադաշտում, Ուսիբանքի գոգում: Ավելի փոքր տարածքներ զբաղեցրած ճահեոտներ հանդիպում են Խոյի, Ահարի, Արդաբիլի, Կզրուզնի, Խոչապի մի մի քանի այլ գոգհովտների շրջանում:

իւմ ճաշիճները տորՖային չեն: Որոշ ճաշիճներ անհրաժեշտաբար ցամաքորդ-
ման (դրենաժի) սիժոցով վերաժվում են մարգագետինների ու խոտհարքների կամ
ձկնարուժական արհեստական լճակների:

Աղյուսակ 4

Ծովային ավազանը	Գետերը եւ նրանց երկարությունը Հ/լ-ում	Գետավազանի տարածքը Հ/լ-ում (հազ. քառ. կմ)
Պարսից ծոցի	Եփրատ (1015)	152.1
	Տիգրիս (500)	52.0
Գումարը		204.1
Կասպից ծոցի	Արաքս (847)	108.3
	Կուր (520)	33.0
	Կարուզեն-Սեֆիդուղ (685)	18.2
	Այլ ետեր	1.3
Գումարը		106.8
Մեծ ծոցի	Ճորոխ (516)	20.0
	Գալ (500)	17.0
	Կրզրոժակ (345)	10.0
	Եշիլըժակ եւ այլ գետեր (325)	24.0
Գումարը		71.0
	Ջահան (226)	3.2
	Սահան (Ծամրնդակ) -133	2.0
Գումարը		5.2
Անհոսր լճային ավազաններ	Ուրմիա լճի	52.1
	Վան լճի	17.8
	Մուս լճերի	1.0
Հայկական լեռնաշխարհը	Գումարը	512.0

ԳԼՈՒԽ VI ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԸ

1. Հողերի առաջացումը: Հողը բոլոր բարիքների աղբյուրն է: Հողից են ծնվում սնունդը, հագուստը, տնային գործածության իրերը: Մարդու ամենավաղինջական տիեզերական արտոնության մեծագույնը հողն է: Այն այսօր էլ է այդպես: Երկրային բնության գոյությունն ու զարգացումը տնդի է ունենում այս շորս տարրերի հարատևն փոխներգործությամբ: Եվ պատահական չէ, որ այն անվանում են մայր հող: Երկիր մոլորակի ներկաբանական զարգացման փուլի սկզբում (4.5-5.0 մլրդ. տարի) հող չի եղել: Հողային ծածկույթը ստեղծվել է աստիճանաբար, հազարամյակների ընթացքում ներկայից ավելի տարբեր կազմության աբադների հողմահարման, բուսական, կենդանական օրգանիզմների, կլիմայի, ջրերի ու ռելիեֆի փոխներգործության միջոցով: Այդ հարափոխ գործընթացում էներգետիկ աղբյուրը Արեգակն է: Էվոլյուցիոն 10-20 հազարամյակների ընթացքում քիչ չէ նաև մարդու ջանադիր ներգործությունը հողի որակի վրա՝ թե դրականն է թե բացասականն առումով: Ուրեմն հողն առաջանում է գործոնների մեկ ամբողջ համալիրի ազդեցությամբ: Նշանակում է այն բնական միջավայրի արդյունք է, այսինքն՝ հողը բնության հայելին է: Նրա ամենակարևոր հատկանիշը պտղաբերությունն է, բարիք ծննդու ունակությունը: Հող ստեղծել մարդը դեռևս չի կարողանում: Նրա զայազման համար շատ կարևոր է ժամանակի գործոնը, լույսը ու ջուրը ու արեգակնային էներգիան՝ ջնրմությունը: Անհրաժեշտ ժամանակ է պետք, որ միկրոօրգանիզմները ներգործեն բուսական ու կենդանական մնացորդների վրա՝ դրանց քայքայելու համար, օրգանիզմի հումուսի վերածննդ: Հողն առաջանում է բնական ճանապարհով, իսկ մարդու միջամտությունը՝ միայն կարող է բարելավել նրա պտղաբերության որակը, արագացնել կամ դանդաղեցնել հողագոյացման գործընթացը, նրանում նույնիսկ արգելակել նրա բնականն ընթացքը: Մարդը հողը սկսել է մշակել հին քաղաքակրթության օջախներում՝ Հայկական լեռնաշխարհում՝ 10-12 հազ. տարի առաջ, Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Չինաստանում, Ամերիկյան ցամաքում՝ մոտ 8 հազ. տարի առաջ, Հարավային Եվրոպայում՝ 6 հազ. տարի առաջ: Հնուագայում, մարդը աստիճանաբար սիբիլումով յուրացրել է նորանոր տարածքներ ու այդպես տարածվելով ընդգրկել է ողջ բնակելի աշխարհը: Միլիոնավոր սերունդներ են կերակրվել այդ հողի բարիքներով: Ուրեմն, նրա պահպանությունը ոչ միայն մարդկության այլև ողջ կենդանի ու անկենդան աշխարհի համար խիստ կենսական է: Հայկական լեռնաշխարհի հողային ծածկույթի բնորոշ առանձնահատկություններից մեկը, ամենակարևորը, նրա բազմազանությունն է: Այդպիսի բազմազանության առաջացումը կապված է լեռնաշխարհի ներկաբանական զարգացման պատմության հետ, որով էլ պայմանավորված այդ տարածքում ձևա-

վորվել է հողային ծածկույթի բարձրալիք-վերինթաց գոտիականություն⁸ բարդ ուլիկնիով:

2. **Հողառաջացման պայմանները:** Ուսումնասիրելով հողառաջացման պայմանները հողագետ և հողերի զոնայականության տնտեսության հիմնադիր Վ. Դոկույանը այցելելով Հայկական լեռնաշխարհի ու Կովկաս նւ տնտնելով հողերը ըստ բարձրալիք գոտիների, հանգնեց վերինթաց գոտիականության գաղափարին: Հայկական լեռնաշխարհի հողերի բազմատնակությունը նրան բերեց այն համոզման, որ լեռնային նրկներում հողերի բախտը որոշում է ընկնձը: Լեռնաշխարհի հողերի ուսումնասիրումը սկսել է 19-րդ դարի վերջերից: 20-րդ դարում Անդրկովկասյան խորհրդային հանրապետություններում ստեղծված հողագիտության ինստիտուտներ կանոնավոր հետազոտել ու քարտեզագրել են հողերը: Թուրքիայի նւ Իրանի տարածքներում այդ ուղղությամբ աշխատանքներ կատարվեցին միայն վերջերս՝ 20-րդ դարի վերջին քառորդում: Ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհի նւ Փոքր Ասիայի հողագոյացման պայմանները Բ. Պալիտովը և Ն. Ռոզովը գտան, որ այդտեղ գոյություն ունեն հողմնահարման նյութերի 4 տեսակներ, որոնց վրա ձևավորվում են հողերի մնացած բոլոր բազմազանությունները: Դրանք են ֆերիտ-սիալիտային (Fe+Si+Al): սիալիտային (Si+Al): կարբոնատային (Ca+CO₂-կիր): քլորիդ-սուլֆատային (Cl+SO₄) միացությունները: Հայկական լեռնաշխարհում ամենաընդարձակ տարածում ունեն սիալիտային կազմի հողերը, որոնք առկա են բոլոր տեսակի կավերում: Կարբոնատային հողերը ստեղծվում են չոր կլիմայական պայմաններում նւ ցածրալիք լեռնազանգվածներում ու գոգավորություններում: Ցածրալիք գոգավորություններում կուտակվում են նաև լեռներից լվացված-քշված քլորի, ծծմբի միացությունները: Ֆերիտ-սիալիտային հողեր առաջանում են առատ տեղումներ ստացող վայրերում, որտեղ բուսե թափով է ընթանում միկրոօրգանիզմների գործունեությունը: Արդյունքում, կենսաթիմիական հողմնահարման նթարկված, հեշտ լուծվող տարրերը ջրում լուծվելով հեռանում են, տեղում մնում են նրկայթ, ալյումինի, մանգանի օքսիդները, որոնք հողին տալիս են կարմիր կամ դեղին գույն: Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում հողառաջացման պայմաններ տարբեր են: Արևելաափնային լեռների ծովահայաց փնջերին՝ ծ.մ.-ից 500-700 մ բարձրություններին, խոնավ մերձարծառային պայմաններում առաջացել են կարմրահողեր: Կասպյան ծովափերին համարյա նույնչափ՝ մինչև 2000 մ տնդումների պայմաններում, Թալիշի, Գնդանց լեռների ստորտներին առանձին մասերում մասամբ գերակշռում են դեղնահողերը: Սրանց մտ հումուսի պարունակությունը շատ չէ, որովհետև բուսական մնացորդները լրիվ քայքայվում են նւ հումուս կուտակվելու հնարավորություն չկա: Կարմրահողերի վրա հումուսը տարածվում է շատ բարակ շերտով: Հողառաջացման պայմաններ էապես տարբերվում են ներքին գոգավորություններում: Այստեղ՝ Միջնաշխարհի ցածրալիք մասերում նւ 1000-1100 մ բարձրության նախալեռներում, Հայոց

Միջազնային ծայր հարավում, ձմեռանը գնտինը սառչում է, կենսաբիմիակա գործունեությունը գրեթե դադարում է: Ամռանը ջրի սակավությունը նպաստավոր չէ, մանր օրգանիզմների առտո բազմացման և հարուստ բուսածածկույթի առաջացման համար, որ դրանց քայքայումից առատ հումուս գոյանա: Այդ պայմաններում այդտեղ ձմեռավորվում են կիսաանապատային գորշ և դարչնագույն հողեր: Միջին բարձրության լեռներում, ընդհուպ 2800-3000 մ մակարդակներում, հումուսի կուտակման պայմանները նպաստավոր են: Հարուստ խտածածկը միկրոօրգանիզմների կողմից քայքայվում է ոչ լիովին, որովհետև ամառը կարճատև է ու հումուսը կուտակվում է: Այստեղ առաջանում են լեռնամարգագետնային հողեր 11-15% հումուսի պարունակությամբ: Բարձր լեռներում տարվա ցուրտ կնքը նրկարտուն է, մանր օրգանիզմների կենսագործունեությունը սահմանափակ, ուստի և այդտեղ բուսական մնացորդների մեծ կուտակում է առաջանում: Տեղեր կան, որ տնական ձյան և սառցի պայմաններում, թույլ զարգացած հողներում, նույնիսկ տորֆ է առաջանում: Այդտեղ ձմեռավորվում են կմախքային հողեր: Լեռնաշխարհի բարձրագի՝ միջլեռնային 1700-2000 մ բարձրության վրա, զոգավորություններում, սարահարթերում և սարավանդներում, չափավոր տաք կլիմայի պայմաններում ձմեռավորվել են շակոնակազույն հողեր՝ 2-5% հումուսի պարունակությամբ: 1500-2500 մ բարձրություններում լայնորեն տարածված են լեռնային սևահողերը (հատկապես հրաբխային սարահարթերում ու սարավանդներում): Այդտեղ հումուսի պարունակությունը հասնում է 5-10%: Ավելի բարձրագի մասերում լեռնային սևահողերը վերափոխվում են մարգագետնա-տափաստանային հողերի: Հայկական լեռնաշխարհի եզրային լեռնաշղթաների արտաքին լանջերի մեծ մասում տարածված են անտառներ, որտեղ ստեղծվել են հողառաջացման ուրույն պայմաններ: Այստեղ սիլիկատային հողմնահարման կեղևի վրա առաջանում են դարչնագույն և անտառային գորշահողեր: Լեռնաշխարհի ամենացածրագի կիսաանապատային գոտում, համմեատաքառ ամենայն կլիմայական պայմաններում, առաջանում են աղուտաակալիական և նմանատիպ հողեր: Հայկական լեռնաշխարհի հողային կազմը տարահետակ է: Կարմրահողերը և դեղնահողերը ամենախիսն են, որոնք ձմեռավորվել են Մե և Կասպից ծովափերին: Հետո Արմենյան Պոնոսսի, Փոքր Կովկասի և Հայկական Տավրոսի անտառային դարչնագույն և գորշահողերն են, ապա Միջնաշխարհի ծայրաբևեկորավոր հավակարգերի հողերն են: Ամենամերիտասարդը՝ հրաբխային ծածկոցների ու գետաեկոսային տարածքների հողերն են, որոնք գլխավորապես ձմեռավորվել են ողողատներում: Լեռնաշխարհի հողառաջացման պայմաններում նկատվում է հետմյալ օրինաչափությունը. բարձրագի վայրերում, ուր տիրապետում են տեղառարման գործընթացները, հողերի մեակցիան (PH) թթու է: Այդտեղից լվացվող տարրերը իջնում են և կուտակվում են լիմնիքի բացասական ձևերում՝ առաջացնելով կալցիումի, կալիումի, նատրիումի և այլ կարբոնատներ, սուլֆատային և քլորիդային կուտակումներ: Այստեղ

հողերի ունեցիկան հիմնային է: Նախաբերությանն են ոչ բարձր լինալանջերը՝ հատկապես հրաբխային շրջաններում, ծածկված են կարբոնատային հողմնա-հարման կեղևով: Ցածրադիր գոգերում հանդիպում են սուլֆատների (գիպս), քլորիդների (կերակրառազ), նատրիումի կարբոնատացված (սոդա) հողատեսակ-ների կուտակում: Հայաստանի հանրապետությունում հողերի ամենալավ դասա-կարգումը կատարվել է Ռ. Էդիսյանի ղեկավարած գիտառչավախմբի կողմից: Առանձնապիղ նա հողային 8 գոտիներ՝ 15 ծագումնատեղերով, իրենց ստորադաս տարատեսակներով և կազմվել 1 1.2(XXX)0 մասշտաբի հողերի քարտեզ և առ-լաս: Նշված 8 գոտիները նմանակերպ տարածվում են նաև ամբողջ լինաշխար-հում և լիովին համընկնում են ուրիշ հետազոտողների դասակարգմանը (տես քարտեզ 7):

3. Հողային գոտիները: Հայկական լինաշխարհի հողատեսակների տիպն-ըը բաշխված են ըստ բարձունքային գոտիականության: Ամենացածրադիր մասը կառավից ծովի Գնդան (Գիլան) և Լենքորսյան ծովափն է (-26մ): Այն ձգվում է ավազահողային նեղ շերտով, որը հիմնական տեսակների մեջ չի մտնում:

Խոնավ մերձարևմտալեռնային հողերը հիմնականում սահմանափակ տարածմամբ հանդիպում են Սև ծովի ափերին, որպես կարմրահողեր, իսկ կասպից ծովի ափերին՝ որպես դեղնահողեր (500-700մ բարձրություններում): Որոշ հասվածներում ուր թթու ռեակցիան 5-6 է ձևավորվել են ենթամոխրացած կայրքահողեր և դեղնահողեր: Մեծ գետերի գետաբերաններում կան ճահնա-մարգագետնային և տղամաճահնային հողեր: Կիսաանառատային գորշահողեր ձևավորվել են Լենաշխարհի ամենալեռնային շրջաններում, որտեղ տեղումների տարեկան քանակը 250-300 մմ է: Այդպիսի պայմաններում հողագույացման կլի-մայական պայմանները աննպաստ են Հայկական Տավրոսի հարավային ստո-րոտների որոշ հատվածներում, Հայոց Միջագետքի ծայր հարավային սարահար-թերում, Մերձմիջինարաքսյան գոգավորությունների եզրային-նախալինային մասերում՝ մինչև 3.մ-ից 1500-1600 մ բարձրությունների վրա: Կիսաանառա-տային գորշահողերի մեջ մեկ այլ տեսակի հողերի տեսակ հանդիպում են Մեղրու կիրճին հարող մասերում, Մալաթիայի և Պազարջիկի գոգերի որոշ տեղա-մասերում, Ռուսիա լճաավազանի մինչև 1800 մ բարձրություններում, Միանի, Շոռի և Արդաբիլի գոգավորությունների ցածրադիր մասերում, ինչպես նաև Ահարի գոգեփոխի հատակային տարածքներում: Նշված վայրերում հողը գորշա-վուն է հունուսի 1-3%-ի պարունակությամբ, փոշիացած, իսկ հրաբխային տա-րածքներում՝ քարքարոտ-կմախքացած (ղեղր): Մարդու կողմից դարավոր մշակ-ման ենթարկվելով այդ գորշահողերը դարձել են կալտուր-ռոգելի բերքատու հողեր, որտեղ աճեցնում են յապող, դեղձ, ծիրան, նուս, թուզ, պտուղներ, բան-ջարարոստանային մշակաբույսեր: Աղուտաանառի հողերը տարածված են որոշ գոգավորությունների հատակին և ձևավորվում են քլորատսուլֆատկարբոնատային կեղևների վրա: Դրանք գյուղատնտեսության համար պիտանի հողեր չեն: Օգտա-

գործման նպատակով այդպիսի հողերից աղերի շերտը հնեացնում են ծծմբական թթվով վանալու միջոցով, սակայն նման միջոցը ժամանակավորապես է արդյունավետ: Գունտաջրերը երրից բարձրանում են ու զտորշանալով գետնի երեսին առաջացնում են աղերի (զլատերյան, կերակրի, աղայի) շերտ: Այլալի հողերը արտաքնապես չեն նկատվում այլ թաքնված են որոշ խորություններում, որտեղ առաջացնում են նատրիումի կարբոնատի քարացած զանգված: Ոչ մի բույս նրա մեջ չի կարող արմատակալել: Աղուտաալկալի հողեր կան Ուրմիա լճի հատկապես արևելյան ափերին, Դիրաբնիքի, Մծբինի, Աբարտոյան, Նախիջևանի գոգավորությունների որոշ հատվածներում՝ փոքր արիալներով, որտեղ հողերի ռևակցիան խիստ հիմնադին է (PH=8-9): Շականալուծում հողերը ամենաբնորոշաձակ տարածումն ունեն նւ տնդարաշխված են 600-1500 մ բարձրություններում: Միջինարաքայան գոգավորություններում զբաղմցնում են չոր տափաստանների 1200-1500 մ բարձրության գոտին: Ուրմիա լճի ավազանում այդ հողերը բարձրանում են մինչև 1800 մ, Տարվոսի հարավային ստորոտներում՝ 800-1000 մ: Շականակազույն հողերը տարածված են նաև Փոքր Հայքի, Վասպուրականի բարձրալանդակներում, Մալաթիայի, Ալրիստանի, Մարալանի, Կարմրանի, Երզնկայի գոգավորություններում, ինչպես նաև Արածանիի, Արաքսի ավազանների դաշտերում, Եփրակի դաշտում, Մնան, Վան լճերի շրջակա լեռնալանջերին: 600-700 մ բարձրությունների վրա տարածված են Փոքր Կովկասի դնպի Կուր-Արաքսի դաշտավայր իջնող լանջերին: Այդպիսի հողերը ձևավորվում են տարրական 400-600 մ մ տնդումների առկայության պայմաններում եւ անցումնային են դնպի սևահողերը: Շականակազույն հողերում հումուսի պարանակությունը տատանվում է 2-4%-ի սահմաններում: Ունեն թմթմ կավային կազմ, իսկ հրաբխային լեռնալանջերին՝ քարքարոտ են: Հիմնականում մշակում են հացահատիկային եւ որոշ տնխնիկական (ծխախոտ, շաքարի ճակրնդեղ, եգիպտացորեն) մշակաբույսեր, իսկ ռոզման դնպում նաև: պտուղ-բանջարեղեն, ընդավորերը: Լեռնային սևահողերը լեռնաշխարհում տնդարաշխված են տարրական 500-700 մ մ թնտրորտային տնդումներ ունեցող վայրերում՝ 1600-2400 մ բարձրությունների վրա: Հումուսի պարունակությունը այստեղ 4-6%-ից հասնում է մինչև 12-13%: Մնահողերը շատ բնորի են, ունեն կնճիկային կառուցվածք, թույլ թթու են կամ թույլ հիմնային: Ձմեռնը կայուն ձնածածկի եւ ցրտերի պատճառով գետինը սառչում է, ամեան նրկրորդ կնը որոշ վայրերում հաճախ չորային է լինում: Այս հողերը համարյա լրիվ դրված են մշակության տակ եւ պիտանի են հացահատիկային, ինչպես նաև տափաստանային գոտան բնորոշ տնխնիկական մշակաբույսերի համարյա բոլոր տեսակների համար, այգնթորության եւ բանջարաբուծության համար: Ալուան մարգագետնային հողերը տարածված են սևահողերից ավելի բարձր վայրերում: Անցումը կատարվում է աստիճանաբար՝ մերձալպյան, ապա ավայան մարգագետնային հողերի: Հայկական լեռնաշխարհի հյուսիսում այդ տեսակի հողերում լեռնային գոտին սկսում է 2100 մ-ից, իսկ

հարավում՝ 2400 մ-ից բարձր վայրերում: Հողառաքացման աշյամանները այնքան էլ նւբաստավոր չեն, որովհետև ամառը կարճ է, ձմեռը երկարատև ու խիստ: Այդ պատճառով միկրոօրգանիզմների գործունեությունը սահմանափակ է: Բուսական մնացորդների քայքայումը թույլ է, դրա համար հումուսը կուտակվում է մինչև 12-15%: Հողերի գույնը դարչնագույնից սկսում է մերձալպյանում, ապա շակախակագույն դառնում ապաքան գոտում: Անտառային հողերը ձևավորվում են գլխավորապես նզրային լեռնաշղթաներում որպես դարչնագույն և գորշ անտառային հողեր, իսկ փոքր արևայններով նաև՝ նթամոխրային հողեր: Դարչնագույն հողերը տարածված են անտառների ստորին՝ ցածրադիր գոտում, բայց ծովափնյա մասերում մեծ զարգացում չունեն, որովհետև խոնավության ավելցուկ կա: Լեռնաշխարհի Ան և կասպից ծովերին հարող լեռնայանջուրին տարածված են գորշ անտառային հողերը, իսկ 1000մ-ից բարձր փշատներն անտառների գոտում՝ գորշա-նթամոխրային հողերը: Դարչնագույն հողերը ունեն հզոր հորիզոններ, որտեղ հումուսի պարունակությունը 5-8% է, իսկ հողերի ռեակցիան չնզոք է կամ թույլ հիմնային: Դարչնագույն հողերի ընդարձակ տարածքներ կան ոչնչացված անտառատեղերում: Անտառային գորշահողերը հյուսիսում սկսում են 1000 մ-ից, տեղ-տեղ 1100-1200 մ-ից, իսկ հարավում՝ 1300 մ-ից և ձգվում են մինչև 2100-ից 2400 մ-ը՝ մերձալպյան գոտին: Գետահովտային հողեր հավաքական անվանումով այս հոգատնակները զարգանում են գետահովիտների բավական հզոր գետերով և գետա-լճային նստվածքների վրա: Հովտադարձանդային այդ հողերը ձևավորվում են տարբեր հատկանիշներով, քանզի տեղաբաշխված են տարբեր բնակլիմայական աշյամաններում: Հիմնական օրինաչափությունն է, որ տվյալ գոտում ձևավորվում են բարձունքային գոտիական հատկանիշներին մոտ գետահովտային հողեր: Դրանց մեջ առանձնացվում են ճառագային և մարգագանտնային հողերի տիպերը:

ԳԼՈՒԽ VII ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայկական լեռնաշխարհում բուսական աշխարհը իր էվոլյուցիոն զարգացման հետ միաժամանակ կրնի է նաև հարուստ բուսական ֆորմացիաների ազդեցությունը, սրի շնորհիվ հարստացել է տեսակների քանակով: Տեսակների քանակի գուտ մեխանիկական աճի գործընթացում այստեղ՝ բուսաշխարհի կիզակետում, աստիճանաբար հարմարվելով բնակլիմայական տնդական պայմաններին, առաջացել են նոր տեսակներ: Միևնույն ժամանակ պահպանվել են միլիոնավոր տարիների ճանապարհ անցած այնպիսի տեսակներ, որոնք այսօր ներկայացնում սահմանափակ արևալ են գրադնցում (էվկալիպտ, սնկվոյա, լատենի, ձիթենի, մագնոլոյա, տոսախ, սյտենի, սոսի և այլ): Բուսատեսակների քանակը այստեղ հասնում է 4000-ի: Այս բացառիկ բազմազանության հարստությունը պայմանավորված է լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով, բարձրադիր վերին լեռնաշխարհի գոտիականությամբ, կլիմայի տարրեր տիպերի առկայությամբ և վերջին 8-10 հազ. տարիներին՝ մարդածին ազդակով հյուսիսից Հայկական լեռնաշխարհ են թափանցել Եվրոսիբիոսկան (Տիրկուսթրոնալ) բարեխառն բուսատեսակները, հարավից՝ Հիբկանյան (Իրանա-թուրանական) մարզի չորսունը (քսերոֆիլ) կիսաանաբատային և տրազանտային (տափաստտանային) համակենցությունները, արևմուտքից՝ Միջերկրածովյան մերձարևադարձային ջերմասեր տեսակները (նկ. 26): Այդ տեսակներից կարող ենք ասել, որ Հայկական լեռնաշխարհը բուսատեսակների խայտարհնության կատարյալ թանգարան է: Նրա տարածքի գիտական ուսումնասիրման հետաքրքրությունը սկսել է միջին դարերից: Այստեղ այցելել և բուսամուշներ են հավաքել հայտնի բուսաբաններ Պ.Տուրնեֆոր, Կ.Կոխր, Տրասթվետտերը, Վ.Սապոմոնիկովը, Ն.Կուզնեցովը, Ա.Գրոսգեյմը, Ա. Թախտաջանը, Լ. Մախարաձեն, Յ. Մուլիքջանյանը, Լ. Հարությունյանը, Կ. Խուրշույանը և ուրիշներ: Հայկական լեռնաշխարհի բուսածածակի կարևոր առանձնահատկություններից է էնդեմիզմը (բնագոծինները) և Լնգևիկների առատությունը, որոնք կազմում են ավելի քան 200 բուսատեսակ: Հայտնի բուսաբաններ Դեկանդոլը, Վավիլովը, Ժուկովսկին գտնում են, որ Հայկական լեռնաշխարհը համարվում է ցորենի, գարու, հաճաբի, սևերկնանի, ոսպի, խնձորենու, տաճենու, խաղողի, սևիկուիլի, ծիրանի, դեղձի, նախ, նշի, թզի և մի շարք այլ բույսերի տեսակագոյացման համաշխարհային խաչոր կենտրոն: Օրինակ, աշխարհում տարածված տանձենու 60 տեսակներից 15-ը Հայկական լեռնաշխարհում ծնված ընդոծին (էնդեմիկ) են: Ռեզիլտենյի տեսակային բազմազանությունը նույնպես առանձնահատկություն է: Ռեզիլտային (մասունքային) են համարվում այն տեսակները, որոնք պահպանվել են ներկաբանական շատ վաղ անցյալից և հարմարվել են կլիմայական փոփոխություններին: Հայկական լեռնաշխարհում կազմի ժամանակաշրջանից (120-130 մլն. տարի առաջ) պահ-

արևմտյան բուսատեսակներից Պոնտոսում, Թալիշ-Գիլանում, Ճորոխի, Դեքմոյի, Աղստևի, Եփրատի, Որոտանի հովիտներում և Վան լճի ափերին հանդիպում են սևկվոյա, Էփկալիպտ, տաքսոդիում, մրտավարտ, մկնափուշ, դափնակեռաս, սրվարդ, պարիլակ, արջատկխենի, ձեկվա, սոսի, նգիպտակաճ ուռնի, անտա-
ռադին խաղող, նոննի, ձիթենի: Համաշխարհային «կարմիր գրքում» տեղ գտած 4(X) տեսակի բույսերից 86 տեսակները Հայաստանի հանրապետությունում են և անհետացման նգրին են գտնվում:

2. Բուսականության տիպերը Հայկական լեռնաշխարհի բուսական աշխարհը, ըստ հողերի նկատմամբ ունեցած պահանջկոտության բաժանվում է 3 հիմնական խմբի՝ ա) աղաւնք (հայտֆի); բ) գիպսաւնք (գիպտֆի); և գ) ավազաւնք (պրամֆի): Այժմ համառոտակի նկարագրենք բուսական համակեցությունները: Անապատային համակեցություն Այս բուսատեսակները տարածված են փոքր արևալներով, Արարատյան, Նախիջմանի դաշտերում, Ուրմիա լճի ավազանի ցածրադիր մասերում և Մծրինի գոգավորության հատակում: Դրանք խիստ չորասեր բույսեր են խորը արմատներով և հանդես են գալիս ոչ հոծ խմբերով: Աղաւնքներից են օշանները, աղաբատուկը, քաֆուրախտը, կարմրանը և մի քանի անհետացող տեսակներ, որոնք գրանցված են «կարմիր գրքում»: Գիպսաւնք տեսակները ավելի սահմանափակ տարածում ունեն: Գլխավորապես հանդիպում են միայն Արարատյան դաշտի արմնայան մասի կարմիր կավերի, և կարմրանի դաշտի (Կզըլուզենի հովիտ) առանձին տեղերում (աղածաղիկ, զուգատերև, թալ, կաթնուկ, ոգնաթուփ): Ավազաւնք բուսատեսակները արևալային փոքր կղզյակներով տարածված են գետաբերուկային (այլուփալ) ավազների մակերևույթին: Դրանցից նշանավոր են հազարատերևուկը, գեղածնկիկը, նգնապտուղը, ճայիկտուցը, զազկը:

Լիսաանապատային համակեցություն Այս բուսատեսակները տարածված են չորային շրջանների 1400-1500 մ բարձրությունների վրա՝ Ուշեայի, Վիրանշենի, Մծրինի, Մալաթիայի, Խաբերդի դաշտերում, Հայկական Տավրոսի հարավային ստորոտներում, Ուրմիայի ավազանը, Շոռի, Միանի, Մարալանի, Արարատյան, Նախիջմանի դաշտերում, Կոզովտում, Ահարի, Խոյի գոգավորություններում: Լիսաանապատային բույսերը կարճակյաց են՝ ծլում են գարնանը, մինչև ամռան կեսը սերմնակալում են: Կան ավելի կարճատև՝ չորս շաբաթվա կենսա-
ցիկլի բույսեր և այնպիսիները, որ աշնանային խոնավության պայմաններում շարունակում են աճը և սերմ են տալիս: Ամենատարածված բույսը օշինդրն է՝ մի քանի տարատեսակներով: Ամենալավը անուշահոտ օշինդրն է (յավջան), որը դաշտում կանաչ մարգագետնի տարվոթություն է թողնում: Մյուս բուսատեսակներից բնորոշ են կապաթը, դաշտավուկը, լնդայախտը, կոխիան, ճոճուկը, սագասոխուկը, կակաչը, փառատերևը և թթթուկը: Լեռնաշխարհի կիսաանապատների կմերի են թառանգները և առանձնացնել չոր տափաստաններից, որպես կոմսիորոշիչ է հանդիսանում փետրայախտը: Կիսաանապատների մեծ

մասը դարավոր մշակման ենթարկվելով դարձել են կոյտուրական բնատա-
րածքներ՝ շնորհիվ արհեստական ռոտզման: Ֆրիգարային (իշաբարձիկավոր)
համակենցություն: Այս բուսականության համակենցություններ կան կիսաանա-
պատային շրջանների նախալեռնային լեռնալանջների հարավահայայց լանջերում,
որտեղ բնորոշ են չորասնր, մանրատներն ու փշատ թփերն ու բարձիկանման
բույսերը (զագ, ռզնաթուփ, նշենի, վայրի տանձենի, պալապան դժնիկ, խնկենի,
ունար, մատրենի, ցարի, կղնապակ, ուրց, արևդախտ, արաքսյան բալենի ու այլ
տեսակներ), որոնց մի մասը վաղուց օգտագործվում են բժշկության մեջ որպես
դեղարույսեր: Լեռնաշխարհում դրանց տարածման բնորոշ շրջաններ են Արաքսի
միջին և ստորին հունարների ավազանները, Ուրմիա լճի ավազանի լեռնալան-
ջերը, Շահրերդ և Մատիուս լեռնաշղթաների նախալեռնային հարավահայաց
քարքարոտ ստորոտները: Տափաստանային համակենցություն: Այս տիպի բուսա-
կանությունը խոտային է: Լեռնաշխարհի հյուսիսում դրանք բնորոշվում են միջին
բարձրության լեռնային գոտին, սակայն տեղ-տեղ իջնում են մինչև 500մ: Դեռափ
հարավ և հարավ-արևելք աստիճանաբար բարձրանում են, զբաղեցնելով 1300-
1500) մ, իսկ որոշ շրջաններում (Մավաղան, Սոհունդ, Վան լճի ավազան, Ջան-
գեկուր) ձգվում են մինչև 2200-2500 մ: Տափաստանները Հայկական լեռնաշխար-
հում զբաղեցնում են տարածքի շուրջ 42%: Այս համակենցությունում հաշվվում է
26 ենթատիպ: Ամենաբնորոշ խոտոբույսային տափաստաններից են կծմախոտա-
յին, շողախոտային, փնտրախոտային, բոշխային, տրագանտային, օշինդրային,
սեզային, հացազգա-տարախոտային և մի քանի այլ տիպերը: Տափաստանների
տարածման ստորին սահմանաշերտը, որ հարում է կիսաանապատներին, հա-
մարվում են չոր տափաստաններ, իսկ վերին ենթագոտին՝ հացազգա-տարա-
խոտա-մարգագեղձնային: Ուղարձակ տարածություններ են զբաղեցնում չոր
լանջերի տրագականթային տափաստանները: Այդտեղ 8-10 հազ. տարի ասաց
մարդը սկսել է մշակել տափաստանը և նրա բնական տարածքները աստի-
ճանաբար փոքրանալով սեղմվեցին: Այժմ լեռնաշխարհում դրանք պահպանվել
են միայն մեծ թեթություններում, որտեղ վաղելի ենարավոր չէ: Բանքոֆիլ (չորա-
սեր) համակենցություն: Բուսականության այսպիսի տիպը զբաղեցնում է նոսր ան-
տառների գոտին, որը անցողիկ է, որոշ տեղերում կիսաանապատներից դեպի
անտառ, որոշ տեղերում՝ տափաստանից դեպի անտառ: Այս տիպը ներկայացված
է ցածրահասակ ծառերի ու թփերի նոսրուտներով, լուսավոր են: Առավել
տարածված են Փոքր կովկասի արտաքին լանջերին, Ջանգեղուրում, Հայկական
Տավրոսի, Եշիլլումակի, Ներքին Տավրոսի, Հայոց, Լյատիշաց, Գառտակ, Արմա-
ծին, Շահրերդ լեռնաշղթաների հարավահայաց ստորոտներում՝ 800-1200 մ
բարձրություններում: Բնորոշ ծառատեսակներից են փռչնին, պիստակենին, հո-
նին, նռնենին, արոսնին, իսկ թփատեսակներից հասմիկը, դժնիկը, ցախակեռտը,
ցաքին, ասպիրակը: Առանձին արձալներով չորասնր նոսր անտառները, որտեղ
տարեկան տեղումների քանակը չի անցնում 450 մմ-ից, դրանց սահմանը ձգվում է

մինչև 2000 մ բարձրությունը (Մեղրու կիրճում, Գուտտակ, Արմածին, Գորշասար լեռնաշղթաների հարավային լանջերին, Կաղզվանի, Մակուի, Անձախի կիրճերում ևս փոքր կոչակներով այլ վայրերում): Անտառային համակցություն: Հայկական լեռնաշխարհում այս գոտին զբաղեցնում է տարածքի ընդամենը մոտ 10%-ը, որոնք հիմնականում տարածված են նոսրային լեռնաշղթաներին, սրտնդ տնդումների տարնկան քանակը 700 մմ-ից ավելին է: Անտառները հիմնական զանգվածներով են ստացված Արևելյան Պոնտոսի, Փոքր Կովկասի, Թաիշ, Գեղամաց, Հայկական Տավրոսի, Կորդվաց լեռնաեռակարգների և Եշիլլումակ, Դեննկ, Շավշեթ, Արսիան լեռնաշղթաները: Արևելյան Պոնտոսում անտառը սկսում է ծովափից և հասնում է մինչև 2200 մ բարձրությունը՝ հստակ արտահայտված վերընթաց գոտիականությամբ: Մինչև 500մ բարձրություններում անտառը համարյա լրիվ ոչնչացվել է մարդու կողմից: 500-1000 մ-ում տարածվում են խոնավ մերձարևադարձային լայնատերև, մշտադալար ծառատնտակներ՝ դափնի, մագնոլիա, էվկալիպտ, դեկորատիվ արմավենի, շագանակենի, իսկ 1000 մ-ից վեր՝ բարեխառն գոտու լայնատերևներից լաստենի, հաճարենի, բոխի, յհաններ, դափնակնուս, մրտավարդ, բողմդ: Ավնի վեր, սրանց խառնվում են նիլնի, նիլնենի, սոճի և անտառը դառնում է խառը: Խառն անտառաշերտից վեր տիրապետող են փշատերևները, իսկ անտառի վերին սահմանում ծառերը դառնում են գաճաճ ու ծուճուճի: Պոնտոսի միջին գոտու նոյնատիպ անտառներ են տարածված Եշիլլումակ, Դեննկ, Շավշեթ, Արսիան լեռնաշղթաների լանջերին և ձորոտի լեռնաշղթայի որոշ հատվածներում: Փոքր Կովկաս լեռնահամակարգում անտառի ստորին սահմանը սկսում է հյուսիսում 500 մ-ից, սակայն զանգվածաբար 800-1000 մ-ից և հասնում է մինչև 2200 մ-ը: Անտառը բաժանվում է ներքին, միջին և վերին հարկերի: Ներքին հարկում ցածրած մացառային ծառատնտակներն են՝ դաժի (արևելյան բոխի), վրացական կաղնի, հագնի, բոխի, թխկի, իլենի, սզնի, հռնի, ճապի, տյալենի (պնդուկ), գեճենի, մռչի և ազնվամորու թփեր: Միջին գոտին զբաղեցնում է 800-1900 մ բարձրությունները, որտեղ անտառների տեսակային կազմում գերակշռում են հաճարենին ու կաղնին՝ խառնված բոխու, թխու, յորենու, կաղամախու, ցախակնուսի և ննթառնատային թփատնտակների հետ: Վայրի ստորատուններից շատ են տանձենին, խնձորենին, ընկուզենին և շլորենին: Հաճարենին Մշավի լեռնաշղթայից արևմույշ չի հանդիպում, այն չլուսան: Զանգեզուրյան անտառներում: Միջին և վերին հարկերի անցագոտում Փոքր Կովկասի հյուսիսային մասի լեռնաշղթաներում հանդիպում են սոճու անտառակների (Բորժում, Ախալցխա, Լոսի, Շավշեթ, Արտանուճ, Սարիղամիշ): Վերին գոտում ձմռան նրկարատնությանը դիմանալու շնորհիվ աճում են ցրտադիմացկուն ծառատնտակներ՝ կաղնի, բոխի, թխկի, կնչի, արոսենի և այլ տեսակներ: Հանդիպում են նաև ռիկկտային ծառատնտակներ՝ ձնկվա, կենի, տոսախենի, թփակաղնի և արջընկուզենի:

Հայկական Տավրոս և Կորդվաց լեռների անտառները ավելի հզոր ու հարուստ են տնտեսական կազմով: Լայնատերևների հետ խառնված են միջերկրածովյան տնտեսներ: Հիմնական ծառատնտեսակները կաղնին, շագանակենին, ծփին, ընկելզենին են և վայրի ստղատները՝ տանձենին, խնձորենին, սալորենին, թթենին և թզնին: Առանձին վայրերում հանդիպում են յոբնի, քարդի, մրտնի և վայրի փշատերև վայրի, գիհի, կնի: Այստեղի անտառները մթին են ու դժնի: Ենթանտառ նույնպես հարուստ է ու փարթամ: Մասունքային ծառատնտեսակներից հանդիպում են նզիպտական ուժնի, տաքսոդիում, թիթնի, արջատիլենի: Մերձկասպյան (Թալիշ-Գեղմանց) անտառները տիպիկ հիբկանյան են և նմը շերտով տարածվում են միայն ծովահայաց լանջերին՝ 200-2800 մ բարձրության վրա, իսկ որոշ տեղերում ընդհուպ ջրբաժանային տեղամասերը: Տիպիկ մերձարևադարձային անտառներ են կաղնու, հաճաքնու, և բոխու գերակշռությամբ: Հանդիպում են շագանակատերև կաղնի, երկաթածառ և ձնկվառ, որոնք մասունքային են: Միջնաշխարհում խոնավության սեզանի սրտածառով անտառային գոտին բացակայում է: Այն հանդիպում է միայն որոշ լեռնաշղթաների հյուսիսային կողմնադրության լանջերին, որտեղ տարեկան տեղումների քանակը 650-700 մմ է ներկայացված է կղզականի ձևով (Թադկունյաց, Դերսիս, Գուստակ, Արմածին լեռնաշղթաներ): Հիմնականում դրանք լայնատերև ծառերից են բաղկացած (կաղնի բոխի, հաճաքնի և հացնի), բացառությամբ Մերձրաց լեռների ուր տարածված են փշատերև ծառատնտեսակներ՝ սոճի, մայրի: Մերձալպյան մայրգագնտիները, համակցությունների գոտին տեղադրված է հյուսիսում, անտառային գոտուց վեր, իսկ հարավում և Միջնաշխարհում, որտեղ անտառային գոտին բացակայում է՝ մարգագնտիների գոտին տեղաբաշխված են տափաստանային գոտուց վեր: Հյուսիսում այն սկսվում է 1900-2000 մ-ից և հասնում է մինչև 2500-2600 մ բարձրությունները: Հարավում, չորության ավելացման պատճառով, դրանք գրավում են ավելի բարձրադիրք տարածքներ՝ 2500-3000 մ: Մերձալպյան մարգագնտիները առավել փարթամ են ու տնտեսային կազմով ավելի հարուստ, կա մոտ 200 տնտես, իսկ հրաբխային և տեղատարումային բարձրավանդակներում՝ մինչև 250 տնտես: Այստեղ լեռնամարգագնտանային հողերի վրա աճում են ճիմ առաջացնող բարձրախոտ հացազգիները, բոշխները, լոբազգիները: Սրանք ծաղկում են վաղ գարնանից (ձնծաղիկ, սագառտխուկ, մկնաստի, աստղաշուշան, հրանուն, անմոռուկ, վարդակակաչ, երեքնուկ, առվայտ, կակաչ, թթվիճ, կղմուխ, փուշ, քուքսուկ, սինդրիկ, երիցուկ, ցորնուկ, գարի, իսկ ավելի ուշ՝ դաշտավուկ, շյուրախոտ, բոշխազգիներ) մինչև ուշ աշուն, որոնք մարգագնտանի տալիս են երփներանգություն: Այդ տարածքները հիմնականում ծառայում են որպես արոտավայրեր և խոտհարքներ: Սակայն որոշ վայրերում, վաղ գարնանից անասունների արոտային արածնցման պատճառով արժեքավոր խոտատնտեսակներ ղեկընտացվում են, փոխարինվում են ցածրորակներով: Ալպյան մարգագնտիների համակցության բուսատնտեսակները տարբերվում են հյուսիսում 2600-

2700 մ-ից մինչև 3000 մ, հարավում՝ 3000-3700 մ բարձրություններում, ուր մերձձնային կամ ձնային գոտին է: Այս գոտում ամառը կարճատև է, ձնածածկույթը մնում է 8-9 ամիս: Գիշերները օդի ջերմաստիճանը 0°-ից ցածր է: Խոտաբույսերը ցրտադիմացկուն են, զետնատարած, որի շնորհիվ գորգի տարվարություն են թողնում: Բուսական համակենցությունները նույնն են ինչ մերձալպյանը, սակայն տեսակային կազմը ճոխ չէ: Տնդ-տնդ լանջերը լերկացած են կամ խիստ քարքարոտ: Աճում են զանազան գույների ծաղկախոտեր՝ փայլասննի, շյուղախոտ, կուծկոտյուկ, գնարբուկ, տատասկ, զանգակ, ճռճուկ, անթաժամ, խմբախոտ, գայլաթաթ, սառուկ և այլ տարախոտեր: Հայկական լեռնաշխարհի հարավային լեռներում տեսակային կազմը շնայած ավելի հարուստ է, բայց համեմատական շրջության պատճառով արդյունավետությունը պակաս է: Ալպյան գոտուն բնորոշ է նաև ժայռային բարձիկանման բուսականությունը, որոնք աճում են քարացրճաններում, քարակառվաշեններում, ժայռերի ճեղքներում: Հայհճային համակենցության բուսականությունը բնորոշ չէ Հայկական լեռնաշխարհին, սակայն ընդհանրի ցածրադիր մասերում, որտեղ պայմանները նպաստավոր են, հանդիպում են ճահիճներ: Ճահճային արեալների ոչ մեծ կղզակներ կան ՄԱԻ ծովի ափին, Կուրի վերնազգավառում (Գոլմեի գոգ), Արփի լճի գոգավորությունում, Կարնո, Լոռվա, Արարատյան, Նախիջմանի դաշտներում, Կոզովում, Ուրմիա լճի ավազանում, Ուսիբանքում (Կոռվից լեռներ), Գեղայքում (Մեֆիդուղի գետաբերանային ղևտայում), Արվաստանում (Արևմտյան Խաբուրի վերին հոսանքի ավազան): Ծովի մակարդակից տարբեր բարձրությունների վրա գտնվող ճահիճները ունեն տարբեր բուսականություն, որը կախված է խոնավության պայմաններից: Չորային վայրերի ճահիճներում աճում է եղնզ, հուրհրան, ջրոսպ, բյուրատներևուկ, ջրկուտն (Արարատյան, Նախիջմանի, Արվաստանի և Ուրմիայի ավազաններում): Ավելի բարձրադիր ճահիճներում եղնզը բազմակայում է, աճում է շամբ, բոշխեր, ճահճախոտ, մամուսներ, իսկ մի քանի ճահճավճերում նաև ջրասոճի, ջրիմուսներ, ջրոսպ, շերմփուկախոտ, բյուրատներևուկ:

Հայկական լեռնաշխարհի բուսածածկը ունի պարզորոշ արտահայտված վերընթաց բարձրադիր գոտիականություն, սակայն կան նաև ինտրազոնալ (ներգոտիական) երևույթներ, երբ որևէ բուսագոտում աճում են այդ գոտուն ոչ բնորոշ բուսատեսակներ: Օրինակ, մարգագետնում աճում է անտառ կամ կիսաանտառում՝ կա ճահճաբույս (տե՛ս քգ. 8): Մշակովի բուսականությունը լեռնաշխարհում տարածվում է կիսաանապատներից մինչև ալպյան մարգագետինները: Հազարամյակների ընթացքում մարդը անընդհատ յուրացրել է նորանոր բուսատարածքներ, ստացել նոր տեսակներ, ընտելացրել վայրի շատ բուսատեսակներ, փոխարդյուններ կատարել դրանց արևալներում: Տափաստանում մշակում են հագահատիկ (ցորեն, գարի, տարեկան, կորնկ, հնդկացորեն, կտավատ), բանջարանաբուսականային մշակաբույսեր (կարտոֆիլ, կաղամբ, բոդկ, լոլիկ, զագար, վարունգ, լոբի, ճակնդեղ, սիսեռ, ոսպ, բիբար, կանաչիներ, սնկ, ձմերուկ, դրում):

Տարածված արդյատուրներ են տանձենին, խնձորենին, սալորենին բայենին կենսա-
սննին, ծիրանենին և հատապտուղները: Կիսանապտուներում ու չոր տափաս-
տաններում մշակում են բամբակ, բրինձ, Եգիպտացորեն, խաղող, դեղձ, ծիրան,
սնդկուիլ, նուռ, թուզ, նուշ, տանձ, խնձոր, թուրք, հունաք, փշատ, ձիթենի և: բանջա-
րաբուստանային մշակաբույսեր, որոշ հատապտուղներ, նթնրայուղատուներ՝
խորդենի, վարդ, չիչխան, գետնանուշ, արնածաղիկ, ծխախոտ, ընդ որում ծխա-
խոտը բարձրացվել է մինչև 2200 մ: Մեծ և կասպից ծովափերին մշակում են
թեյ, լիմոն, մանդարին, ձիթենի, արմավ, խորմա, ծխախոտ, տունգ, կանևի,
քնջութ, բրինձ, Եգիպտացորեն, ափիոն, հատապտուղներ: Դեռևս նոր քարի
դարից մարդը կենցաղում օգտագործել է դեղաբույսեր, որոնք այնքան աստուրքն
աճում են լեռնաշխարհում (սզնի, դժնիկ, գիլի, ծորենի, մասրենի, մոշ, հոն, մոռ,
փշարմավ, լերդախոտ, կոկոշ, մշկեղեց և այլն): Բուսաբուսական ուսումնասի-
րությունները բազմապատկել են դյանց ցուցակահոսները (լոշտակ, ծովաբողկ,
ցախավիուկ, անանուխ, կապառ, հալալառ, բենչի և այլն): Հայկական լեռնաշ-
խարհի բուսաբուսությունը ծաղկում է ապրել հետկապեն միջնադարում: Նշա-
նավոր ներկայացուցիչներն են՝ Գր. Մազրոսյանը, Մխիթար Հերացին, Ամիր-
դովլաթ Ամասիացին, Գրիգորիսը, Ստ. Շահրիմանյանը: Դեղաբույսերի վերաբեր-
յալ այժմ էլ կան բազմաթիվ հրատարակություններ:

ԳԼՈՒԽ VIII ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հայկական լեռնաշխարհը ամբողջությամբ մտնում է Հովարկտիկական կենդանաբանական մարզի մեջ, որն այստեղ ներկայանում է 3 օկրուգներով՝ Իրանա-Հայկական, Փոքրասիական և Կովկասյան: Այստեղ, 512 հազ. քառ. կմ-ում ավելի շատ կենդանական տեսակներ կան, քան 30 անգամ մեծ Եվրոպայում: Դա անշուշտ բացատրվում է կենդանաաշխարհագրական նրբ օկրուգների միմյանց հետ խաչվելու հաճախմամբ: Հյուսիսից այստեղ թափանցել են Կովկասյան, հարավից և հարավ-արևմուտքից՝ Իրանա-Հայկական և արևմուտքից՝ Փոքրասիական կենդանաբանական օկրուգների տարատեսակ ներկայացուցիչները (Զգ. 9): Լեռնաշխարհի կենդանական աշխարհի գիտական ուսումնասիրությունները սկսվել են 17-րդ դարում, նրբ առաջին անգամ Աբրահեմ կոնստանդինապոլսեցին քննեց դեռևս չորրորդ դարում Բարսեղ կենսաբան կազմած կենդանիների ցուցակը և համալրելով այն հրատարակեց հայերեն աշխատությունը: Հետագայում բուռն ուսումնասիրություններ ծավալվեցին կենդանաբանության խոշոր ներկայացուցիչների կողմից (Կ.Ա.Սատուհին, Կ.Կմսալը, Լալայանց, Ս.Կ.Դալ, Ս.Կ.Չերնով, Վ.Անանյան, Լ.Ա. Ավագյան և ուրիշներ): Հայկական լեռնաշխարհում կենդանատեսակների թիվը անցնում է 17 հազարից, որից ռենաշարավորներ են մոտ 460-ը, իսկ դրանցից 86-ը կաթնատուններ են, թռչուններ՝ 360, անողնաշարավորները՝ 1000, սողունները՝ 40, միջատները՝ 10 000: Գիտնականների կողմից պարզվել է, որ նոր քարի դարում լեռնաշխարհի կենդանական աշխարհը շատ ավելի հարուստ է եղել քան այժմ: Այդ են վկայում պեղածո-թրածոները, ժայռաբաղկանները և դիցաբանությունը: Դրանց զգալի մասը աղբատեղեցի և ոչնչացել են նաև մաքուր ներգործությամբ, ինչպես նաև բնակչի մայաներն ապամանների փոփոխության պատճառով: Կենդանական աշխարհի տարածման առեժնդակություններից է նրա շարժունակությունը: Այդ հաճախմամբ շատ դժվարեղում դժվարացնում է նրանց որևէ վերընթաց գոտիականության դասվել և ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական մարզի սահմանները որոշելու: Այդուհանդերձ, հաշվի առնելով կենդանատեսակների բնորոշ հատկանիշները (զվխարկորավան ռենաշարավորներինը), դրանք ներկայացվում են ըստ կենդանա-աշխարհագրական օկրուգների և ոչ թե բնատարածքային գոտիների (տես Զգ. 9):

Ա. Իրանա-Հայկական օկրուգ: Ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմույսյան մասը: Բացառությամբ մերձաբնուադարձային, մերձկասպյան ևնդ ափամերձ շերտից, մնացած վայրերում կլիմայական պայմանները չորային են: Ամենատարածված կենդանիները կրծողներն են՝ ավազամկներ, ճագարամկներ, նատառտակ, պարսկական մուկ, սուսլիկ: Խոշոր կաթնատուններից հայտնի են վարազները, որ հանդիպում են գետափնյա շամբուտներում և

չոր մացառուտներում, պատահում է նաև խոզուկը: Լեռների անմատչելի բարձր մասերում պահպանվել են բնզուարյան այծեր, վայրի ոչխարներ (մուֆլոններ): Գիշատիչներից հազվադեպ հանդիպում են մանուլ, բորենի, ընձառյուծ, շնագայլ, գորշ աքջ, գայլ, աղվես: Այս օկրուգում բավական շատ են սողունները՝ հատկապես մողեսների ևi օձերի բազմազան տեսակներ (կոփկաղյան ազամա, վիշապ օձ, մողեսակերպ օձ, տափաստանային իծ, գլորգա, նոջերավոր օձ, կրիա): Շատ հարուստ է թռչնաշխարհի իր տեսակային կազմով: Տարածված են շիկահավ, կարավ, ճնճղուկ, սխոյի, բվնճ. աղավնի, յոթ. սերինոս, մոխրագույն կտունկ, ազառավ, կաշաղակ, արագիլ, հայկական ևi կասպիական ուլար, արոս, արծիվներ, օձակեր անգղ, սարյակ, ճայ, ծիծեռնակ. պիրոլ ևi այլն: Արանց մեծ մասը ուշ աշնանը յվում են տար ներկրներ: Չտիագահաց հատուտ է միջատների աշխարհը: Իրանական լեռնաշխարհից նրբնն թափանցում են մորժիների հորդաները. որանք ամբողջովին ոչնչացնում են ցանքատարածությունները ևi տարախատ բուսականությունը: Խիստ պահպանության ևi բազմազման կարիք է զգում որդան կարմիրը, որից կարմիր ներկ են ստանում: Իրա որակական հայկական մեծաշնորհի հեշակված էր աշխարհում դեռևս նրրորը հազարամյակում: Ձկնատեսակներով հարուստ է կասպյան ավազոտը: Արաքս ևi Մեֆրդաղ գետերում հանդիպում է լորո, գայլածուկ, իսկ մյուս գետերում՝ կարմրախայտ, բնդլու ևi այլ տեսակի ձկներ:

2. Փոքրահավազ օկրուգ: Հայկական լեռնաշխարհում այս օկրուգը զբաղեցնում է ավելի ընդարձակ տարածք, ներառելով վան ևi Մուան լճավազանները, Եփրատի, Տիգրիսի, Գալլ գետի, Ճորոխի, Արածանիի ավազանները, Կզըլլուվակի, Ջահանի, Սաեանի ևi Արարիի վերին հոսանքի ավազանները: Այս կենդանաօկրուգի ամենաբնորոշ ներկայացուցիչները նույնպես կրծողներն են. ավազամկներ, դաշտամկներ, առնետներ, համստեր, նապաստակ, ճազարամկներ, սուլիկ, կուրք: Գետերի սրահային անտառներում տարածված են վարազը, նոճնակատուն, ջրասամույրը, սրնչակը, ջրառնետը, աքիսը: Մի քանի լճերում կլիմայավարժեցրած է ճահճակուղթը (նուտրիա): Գիշատիչներից հանդիպում են գայլ, շերտավոր բորենի, չախկաու, աղվես, գորշուկ: Տեսակային մեծ կազմ ունեն սողունները: Դրանք հետկապիս շատ են հարավային չորային պայմաններում: Նշանավոր են գլորգան, նոջերավոր իծը, սահնօճը, վիշապօճը, լորտուն, մողեսներից՝ կլորագլուխը, ազաման, փոքրատիական մողեսը: Համարյա ոչնչացվել են տափակազրան կրիաները: Հարուստ ու բազմազան է հավաքաշխարհը: Տարածված են կենսիխներ, արար, ճոճահավ, կաքավ, մկնաբազմ, ջրարծիվ, յոթ, քարավաքավ, փափան, արոս, ուլար, արագիլ, կտունկ: Լճերի ու ճահիճների շրջաններում՝ վայրի բաղեր, ճայ, ձկնկուլ, սազ, կարոսպ, նրբնն այցելում են ֆլամինգոներ: Օկրուգի անցողիկ սահմանաշերտում ապրում են անգղներ, արծիվներ, բու, կկու, ազառավ, հոպուպ, սարյակ, ծիծեռնակ, դրախտապան, տխակ, կաշաղակ, արտույտ, տատրակ ևi այլ տեսակներ: Լճերում բազմանում են տառնիս

(ւլան լճում), իշխան, կողակ, սիզ (Սևան լճում), ծածան (Չլքի, Արվի, Գայլատու, Դապաթափա նն): Գևտերում տարածված են կարմրախայտը, կողակը, սիզը, բնդյուն, կարմրակր, օձածուկը և այլ տեսակներ: Ծառ հարուստ է նաև միջատների աշխարհի՝ բզկեցներ, ճարտներ, մնդուններ, ճանճեր, սարլուք: Հանդիպում են նաև կարիճ և մորմ, ֆալանգա: Այս օկրուգում է գտնվում անգորական այծերի արևալը, որն այժմ արգելափայրային հսկողության տակ է:

3. Կովկասյան օկրուգ: Հայկական լեռնաշխարհում գրադնցում է Արեւա-յապոնտական, Անտիպոնտական, Փոքր Կովկասյան լեռնահամակարգերի լեռ-նալանջերում տարածված անտառային շրջանները և Միջնաշխարհի առանձին վայրերի անտառակղզիակային փոքր արնալները: Կաթնասուններից այստեղ բնորոշ են եղջերուն, այծյամը, վիթթը, քարայծը, գորշ այջը, ոզնին, վարազը, անտառակատուն, լուսանը, գայլը, աղվեսը: Մանր կրծողներից են սկյուռը, նա-ւրաստակը, սամույրը, անտառամուկը, առնետը, խլուրդը, ժանտաքիսը: Համե-մատարար բազմազան է թռչնաշխարհը: Տարածված տեսակներից են շիկահավը, մալբախակը, ցախաքլորը, փայտփորը, անտառային սիտնդը, երաշտաեհավը, դեղևախորիկները, կկուն, ծվծվանը, արտույտը, սոխակը, տառարակը, քուն, ագոսվը, կաբավը, լորը, կաշալակը, սերինտը, սարցակը, խածկտիկը, արօսը և այլ ուրիշներ: Միջատներից տարածված են բզեզներ, տիգեր, ճարտներ, մնդուններ, մրջյուններ, ճանճեր, սարդեր, ճիճուներ, սրդեր, օրանք հիմնականում կեր են հանդիսանում թռչունների համար: Սողուններից հանդիպում են մողես, յորտու, կրիա: Համարյա բոլոր լճերում կա ծածան ձուկ, խնցղետին, խաշափառ, իսկ որոշ լճերում կա տգրուկ: Որսի միջոցով շատ կենդանիներ ոչնչացման վտանգի մեջ են (մոտ 300), իսկ շատ շատերը գրանցված են «Կարմիր գրքում»: Սահմանված են որսի սնգոները, սահմանափակումներ, արգելքներ, կազմակերպվել են արգելոց-ներ և արգելափայրեր:

Հայկական լեռնաշխարհում հայտնի են Դիլիջանի, Գառնիի, Ուրծի, Էրե-թունու, Խոսրովի, Շիկահողի (ՀՀ-ում), Կինտքիշի, Բորժոմի, Ալզնտի (Վրաստ), Էն-զնիի (Իրան), Մարդինի և մասամբ Անգորայի (Թուրք.) արգելոցները:

Գ Լ ՈՒ Յ IX ԲՆԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՅՈՆԱԿԱԿ ԳՈՏԻՆԵՐԸ

1. Ընդհանուր բնութագրությունը. Բնատարածք (օտար անվանումով լանդ-
շաֆտ), լրացը գերմաններն է, նշանակում է բնական տարածքային համալիր,
աշխարհագրական թաղանթի մի հատված, որտեղ երկրաբանական հիմքը,
մակերևույթի ձևերը, կլիման, ջրերը, եղը, բուսականությունը, կենդանական
աշխարհը և մարդու գործունեությունը միախառնված համալիր են ներկայացնում,
որոնք տարբերվում են հարևան բնատարածքներից: Լեռնային երկրներում,
հորիզոնականության զոնայականության ֆոնի վրա, ծնւավորվում են վերընթաց-
բարձունքային բնատարածքային գոտիներ՝ ցածից դեպի վեր, այնպես, ինչպես
երկրագնդի բնական գոտիները՝ հասարակածից մինչև բևեռներ: Ջոնաների
հերթականությունը գրեթե նույնությամբ, չնչին քաջառություններով, կրկնվում է
լեռներում, որոնք էլ կոչվում են ազոնալ գոտիներ (տե՛ս Զգ. 10): Բնատարածքները
ամենատուր, թե՛ հարթավայրային և թե՛ լեռնային երկրներում խմբավորվում են
տիպերի մեջ և ներկայացնում են գոտիներ կամ զոնաներ (օրինակ՝ տունդրա,
տափաստան, անապատ, տայգա և այլն): Հայկական լեռնաշխարհը գտնվում է
մերձարևադարձային լայնական զոնայականության ազոնալ գոտում, որտեղ
բնատարածքային գոտիների ձևավորման հիմնական գործոններ են դառնում
տեղի բարձրությունն ու լանջերի կողմնադրությունը, որոնցով էլ պայմանա-
վորվում է կլիման: Կլիմայից էլ ֆունկցիոնալ կախվածություն ունեն ջրերը,
հողերը, բուսական և կենդանական աշխարհը: Աշխարհագրական թաղանթի
տարբեր հատվածների բնատարածքային ուսումնասիրությունները սկսվել են 20-
րդ դարում, որը բուռն զարգացել է հատկապես խորհրդային միությունում:
Մթնոլորտային խոնավացման հարցի քննարկմամբ զբաղվել են Գ.Սելյանինսկի,
Ա.Գրիգորևի, Մ.Բուդիկոն, Վ.Պոպովը, Ն.Իվանովը, Ա.Տորոնովնյաը, Ա.Մխիթար-
յանը, Ա.Թամազյանը, Դ.Շաշկոն: Անդրկովկասում հետազոտող գիտնականները
բացահայտել են վերընթաց գոտիականության ցայտուն արտահայտված 2 տիպ:
Ա. Առաջին տիպի մեջ ներառվում են լեռների արտաքին հողմնահայաց լանջերի
բնատարածքները: Բ. Երկրորդ տիպի մեջ մտնում են լեռների ներքին՝ ոչ հողմա-
հայաց լանջերի և փակ զոգավորությունների բնատարածքները: Յուրաքանչյուր
բնատարածքային տիպին բնորոշ են 2 ինքնուրույն շարքեր, որոնք միմյանցից
տարբերվում են: Այդ շարքերից ամեն մեկը իրենց մեջ կարող են բաժանվել սովնի
ստորադաս բնատարածքային միավորների՝ տեղանքների, տեղամասերի, ֆա-
ցիաների: Այդ օրինաչափության հաշվառմամբ Հայկական լեռնաշխարհը բա-
ժանվում է բնատարածքային արտաքին լեռնալանջերի և ներքին (Միջնաշխար-
հի) լեռնալանջերի տիպերի (Նկ. 27):

Ա. Արտաքին լեռնալանջերի բնատարածքների տիպեր: Հայկական լեռնաշ-
խարհում բնատարածքային այս տիպի մեջ որոշակիորեն առանձնանում են



Նկ. 27. Առաջավորասիական տարածաշրջանի
 ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական
 սիավորումը

4 շարքեր՝ 1. Պոնտա-մերձսևծովյան, 2. Փորկյուկաս-մերձկասպյան, 3. Արմա-նա-Շահրերոյան, 4. Տավրո-միջերկրածովյան; Ստորև դրանք ներկայացնում ենք շարքերով: Այս տիպի բնատարածքների գլխավոր տարրերիչ առանձնահատկությունը կլիմայական պայմանների մեղմությունն է և տարեկան թափվող տեղումների համեմատական շատությունը, որի շնորհիվ անտառային տարածքները այստեղ ավելի ընդարձակ են: Սակայն արտաքին լեռնալանջերի բնատարածքներում նկատվում է բնութագրական առանձնահատկություն՝ հյուսիսի և հարավի բնատարածքների միջև: Նկարագրենք այդ տարբերությունները առանձին-առանձին: 1. Պոնտա-մերձսևծովյան ցնատարածքների շարք: Այս շարքի մեջ ընդգրկվում են Արևելյապոնտական, Դենեկ, Եշիլլումակ լեռնաշղթաները և Մերձսևծովյան դաշտավայրի նեղ շերտը: Բնատարածքները սկսում են ծովի մակարդակից ու ձգվում են յարձրադիր գոտիները՝ ընդգրկելով խոնավ մերձարևադարձային, մերձարևադարձային, և բարձխառն անտառների, մերձալպյան, ալպյան մարգագետինների և մերձձային գոտիները: Խոնավ մերձարևադարձային գոտին տարածվում է Եշիլլումակի և Ծոթոխի գետարձրանների միջև, ծովափից մինչև 500-800 մ բարձրությունները ընդգրկող նեղ ծովափնյա դաշտավայրն ու Պոնտական լեռնաշղթայի նախալեռնային բլուրները: Ռելիեֆը մեղմ է: Դա կարված է մթնոլորտային խոնավացման գործակցի հետ: Այն արտահայտվում է Դ.Շաշկոյի բանաստեղծությամբ՝

$$Md = \sum p / \sum d$$

սրտեղ Md - մթնոլորտային խոնավացումն է, $\sum p$ - մթնոլորտային տեղումների տարեկան գումարն է (մմ), $\sum d$ - օդի խոնավության միջին տարեկան գումարը (հՊա): Գնտահովիտները ունեն լայնացած արտաբերման կոններ, իսկ տեղ-տեղ լեռնաճյուղները մխրճվելով ծովի մեջ առաջացրել են հրվանդաններ: Ըռողիան թույլ է արտահայտված: Կլիման տիպիկ մերձարևադարձային է: Տեղումների տարեկան քանակը Բաթումի մոտ 2500 մմ է, իսկ միջին բարձրության լեռներում՝ 3500-4000 մմ: Դեպի աբևույթ և արևմուտք տեղումները նվազում են հասնելով 1000-1500 մմ: Շուրջ տարին խոնավության ավելցուկ կա, որի պատճառով որոշ տեղերում ճահիճներ են առաջացել: Հունվարյան միջին ջերմաստիճանը $+4-6^{\circ}$ է, հունիսին՝ $+22-23^{\circ}$ է, խոնավացման գործակցը 1.0-ից բարձր է: Լանջերում կարմրահողեր ու դեղնահողեր են, հարթություններում՝ ննթամոխրացած ու ճահճային, որոնցում հումուսը քիչ է: Մշակում են ցիտրուսային կուլտուրաներ, պտուղներ, թեյ, ծխախոտ, խալսա, դափնի, նզիպտացորեն, սերնայուղատուներ և այլն: Բուսածածկը ամենահարուստն է ողջ լեռնաշխարհում, շատ են մշտադալարները: Որոշ բույսեր ծաղկում են 3 անգամ: Լավ պահպանված են մատուցային տեսակները՝ ձկկա, շագանակենի, արևմյան հաճարենի, կաղնի, թզմնի,

իլենի, շտուդենդրոն, ազիլիա, դարինակնատ, պնդուկենի, Խապալաս, թավլենի, մկնափուշ: Ըստ նն լիանները, մակաթույսերը: Անտառում գերակշռող լաստենին է: Խոտածածկը թույլ է զարգացած: Գոտու կենդանական աշխարհը նույնպես հարուստ չէ, շատերը ոչնչացվել են մարդու կողմից: Հանդիպում են մանր կրծողներ (խլորդ, անտառամուկ, առնետ), սողուններից՝ կրիաներ, լորտու: Ցածրադիր գոտին հարստացված է կլիմայավարժեցրած ծառատեսակներով (եփկալիստ, արմավենիներ, սամշիթ և այլ ծաղկաղեղեկորտոփներ): Այս գոտին հարուստ է ռնկրնացիան ռնուրսներով (առողջարաններ, բուժարաններ, հանգստավայրեր) և խիտ է բնակեցված (նկ. 28):

Լայնատերև անտառների գոտի: Ակտում է 500-700 մ-ից և ձգվում է մինչև 1000-1200 մ բարձրությունները: Գայլ գետի և Եշիլլումակի միջև տեղադրված լեռնաշղթաների լանջերին գոտին զբաղեցնում է 800-1500 մ բարձրությունները, դեպի արևմուտք այն աստիճանաբար բարձրանալով հասնում է մինչև 1600 մ: Լեռնալանջերի թմրությունները շատ մեծ չեն և պատված են խիտ անտառով, դրա համար տեղատարման գործընթացները շատ ուժգին չեն ընթանում, չնայած ռելիեֆը խոր մասնատված է լայն գետահովիտներով: Խոտածածկի բացակայությունը նպաստում է հողի լվացմանը: Կլիման մեղմ ու բարեխափար է: Հունվարյան միջին ջերմաստիճանը Օից 3° է, հունիսինը՝ 18-20°: Տարեկան տեղումների քանակը 1500-3000 մմ է: Ջրային հաշվեկշռում ունի խոնավության ավելցուկ, բայց լանջերի թեքության պատճառով ճահճացում չկա: Տարածված են անտառային գորշահողմը, որոնք համատարած ծածկված են արդյունավետ ծառատեսակներով՝ շագանակենի, հաճարենի, կաղնի, հացենի, թխի, կենի և փայրի սրղատուներ: Ենթանտառում մշտադալար թփերներ են, իսկ անտառը նահապեղ է: Ձնածածկույթը կայուն է և տևում է 3-4 ամիս: Տերմոսթատի խաշամը արագ քայքայվում է, չի նպաստում հումուսի բավարար առաջացմանը, որի պատճառով մերկ հողի տեղատարումը թափով է ընթանում: Գոտու մեղմաթեք լանջերը մշակվում են հիմնականում պտղատու ծառատեսակներով: Խառը և փշտոտորու անտառների գոտին Անտիպրնտական լեռնաշղթայի հյուսիսային լանջերին բարձրանում է մինչև 2000 մ, իսկ Եշիլլումակ լեռնաշղթայի արևմտյան մասում հանդիպում է միայն փոքր կղզյակների ձևով: Լանջերի թեքությանը զուգահեռ կատարվում է էռզիոն խոր մասնատվածություն, հատկապես փշատերև լուսավոր անտառում, ուր խոտածածկը բացակայում է: Հողերը գորշ անտառայինից դեպի վեր փոխվում են ննթամոխրայինի: Ձմեռն ու ամառը մեղմ են՝ հունվարի միջին ջերմաստիճանը -2-6° է, հունիսինը՝ +12-18°: Հյուսիսում խոնավացման ավելցուկ կա, հարավում՝ ոչ: Բուսաշխարհը փարթամ անտառային է: Լայնատերևներից հաճարենին, կաղնին և կենին հասնում են մինչև անտառի վերին սահմանը: Փշտոտերևներից տարածված են եղևնին, եղևենին, սոճին, իսկ ավելի վեր՝ Խապալասի, արոսնու և շտուդենդրոնի թփերներն են: Տնդ-տնդ հանդիպում է ծառիկ ու ցածրաշառակ սոճին՝ նոսր անտառի ձևով: Կենդանիներից

հանդիպում են եղջերու, այծյամ, գորշ արջ, լուսան, սամույր, սկյուռ, թռչուններից՝ մարախաձ, փայտփոր, անգղ, բու, արծիվ, ագռավ, կկու, աղափնի, սողուններից՝ կրիա և յորտու: Ըատ են մոռակներն ու տիգլերը: Այլաբան մարգագետինների գոտին Արևելյապոնտական լեռներում սկսում է 1950 մ-ից և ունի 300-400 մ բարձրության շերտ: Ամասիայի, Ջանիկի և Դենևկ լեռնաշղթաներում այս գոտին համարյա բացակայում է, իսկ Եշիլլըմակ լեռնաշղթայի 2200 մ բարձր գագաթամերձ հատվածներում, քարաթափվածքների ու ժայռերի միջակայքում հանդիպում են մերձալպյան բարձրախոտեր և զետնատարած թփեր: Գոտում կլիման գուրտ է, ձմեռը տևում է 6-7 ամիս: Հունվարի միջին ջերմաստիճանը -8-10° է, հունիսին՝ +6-12°: Հողերը մարգագետնային են, Արևելյան Պոնտում՝ նաև ճմա-մարգագետնային, սակայն սակավագոր են, տեղ-տեղ կմախքացած: Այլաբան մարգագետինների գոտին տարածվում է 2500-3000 մ բարձրությունների թեր լանջերին, իսկ որոշ տեղերում նաև զոգավոր հարթություններում, որտեղ առաջացնում են գորգեր՝ ցածրահասակ ծաղկախոտերով: Ջնածածկը տևում է 8-9 ամիս, հաճախ մոլեգնում է բուրբ, ցրտաշունչ օրերը շատ են: Ամառը զով է, կազդուրիչ նդանակով: Հողերը ճմամարգագետնային են: Կենդանական աշխարհի ներկայացուցիչները՝ մանր կրծողներ, թռչուններ, միջատներ այստեղ հայտնվում են ամառը՝ ցածրադիր գոտիներից: Մերձձնային գոտին հարավի լեռնաշղթաներում իսպառ բացակայում է: Արևելյապոնտական լեռնահամակարգում այդ գոտին սկսվում է 2800 մ-ից և անցնում են 3000 մ-ի սահմանը, հասնելով ընդհուպ բարձր գագաթային զանգվածներին: Գոտում ձյունը ետվում է հուլիսին, իսկ որոշ տեղերի գագաթամերձ հին սառցադաշտային կրկններում ձնաթմբեր պահպանվում են ամբողջ տարին: Ուլտրամառուշակագույն ճառագայթման լարվածությունը հասնում է 1.6 կալ /սմ² ըուպնում: Հունվարի միջին ջերմաստիճանը -10-12° է: Հողերը կմախքային ու քարքարոտ են, հանդիպում են ճմագուրդեր: Տեղումները հիմնականում թափվում են ձյան ձևով: Ամառը այս գոտի են բարձրանում թռչուններ և փոքր կրծողներ, նրբեմն նաև գայլեր ու աղվեսներ:

2. Փոքր կովկաս-մերձկասպյան բնատարածքների շարք: Այս բնատարածքների շարքի տիպը տարածվում է ամբողջ Փոքր կովկաս համակարգի և արտաքին, և ներքին շարի լեռնաշղթաներում, ինչպես նաև մերձկասպյան (Թալիշի, Գևղմանց) հատվածում: Բարձունքային-վերընթաց գոտիների հերթականությունը ստորին գոտում սկսվում է չոր տափաստանով 300-500 մ, իսկ անտառային գոտին տարածվում է արևելահայաց համեմատաբար խոնավ լանջերին, իսկ ներքին շարի լեռնաշղթաներում՝ մասնավորապես հյուսիսային կողմնադրության լանջերին: Բնատարածքների այս շարքում նկատվում է հետևյալ առանձնահատկությունը՝ անտառային գոտին տարածվում է նայն բարձրություններում ինչ տափաստանը հարավահայաց լանջերում: Ըատ տեղերում էլ անտառային պուրակները հերթափոխվում են անտառատափաստանով կամ նոսր անտառով: Անտառը հիմնականում լայնատերև է, որից ավելի վեր մերձալպյան, ալպյան

մարգագնտիներն են և մերձնային բնատարածքները: Չոր տափաստանային գոտին Փոքր կովկասի արտաքին շարի հյուսիսային հատվածի լեռնաշղթաներում սկսում է ծ.մ. 500 մ-ից, իսկ դեպի հյուսիս-արևելք և հարավ-արևելք տատիճանաբար բարձրանալով սկսվում է 600-650 մ-ից և տարածվում է մինչև 900-1000 մ և ավելի բարձրություններում: Մերձկասպյան հատվածում չոր տափաստանը սկսում է ծ.մ.-ից 300 մ բարձրությունից և հազիվ է հասնում 400-450 մ բարձրությունները, որտեղ խառնված է թփուտային նոսր անտառների եևտ: Այդտեղ գոտու սահմանը հստակ չի արտահայտված: Մակերևույթում նախալեռնային մեղմաթեք հարթություններ են և բլուրներ: Այս գոտում գետահովիտները փոփոխված են և արտաբերման կոններ առաջացնելով դուրս են գալիս գոտու սահմաններից, իսկ Մերձկասպում՝ ձուլվում են ցածրավայրին, տեղ-տեղ առաջացնելով ճահճոտներ՝ Անֆիդադի դելտայում: Փոքր կովկասյան համալարում կլիման կիսաչոր է (սևմիարիդ), իսկ կասպյան ծովափում՝ կիսախոսավ (սուբհումիդ): Ձմար մեղմ է, կայան ձնածածկը ոչ ամենուր է և մեկ, երկու շաբաթից հալվում է: Լեռքորանում և ավելի հարավում (Ռեշտ) ձյուն տեղում է ոչ ամեն տարի և նկածն էլ արագ հալվում է: Հունվարի միջին ջերմաստիճանը 0-ից -2° է, հունիսին՝ +26-28°: Դեպի հյուսիս-արևելք, ամառն առավելագույն ջերմաստիճանը +39° է, իսկ ուշ գարնանը և վաղ աշնանը նրբեմն լինում են ցրտահարություններ: Մթնոլորտային տեղումները հյուսիսում 600 մմ է, Մեղրու կիրճում 250մմ, Մերձկասպում՝ 800 մմ: Հողերը գլխավորապես դարչնագույն են և գորշ: Բնական բուսածածկը համարյա բացակայում է, ամբողջովին յուրացված է մարդու կողմից: Մշակում են խաղող, դեղձ, ծիրան, տաճ, թուզ, նուռ, նուշ, ծխախոտ, իսկ մերձկասպյան հատվածում՝ մերձարևադարձային մշակաբույսեր (թեյ, ջութ, տունգ, ծիթենի, լիսն, խուրմա, արմավ և բանջարեղեն): Կենդանական աշխարհի ներկայացուցիչները մանր կրծողներ են, սողուններ և կիսաանապատներից ու տափաստաններից եկած թռչուններ: Անտառային գոտին Փոքր կովկասի հյուսիսային հատվածի լեռներում սկսվում է ծ.մ. 850-1000 մ-ից և բարձրանում է մինչև 2100 մ, իսկ հարավում՝ 1000-2400 մ, հարավարևելքում՝ 500-2600 մ: Այդ տարբերությունները պայմանավորված են ջրա-ջերմային ռեժիմի տարբերությամբ: Անտառային գոտին տարծվում է ռելիեֆի մեծ թեքություններում, որտեղ մակերևույթը մասնատված է խորը գետահովիտներով և կատարվում է գծային, էռոզիոն տեղատարում: Կլիման բարեխառն է, մեղմ ձմեռներով, գոյ ամառներով: Անտառի ստորին սահմանամերձ մասերում հունվարյան միջին ջերմաստիճանները -5-8 ° է, իսկ վերին սահմանում՝ -2-3°, հունիսին՝ ցածում +18-20°, վերևում՝ +10-12°: Տեղումների տարեկան քանակը Փոքր կովկասի լանջերին 600-800 մմ է, Թալիշի և Գեղմանց լեռներում՝ 800-1200 մմ: Համապատասխանաբար լայնատերև անտառածածկում, ըստ շրջության մեծացման, հյուսիսից հարավ նկատվում են զգալի տարբերություններ: Տեսակային կազմի փոփոխությունը ավելի ցայտուն զգացվում է մերձկասպյան հատվածում, որտեղ հանդիպում են

մշտադալար տնտեսներ, շատ են մատուցալսողները: Լայնատերև անտառում դամիանտ են հաճարենին, կահնին, բոխին, հացնին, թխկին: Հանդիպում է ընկուզենի, թնդի, լորենի, ցախակնճաս, խնձորենի և: տանձենի: Շատ են թփատնակները՝ իննի, տրլսլենի, հոնի, մոշի, գիհի, մարմնի և այլն: Առանձին վայրերում հանդիպում է կեչի, թխկի, արոսենի, բենչի: Փշտերևու ծառատնակներից տարածված է սոճի (Բորժոմ, Արասթուման, Ծաղկածոր, Գյուլագարակ, Կապույտ լիճ (Գոյկզոլ), Ստեփանակերտ) և կենի (Դիլիջանի արգելավայր): Գոտին ծածկված է անտառային գորշահողմերով, իսկ դեղնահողմեր հանդիպում են միայն մերձկասպյան հատվածի անտառներում: Հարուստ է նաև կենդանակառ աշխարհը, ուր մարդու միջամտության պատճառով աստիճանաբար կորցնում է շատ տնակներ: Տարածված կենդանիներից են գայլ, գորշ աք, աղվես, նոջերու, այծյամ, կզարխ, սամույր, սլյուռ, լուսան, նապաստակ, անտառամկներ: Խայտաբղետ է թռչնաշխարհը՝ մայառի, լեռնային հնդկահավ, կարավ, փայտփոր, աղավնի, ագռավ, կաչաղակ, կկու, հոպուկ, ախավ, շիկահավ, կենձնի, խածկուիկ, ծիծուռակ: Խոնավության պատճառով սողունները քիչ են, հազվադեպ են լորտուն, մոլեք, կրիան: Բնաբուսականության նպատակով ստեղծվել են Բորժոմի, Դիլիջանի, Կապույտ-լիճի, Խոսրովի, Շիկահողմի, Էնգլիի արգելոցները և մի շարք արգելավայրեր, որտեղ կլիմայավարժեցվում են ոչ ընդոճին կենդանիներ և բուսատնակներ:

Մերձալպյան գոտի: Փոքր կովկասի ելուստային լեռնաշղթաներում այս գոտին սկսում է 1900-2000 մ-ից ու ձգվում է վեր, մինչև 2700 մ բարձրությունը, իսկ հարավային լեռնաշղթաներում՝ 300-400 մ ավելի բարձր, ընդհուպ 3200 մ: Ունի ուժեղ մասնատված ուղիներ և մեծ թնրությունների պատճառով շատ տեղերում հողը լվացված է, բուսազուրկ, շատ են քարքարոտ ու ժայռոտ տնդափայտները՝ հատկապես հարավի ձալբարեկորավոր լեռնաշղթաներում (Երանոսի, Դահնայի, Ուրծի, Չանգեզուրի, Վայքի), ուր ավելի չորային կլիմայական պայմաններ են: Գոտում ձմեռը տևում է 7 ամիս, կայուն ձնածածկով ցրտաշունչ օրերը շատ են: Հաճախ, նրևեղյան ժամերին մոլեզուն է թռչը: Հունվարի միջին ջերմաստիճանը $-8-10^{\circ}$ է: Ամռանը՝ ցերեկը զով է, գիշերը ջերմաստիճանը տատանվում է $+4-0^{\circ}$ -ի միջև: Տարեկան թափվում է մոտ 1000 մմ տեղում, իսկ մերձկասպյան հատվածում՝ 1200 մմ: Փոքր կովկասում ամռանը այս գոտում լինում է նրաշտ՝ չնայած խոնավացման գործակիցը մեծ է 1-ից: Հողային ծածկը ճմամտագրգվեմտային է հումուսի ոչ հզոր շերտով, հարավահայաց լանջերում նույնիսկ կմախրացած: Հողերի ռնակցիան թույլ թթվային է: Բուսածածկը բարձրախոտային է, աճում են հացազգիներ և տարախոտերով հարուստ, գունազուրկ ծաղիկներ: Այս գոտին վաղ գարնանից գերբնեմված է արտավայրային անտառաբուսականության մինչև ուշ աշուն: Կենդանիներից տիրապետող են կրծողները և թռչունները: Հանդիպում են ընդոճին բնգուրդյան այծ, վայրի ուշաք (մուֆլոն), այծյամ, վիթ: Այս գոտին մարդու կողմից օգտագործվում է որպես հիանալի

խոտհարք: Ալպյան գոտի: Մերձկասպյան հատվածում այս գոտին համարյա բազակայում է, քանի որ իր բնորոշ հատկանիշներով չի դրսևորվում: Փոքր կովկասի հյուսիսում միայն առանձին զագաթներ են հասնում այս գոտուն, որը տարածվում է մինչև 3100 մ բարձրությունը: Հարավում գոտին տարածվում է մինչև 3600 մ ևս զրադնցնում է առանձին կղզյակների ձևով ու հին սառցադաշտային կրկնաններ, որոնք պատված են քարակառկա քարերով, ժայռերով: Ռոնիկի քարագրոններով ծածկված խիստ գաղթափ լանջեր են: Թույլաբն լեռնամասերում լիովան են ալպյան գորգեր ու ճմազուղձային մարգագետինները: Կլիման ցուրտ է: Ձմռանը սառնամանիքային օրերը շատ են, հաճախ մոլեգնում է բուրբ: Ձնածածկը տևում է 8-9 ամիս և շատ լեռնալեզքներ ժամանակավորապես փակվում են, ամառը սկսում է կտրուկորեն: Բուսականությունը գետնատարած է, հարմար է միայն ոչխարների արածնցման համար: Կենդանիներից հարդիաբում են ցածրադիր գոտիների ներկայացուցիչները, նրանք են սույնիսկ ընձառյուծ և քարայծ, գորշ այծ: Զնամերձ գոտին ընդգրկում է միայն ամենաքարձր լեռնագագաթները, որոնք 3500-3600 մ-ից ավելի բարձր են (Հինալ, Գյամիչ, Կապուտջուղ և այլն): Լանջերը գաղթափ են, ժայռոտ ու քարքարոտ: Հողածածկ փաստորեն գոյություն չունի: Կլիման ցրտաշունչ է, հաճախ մոլեգնում է ձնաբուրբ: Ամառն մեկ, երկու ամիսը գերակա ջերմաստիճանը 0°-ից քիչ բարձր է, իսկ նրեկոյան իջնում է 0-ից ցած, մինչև -6-8°: Առանձին փոսորակներում ձյունը պահպանվում է ամբողջ տարին:

3. Արձանա-Շախերիզյան բնատարածքների գոտի: Այս գոտու բնատարածքները շատ նման են Միջնաշխարհի բնատարածքներին: Շախերիզ լեռնաշղթայի արտաքին լանջերում բնատարածքային վերընթաց գոտիները ստորոտում սկսում են կիսաանապատներից, իսկ Գուտտակ, Արմածին լեռնաշղթաներում՝ դրանց մերձկատարային մասերում տարածվող մերձալպյան և ալպյան մարգագետինների գոտուց, որտեղով անցնում է Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական սահմանը: Կիսաանապատների գոտին սկսում է 1200-1400 մ բարձրություններից և նև, ընդամենը 200 մ բարձրության շերտով զբաղեցնում է կզրլուզին գետահովտի ծախստինյա թույլ թերության լանջերը և զոգավորությունների հատակային մասը (Մարականի և Կարմրանի գոգավորությունները): Կլիման աչքի է ընկնում զգալի չորությամբ 300-330 մմ, արևափայլքի 2600ժամ տևողությամբ: Հունվարյան միջին ջերմաստիճանը -2-5° է, հունիսին՝ +24-26°, առավելագույնը՝ +42°: Ձմռան սառնամանիքային օրերին ջերմաստիճանը հասնում է -26°-ի և հաճախ տևել է ունենում ջերմաստիճանային շրջադասություն: Գարնանը բնորոշ են նաև գոտու համար կրկնվող ցրտահարությունները: Լեռնավության գործակիցը 0.2-0.3 է, բերք ստացվում է արհեստական ոռոգմամբ: Մթնոլորտային տևողմաների տարեկան քանակը 250-300 մմ է: Ձմռանը կայուն ձնածածկ չի զգայնում, չնայած ձյան շերտը հասնում է 40 սմ-ի և նստում է մի քանի շաբաթ: Հողային ծածկը գետահովտներում մարգագետնային է, մյուս

մասնրում՝ կիսաանապատային գորշահողմը են, տեղ-տեղ կան աղուտային և ավլալի հողեր: Ամենաբնօրոջ բույսը շորանն է, հավամբզանման և ծառանման օշանր, բային, հազարատերևուկը, կապառը, հիրիկը, զնդիցան, բալախը, աղապատուկը և այլ էֆեմերներ: Կիսաանապատների գոտու վերին մասնրում, դնպի չոր տափաստան անցման սահմանում, օշինդրին խառնվում է փնտրախուր: Կլմնդանիններից քնօրոջ են մանր կրծողները և դրանց հետևող աղվներ, կզաթխը, չղջիկները: Մյուս կաթնասուններից են ոզնին, մանուլը, բորնին, ընծառուծը: Ըստ են սողունները՝ մողեսներ, օձեր, կրիա, կարիճ, դաշտասարդ, մորմ և այլն, թռչունները (ուլար, յոթ, կաքավ, շիկահավ, քվեճ, նրաշտահավ, մկնաբուս, արօս, արար, ազաավ, կաշաղակ): Չվող թռչուններից հանդիպում են արսզի, մոխրագույն կռուկ, ծիծեռնակ: Վխտում են միջատները՝ հատկապես մորեխները, ճպտոները, սարդերը, որոնցով սնվում են աղունները: Այս գոտու զգալի մասը յուացված է ռոզման շնորհիվ: Մշակում են մերձարմադարձային բույս մշակաբույսներ (խաղող, դեղձ, ծիրան, տանձ, խնձոր, սերկնիլ, նուռ, թուզ, նուշ, թուփ, ընկույզ, սալոր, կեռաս, բայ, նթնայուղատուներ, քանջարնդն, ծամրուկ, սնիխ, դդում, շաֆրայի):

Չոր տափաստանների գոտին տարածվում է կիսաանապատներից վեր 200-400 մ շերտագոտիով և միջանկյալ է դնալի տափաստան: Հիմնակախում գրաղծցնում են Ծահեբրդ լեռնաշղթայի հողմահայաց արմունյան և հարավային արտաքին լանջերը մինչև 2000 մ բարձրությունները: Այս գոտին ամենուրեք ընդգրկում է ցածր լեռները, որոնք մասնատված են գետահովիտների խիտ ցանցով: Կզրուզների մի քանի խոշոր վտակներ առաջացրել են խորը ձորեր: Տեղատարումը կատարվում է ուժգին և առանձին հատվածներում գոյացրել են վատա-հողային տիպի ռեխիճ, որի պատճառով գարնան վերջին սնվավներ են առաջանում: Տեղումները 250-350 մմ է, որոշ տարիներին հասնում է նաև 450 մմ-ի: Կլիման չորային է: Ձմրամատիճանային օրական և տարեկան տատանումները մեծ են: Հունվարի միջինը -5-6° է, հունիսինը՝ +22-26° է: Հողերը գորշ և բաց շագանակագույն են: Բուսածածկը բարձրախոտ է, հացազգիների գերակշռությամբ՝ փնտրախոտ, շյուղախոտ, սեզ, կծմախոտ, դաշտավլուկ, տարեկան, կորնգան, բռշխեր, աղվեսագի, աշյուծախոտ: Ամառը բուսականությունը չորանում-խանձվում է: Կլմնդանական աշխարհի տնակները նույն են ինչ կիսաանապատներում և տափաստաններում: Գոտին խոնավության պակաս ունի, որի պատճառով յուրացված մասնրում ամենուրեք ռոզվում է՝ նրաշխավորված բերք ստանալու համար: Տափաստանների գոտին սկսվում է 1800-2000 մ-ից վեր ձգվող տարածքներից, հասնելով մինչև 2500-2600 մ բարձրությունները: Հիմնակախում գրաղծցնում է մեծ թնքության լանջերը: Գոտու կլիման հյուսիսից հարավ տափ-ճանաբար չորային է դառնում՝ կրելով իրանական անապատներից եկող ազդեցությունը: Բնորոշ են տաք ամառները և ցուրտ ձմեռները: Հունվարյան միջին ջերմաստիճանը -6-10° է, առավելագույնը՝ -32°, հունիսինը՝ +18-20°: Տեղումների

քանակը 500-700 մմ է և թափվում են հիմնականում գարնանը: Խոնավացման գործակիցը 0.6-0.8 է, որոշ տեղերում այն հասնում է 1.0-ի: Այդպիսի վայրերում, ի տարբերություն տափաստանային խոտային բուսածածկի, փոքրիկ կղզակների ձևով աճում են նոսր անտառների բնորոշ ֆրիգանային թփեր: Գոտում խոտերի բարձրությունը հասնում է 60-80սմ-ի: Դրանք, որոշ բացառությամբ, եիանալի և հյութառատ կմրախոտեր են: Հիմնականում օգտագործվում են որպես արոտավայր և խոտհարք: Հողերը մեզ շագանակագույն են կամ սևահող: Հարուստ է կենդանական աշխարհը՝ սողուններ, կրծողներ, գիշատիչներ (լուսան, ընծառյուծ, գայլ, աղվես), թռչուններ, միջատներ: Այստեղ տափաստանային գոտին ոչ ամենուր է մշակվում: Մերձալպյան և ալպյան մարգագետինների գոտին սկսվում է 2500 մ բարձրությունից և հասնում է մինչև 3500 մ-ը, սակայն այստեղ այն վերջանում է Շախբերդ լեռնաշղթայի ամենաբարձր գագաթում (3332 մ), իսկ ծայր հարավում Գուտակ լեռնաշղթայի գագաթային զանգվածում (3162 մ): Մերձալպյան մարգագետնային գոտին շրջվում է Շախբերդ լեռնաշղթայի ջրբաժանի հակառակ կողմը, իջնելով մինչև 2600 մ բարձրությունները: Հարավային կմսի այդ հատվածում բացակայում է ալպյան մարգագետինների գոտին: Այս գոտու ռելիեֆում զգացվում է թեքության մեծացում և զետառոտիտների խորքային լեռգիայի ուժեղացում: Կլիման ցուրտ է: Տարվա մեծ մասը ձնածածկ է, ամառը կարճատև, բայց զով: Հուլիսի միջին ջերմաստիճանը +6-10° է: Այդպիսի ցածր ջերմաստիճանային պայմաններում բացավում է մշակաբույսերի արտադրությունը: Հաճախ ցրտահարություններ են լինում, զարուհը մասախլապատ է, ձմռանը՝ բքառատ: Հողերը մարգագետնային և ճմամարգագետնային են: Բուսածածկը խոտային է, բայց հարուստ ու բազմազան: Ծաղկումը կառարվում է տարբեր ամիսների և բնատարածքը վերածվում է գուազեղ ու նրփներանգ գորգի: Ամռանը կյանքը նույն է, իսկ ձմռանը՝ անկենդանաում: Ձմեռնամուտին շատ կենդանիներ թուն են մտնում, թռչուններից շատերը չվում են տաք գոտիներ, բույսերը չորանում են: Ալպյան գոտին պիտանի է միայն մանր նոջներավոր կենդանիների համար որպես ամառային արոտավայր: Արմանա-Շախբերդյան բնատարածքային շարքում մերձծնային գոտին բացակայում է, որովհետև լեռների բարձրությունը չի հասնում այդ գոտուն:

4. Տավրո-Միջերկրածովյան բնատարածքների շարք:

Այս շարքի մեջ ընդգրկվում են Հայկական Տավրոս լեռնաշխարհը, Կորդվագ լեռները, Մասիոս լեռնաշղթան և ծայր հարավային նախալեռնային տարածքները: Բնատարածքների այս շարքի բնորոշ առանձնահատկությունը այն է, որ արտաքին եզրամասերում շփվում է Միջագետքյան կիսաանապատների և տեղ-տեղ անապատների հետ: Սակայն այդ հանգամանքին հակադրված է Միջերկրական ծովից նկող օդային զանգվածների խոնավաբեր ազդեցությունը, որոնց շնորհիվ անապատի եզրին փոխվում են բնատարածքները, իսկ կիսաանապատները հաճախում են կղզակների ձևով, համատարած գոտի չեն կազմում:

Ոստ լիւսնրի բարձրոթայան բնտտարածրային գոտիննր ստորոտից դնպի գա-
 գաք դասավորված են հետնւյալ հերթակարնոթայմբ. չոր տափաստաննրի, տա-
 վաստաննրի, սնտառնրի, մերձալպյան մարգագնտիննրի, ալպյան
 մարգագնտիննրի նւ մերձձնային (միայն արմւնյան հատվածոմ) գոտիննրի:
 Չոր տափաստաննրի գոտին գրաղնգնոմ է ծովի վակարդակից մինչնւ 1000 մ
 (ծայր հարավային նախալմննրի արմւնտյան հատվածոմ), Հայկական Տավրոսի
 հարավային փնշերոմ՝ մինչնւ 800) մ, կորդվաց լմննրոմ, մինչնւ 700 մ բարձրո-
 թայաննրլւ: Ռելիեֆը մնղմ է, լանջերի թերթոթայոննրը մնծ չնն, գագաթային
 մասնրը կտրագած նւ: Գետնրը խոր հովիտնր շնն առաջացնոմ, փոխարննր գո-
 յացրնլ նն արտարնրման կոննրի շարքաղոթայոն: Լանջնրը լվացվոմ նն
 սելավային հոսրնրով կամ ժամանակավոր հոսրի գնտակննրով: Էլլիմայական
 պայմաննրը արմւնտտրոմ յորային են, դնպի արնւնլը աստիճանաբար վնրած-
 վոմ նն կիսայորի: Հոմովարի միջին ցերմաստիճաննրը տատանվոմ են -1-6° է:
 Ձմեանը ձյոնը հալվոմ է մնկ երկու օրից, իսկ գոտու վնրին մասնրոմ՝ մի քանի
 շաբաթից: Հուլիսի միջին ցերմաստիճանը +23-28° է: Տարնկան թափվող
 տնլոմննրի քանակը արմւնտտրից արնւնլը ավնլանոմ է 400-500 մմ-ից մինչնւ
 600-700 մմ: Խոնավացման գործակիցը գոտու ստորին մասոմ 0.3 է, բարձրոմ՝
 0.6: Գետնրի մնծ մասը ջրառատ նն, հոսրի մողուրը 6-10 լ/վրկ.կմ²: Հողնրը գորշ նւ
 շագանակագոյն են 3-4% հոմոսի պարոնակոթայմբ: Չոր տափաստաննրի
 գտին համարյա ամբողջոթայմբ մշակվոմ է: տարնկան համարյա 2-3 բնրը նն
 ստանոմ, չնայած ամեանը հողը շատ է տաքանոմ: Դրա համար հողի մշակոմը
 կատարոմ են գարնանը նւ աշնանը: Մշակոմից ազատ մնացած անհարմար
 փորը տարածքննրոմ պահպանված բնական բուսածածկոմ միմյանց նն խառն-
 ված կիսաանապատնրի, չոր տափաստաննրի նւ տափաստաննրի բուսատն-
 սակննրը, որոնցից ամննարնորը օշինդրն է: Հիմնական մշակաբոյսնրն են
 ցորնը, նգիպտացորնը, կորնելը, վարսակը, տնխնիկականնրից մշակոմ են
 բամբակ, կաննկ, քնջութ, իսկ պտղատոննրից՝ ձիթննի, խաղող, նռննի, թզննի,
 նշննի, ընկուզննի, տանձննի, խնձորննի նւ ցիտրոսննր, թանջարաբուստանային
 մշակաբոյսնր: Կննդանիաննրից ամննաշատը կրծողննրն են ու թռչոնննրը, շատ
 են նանւ սողոնննրն ու միջատննրը: **Տափաստաննրի գոտին** արնւնլրոմ սկսոմ
 է 700-800 մ բարձրոթայոննրից նւ ննղ բարձրաշնրտով (100-150 մ) տարածվոմ է
 մինչնւ Տիգրիս գետը, որից դնպի արնւնտը աստիճանաբար ձգվոմ է ավնլի վնր,
 տնղ-տնղ հասննլով մինչնւ 1200 մ բարձրոթայան: Տավոնյան համակարգոմ չոր
 լանջերին տափաստանը ձգվոմ է ավնլի վնր մինչնւ 1500 մ: Տարվա ընթացքոմ
 ջնրմոթյան առատոթայոն կա, ձմնրը մնղմ է, ձնածածկոյթը 25-30 սմ նւ նստոմ է
 մոտ 1 ամիս: Հողնրը մուգ շագանակագոյն են կամ սնւահողնր՝ 6-10% հոմոսի
 պարոնակոթայմբ: Տափաստանային գոտին ամննորնրը մշակվոմ է, բնական
 բարձրախոտ բուսականոթայոնը պահպանված է միայն ցանքատարածոթայոն-
 ննրի նգրերի: Մշակոմ են հացահատիկննր, նթնրայողտոննր, բարջարնղնն

նն չոր մերձարևադարձային պտուղներ: Կենդանական աշխարհը նույնն է ինչ չոր տափաստանինը: Գնպի արմուշկ՝ Կորդվագ լեռների հատվածում դրանց են խառնվում այծյամը, մոխիկը, վարազը, գայլը, լուսանը և մի քանի թռչնատեսակներ: Գոտու անցումը ավելի բարձրադիրք անտառային գոտի կատարվում է սահուն՝ թփուտների կամ նոսր անտառների տեսքով: Անտառների... գոտին արևմուտքում սկսում է 1200 մ-ից, արմուշկում 1000մ-ից և տարածվում է մինչև 2300-2500 մ բարձրությունները: Այն լայնատերև է, քաճանկում է 3 ենթագոտինների: Ատորին ենթագոտում, լուսավոր նոսր անտառ է, խառնված ֆրիգանային տնուակների հետ, որոնք թփուտներ են: Չորասեր տնուակները նպաստավոր դիրքադրություններ ունեցող լանջերին առաջացնում են մացառուտներ և հանդես են գալիս ցաք ու ցրիվ՝ մեծ ու փոքր կղզյակների ձևով: Տիգրիսից արևմուտք բարձրությունները չեն հասնում անտառի գոտուն: Այն զանգվածային չէ: Միջին ենթագոտին հզոր ու մթին անտառ է հատուարուն ու բարձրասլաց ծառատեսակներով և հիմնականում զբաղեցնում է Հայկական (Արմուշկան) Տավրոսի հարավսեայաց լանջերը, որտեղ խոնավությունն առատ է: Այս գոտու անտառները աչքի են ընկնում տարատեսակ պտղատուների առատությամբ: Հատկապես շատ են ընկուզենին, տանձենին, թթենին, բզնենին, նաննին: Գոտու մյուս ծառատեսակների մեջ գերակշռում են շագանակենին, կաղնին, մրտենին: Կան ծփի, հացենի, լորնի, բալասանի բարդի և այլ տնուակներ: Վերին ենթագոտում անտառը աստիճանաբար նոսրանում է, բացատները ընդարձակվում են, ծառատեսակները դառնում են ցածրաբուն և շատանում են կիսաթփատեսակ, ծուռտիկ տնուակները: Անտառային գոտում կլիման աչքի է ընկնում զով ամառներով և մեղմ ձմեռներով: Հունիսին միջին ջերմաստիճանը արևմուտքից-արմուշկ տատակում է +18-20°-ի միջև, իսկ հուլիսին՝ -10-6° է: Ձնածածկը տևում է 3-4 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 750-1000 մմ: Հողերը գերազանցապես անտառային գորշահողեր են: Արժևրավոր կենդանատնուակները եամարյա ոչնչացված են մարդու կողմից: Մերձալպյան գոտի: Հայկական Տավրոսում զբաղեցնում է լեռնաշղթայի մերձկատարային մասը և ավարտվում է մինչև 3000 մ բարձրության գագաթներում, սակայն ավելի լայնորեն տարածված է արմուշկան հատվածում՝ Կորդվագ լեռներում: Գոտին այստեղ սկսվում է 2300մ-ից ու բարձրանալով հասնում է մինչև 3000-3200 մ: Մերձալպյան գոտու ընդլեռնում տիրապետում են մեծ թերությունները, որի պատճառով այն խիստ մասնատված է և տեղատարումը ուժգին: Ամառային ամիսներին կլիման զով է: Հուլիսի միջին ջերմաստիճանը +6-10° է: Ձմեռը ցուրտ է: Հուլիսի միջին ջերմաստիճանը -6-8° է: Երթմեն լինում են ձնաբքեր և ռոժնդ սառնամանիքներ: Ձնածածկը կայուն է 40-50 սմ հաստությամբ և հալում է ապրիլ-մայիս ամիսներին: Տեղումների տարեկան քանակը հարավսեայաց լանջերին կազմում է 1000-1500 մմ: Հողերը մարգագետնային են, հումուսի 4-6%-ի պարունակությամբ: Բուսականությանը բարձրախոտ է: Մերձալպյան մարգագետիններում քազմազան ու հյութատար կերախոտեր են: Գոտին

օգտագործվում է որպես ամառային արոտավայր նույն խոտհարք: Հարուստ է նաև կենդանական աշխարհը թե՛ խոտակեր նույն զիջատիչ տնտեսակներով (բնգուրայան այծ, վիթ, մուֆլոն, գայլ, աղվես, կզարիս, ընծառուծ, կրծողների բազմաթիվ տնտեսակներ, թռչուններ): Այլպես գոտին տարածվում է Տավրոսյան համակարգի Ռշտոնյաց լեռնաշղթայի նույն հարանց հարավ անջատվող լեռնաճյուղերի մերձգագաթային մասերում՝ 3000-3500 մ բարձրություններում, իսկ կորովաց լեռներում հասնում է մինչև 3200-3600 մ զագաթամերձ բարձրությունները: Այս գոտին համատարած չէ, քանի որ ոչ բոլոր զագաթներն են այդ նիշերին հասնում: Ռեյինֆր խիստ մասնատված է, թերություններ մեծ են: Օրվա նույն տարվա կենսերի օդի ջերմաստիճանների կտրուկ փոփոխման մեծ տարբերության պատճառով տեղի է ունենում ապրիլի միջառնակական քայքայում: Շատ են քարացրոնները, հողմահարված ժայռերն ու կաթնաքարերը: Հողերը մարգագետնաճանային են: Բույսերը գետնատարած են, բայց հարուստ են բազմերանգ ծաղկախոտերով, որոնք գորգեր են առաջացնում: Կլիման դաժան է: Ձմեռը նրկադառն է ու ցրտաշունչ, ծնածածկը մնում է 8-9 ամիս, հաճախ մոլեզվում է ձնաբուրդ: Կարճատև ամառն ընթացքում միայն գերիկ է օդի ջերմաստիճանը 0-ից բարձր: Ուլտրամառնուշակագույն ճառագայթաարձակումը հասնում է 1.6-1.8 կալորիա/սմ² թափել, իսկ գիշերը ջուրը սառչում է: Կենդանական աշխարհը գրեթե նույնն է ինչ մերձալպյան մարգագետինների գոտում: Ձմառնը բացի մի քանի կրծողներից մյուս կենդանիները իջնում են ավելի տաք գոտիներ: Այլպես գոտին ամառը օգտագործվում է որպես արոտավայր՝ ոչխարաբուծության համար: Արձագանակները գոտի: Այս գոտին սկսվում է 3500մ-ից նույն համատարած չէ, որովհետև մի քանի զագաթներում է այն տարածված: Մասնավորապես այս գոտին առկա է Ջիլո, Հերավիլ, Մորսար, Մամբի, Ջնթափ, Ջարասա, Արմածին լեռնագագաթներում: Տարածքում համատարած ցյուր ժայռաքեղեր են, քարածայր նյութեր են մեծ մասամբ ձնածածկ են տարվա մեծ մասում: Հողածածկը բացակայում է կամ կմախքային են: Բայսեր չկան, հատուկ նոսր հանդիպում են քարերի արանքներում նույն ժայռերի ճեղքներում սրսռուկ նույն, հազվադեպ նաև ալպիական մանուշակ: Կենդանիներից հազվադեպ, ցածր գոտիներից ամառը գալիս են թռչուններ՝ քարաթիվ, սկնաբազկ, մեկ-մեկ էլ հանդիպում են դաշտամկներ:

Բ. Ներքին (Միջնաշխարհի) լեռնալանջերի բնատարածքների տիպ:

Հայկական լեռնաշխարհում Միջնաշխարհի բնատարածքների տիպը տարբերվում է Արտաքին լեռնալանջերի բնատարածքների տիպից խոնավացման ռեժիմի առանձնահատկությամբ: Դրանով պայմանավորված այստեղ՝ ներքինաշխարհում տիրապետող են համամատաբար չորային կլիմայական պայմանները, որի պատճառով բնատարածքների ազոնալ գոտիներում բացակայում է անտառային գոտին: Միջնաշխարհում, եթե չլիներ լեռնային ռեյինֆր, ապա համատարած կտիրապետեր կիսաանապատների բնատարածքը: Սակայն Միջնաշխարհի ամենացածրադիր գոգավորություններից սկսած մինչև բարձրաբերձ

գազաթնները՝ զբաղնցնում են լեռնաշխարհին բնորոշ ազոնալ բոյոր գոտիները: Կիսաանապատները, չոր տափաստանները, տափաստանները, որոնք տեղ-տեղ փորոյիկ արիալ-պատառիկներով փոխարինվում են անտառով: Ավելի վեր, մերձ-ալպյան և ալպյան մարգագետիններն են ևս վերջում՝ մերձոնային և ծնածածկ գոտին: Ընտռարածքների այսպիսի հերթափոխ շարախմբից Դոնտա-մերձսևծովյանում բացակայում են կիսաանապատները, Փոքր կովկաս-մերձկասպանում՝ տափաստանները, Արմանա-Շահբերդյանում՝ մերձոնային գոտին, իսկ Տավրո-Միջերկրածովյան բնատարածքներում՝ չոր տափաստաններն ու տափաստանները հստակ տարանջատված չեն և տափաստանը համատարած գոտի չի կազմում: Դեռ ավելին, որպես բնատարածքների յուրահատուկ առանձնացված տիպ Միջնաշխարհի կիսաանապատային գոտում՝ Ուրմիայի և Արարատյան գոգավորություններում տեղ-տեղ հանդիպում են անապատանման փոքրիկ բնատարածքներ, որոնք, ճիշտ է, բնորոշ չեն Հայկական լեռնաշխարհին, սակայն հակադրվում են արտաքին լեռնալանջների բնատարածքներին: Միջնաշխարհի բնատարածքային գոտիների տիպում միյանցից որոշակիորեն առանձնանում են մի քանի շրջաններ, կազմված խոնավության ռեժիմի բաշխման և ռելիեֆի ձևերի ու բարձրությունների չափերի հետ: Միջնաշխարհում ևս նկատվում է մի ընդհանուր օրինաչափություն, այն է՝ հյուսիսից-հարավ և արևմուտքից-արևելք կլիմայական շրջությունը ավելանում է: Ստորև տալիս ենք Միջնաշխարհի բնատարածքների նկարագրությունը գածրադիրքային գոտուց դեպի բարձրադիրքային գոտի հերթափոխությամբ:

Կիսաանապատային գոտի: Այս գոտին Հայկական լեռնաշխարհում զբաղեցնում է Միջնաշխարհի հարավ-արևելյան մասը՝ ընդգրկելով Ուրմիայի, Նախիջմուանի, Արարատյան գոգավորությունների գածրադիր մասերը և մասամբ ծայրագույն հարավի նեղ շերտը՝ Տիգրիս-Էփրատի միջակայքում, պատառիկների ծնածակ և ոչ հստակ արտահայտված սահմաններով (տե՛ս Զգ. 10): Ամենացածր նիշը Արաքսի վտակ Կարասուի գետախառնուրդի մոտ է՝ 120-150մ: Գոտու վերին սահմանը Արարատյան դաշտում 1200-1300 մ է, Նախիջմուանի դաշտում՝ 1300-1400 մ, իսկ Ուրմիայի գոգավորությունում այն սկսում է լճափից և բարձրանում է 1500մ: Ծայրագույն հարավում գոտին սկսում է Ջիզրնյի դաշտից ծ.մ. 500 մ բարձրությունից՝ Ուշեայի և Այնթափի սարահարթերում հասնում է 700 մ-ի: Մակերևույթում տիրապետում են տափաքակ դաշտերը և մեղմաթև անխալիճային լանջերը: Լեռնաշխարհում ամենաչորային կլիմա ունի այս գոտին և աչքի է ընկնում 2700-2800 ժամ տևողության արևադարձայնով: Հունիսի միջին ջերմաստիճանը +25-27° է, առավելագույնը՝ +43°, հունվարյանը՝ -4-6°, սառնամանիքային օրերին իջնում է -25-30°: Ձմռանը, գոգավորությունների հատվում սառը օդը երկար ժամանակ մնում է, իսկ անխալիճներում համեմատաբար տաք է: Առկա է 2-3 ամսվա ոչ կայուն և բարակ ծնածածկ: Ընդոռ չեն վազ գարնանային և ոչ աշնանային ցրտահարությունները, որից

հաճախ տուժում է բնորը: Տնդումների տարեկան քանակը Ուրմիայի գոգավորությունում 200 մմ է, մյուս մասերում՝ 250-300 մմ (հիմնականում թափվում են գարնանը): Երբևեմ ամառն արևը կարճատև տևողատարափից սնվածներ են առաջանում: Հողային ծածկույթը բազմազան է. Լճափերին և զետափերին հողերը ալկալի և մարգագետնային են, մյուս մասերում՝ աղուտային և կիսաառապատային գորշափոփոկ են: Բույսերը աղասեր են: Ամենաբնորոշը օշինդրն է՝ մի քանի տարատեսակներով: Կան հիբիկ, կուպա, զնդիցա, աղաբարտուկ, թալախ, աղահասկիկ, ուխտափուշ: Նախալեռնային մասերում հանդիպում է ֆրիզանային բուսականություն (զազ, նշնի, ոզնաթուփ, ուրց և այլ մթերայտոլատուներ և դեղաբույսեր): Գոտում ամենաշատ տարածված կենդանիները կոծաղներն են՝ ճագարանուկ, ճերմակատամ, պոլտարիթ, համտոն, ալպազանուկ և բազմաթիվ այլն: Մյուս կենդանիներից հանդիպում են ոզնի, մանուլ, բորենի, բրձառոտ, սողուններից՝ օձեր և մողեսներ, միջատներից՝ կարիճ, սոբ, փաղանգ (դաշտասարդ) են: Կիսաառապատային գոտին ունի հարուստ թռչնաշխարհ: Այտուղ կա լեռնային ենդկահավ, կարավների տեսակներ, շիկահավ, լոր, օձակերպ բազմ, փայտփոր, քվեճ, ժայռախոնխ, մրաշտահավ, ազալ, սերինոս, կաչաղակ, արար, արոս, մկնարտզմ, նիզնահավ, արագիլ, ծիծեռնակ, կռունկ, տառարակ, իսկ Արաքսի նիզնուտներում՝ որդան կարմիր և այլն: Ըստ են միջատները: Այս գոտին համարյա ամբողջությամբ յուրացված է: Մշակում են մերձարմատար-ձային բույսեր՝ բամբակ, խաղող, նուռ, թուզ, ծիրան, դեղձ, թուխ, նուշ, սալոր, սերկունիլ, ընկույզ, տանձ, բալ, կնձաս և բանջարաբուստանային մշակաբույսեր, խորղմնի: **Չոր տափաստանների գոտի:** Այս գոտին փաստորեն ննթագոտի է կիսաառապատներից դնալի տափաստան, որովհետև կրում է այդ գոտիների ազդեցությունը: Հայկական լեռնաշխարհում այս ննթագոտու ստորին սահմանը ավելի անորոշ է ու լողված, քան վերինը: Այն Մեղրու կիրճում սկսում է 600-650 մ-ից, Ուրմիայի գոգավորությունում 1500 մ-ից, Փոքր Հայքի բարձրավանդակում և Դիարբեքի գոգավորությունում 1250 մ-ից և ամենուրեք զբաղեցնում է 200-400 մ լայնության բարձրաշերտ: Վերին սահմանը առավել բարձրադիրք է Ուրմիայի ավազանում հասնում է 1800 մ, այն դեպքում, երբ կարսի սարահարթում 1600 մ-ի վրա է, Տարնում՝ 1750 մ: Ռեզիլիճը ցածրալեռնային է, մասնատված խոր զետահովիտներով ու տնդ-տնդ խոշոր զետերի սանդղածորներով և կիրճերով: Կատարվում է ուժգին տնդատարում և միասնիկական հողմնահարում: Կլիման չորային է, տնդումները 300-450 մմ: Վառ լճի ավազանում ձմեռը համեմատաբար ավելի մեղմ է: Հողերը գորշազգանակազույն են: Բուսաշխարհը հարուստ է ու հիմնականում բարձրախոտ (փետրախոտ, սնգ, ազվնագի, կծմախոտ, շյուղախոտ, դաշտավուկ, տարեկան, կորրնզան, նրնքնուկ, բերնիկ, բռշխ, ցարնուկ, կնկրիա): Կենդանական աշխարհը, ինչպես նշեցինք խառնված է ստորին և վերին գոտիներին բնորոշ տեսակներով՝ կրծողներով, սողուններով, թռչուններով: Այս գոտին ամբողջությամբ մշակվում է արհեստական ոռոգմամբ: Բարձրադիրք

մասերում մշակում են հացահատիկներ, իսկ գածրադիր մասերում՝ մերձարևադարձային մրգատառտուներ և բանջարեղեն: Տափաստանների գոտի: Ինչպես ուրջ Հայկական լեռնաշխարհում և մասնավորապես Միջնաշխարհում այս գոտին ամենաշատ տարածումն ունի: Միջնաշխարհի հյուսիսում այս գոտին զբաղեցնում է 1500-2200 մ բարձրությունները (Ջավախք, Կարս, Ապարան, Լոռի, Սևան), իսկ հարավում՝ 1700-2500 (Փոքր Հայք, Բյուրակն, Տարոն, Տիգրանակերտ, Միանն, Շոշ, Գուշտակ, Վասպուրական, Ալաշկերտ, Արտազ): Հրաբխային լեռներում մակերևույթի թմրությունները մեծ չեն և թույլ են մասնատված, քան ծալքաբևեռավոր լեռներում: Ստորին սահմանում կլիման բարեխառն է, տաք ամառներով և ցուրտ ձմեռներով: Հունվարի միջին ջերմաստիճանը հյուսիսում $-8-12^{\circ}\text{C}$, հարավում՝ $-6-8^{\circ}$: Ջերմաստիճանի տարեկան ամենամեծ տատանումը Ուրմիայի ավազանում է՝ -45° մինչև $+38^{\circ}$ (ամպլիտուդը մոտ 83°), որը կլիմայի գամարայնության բնորոշ արտահայտությունն է: Տեղումների տարեկան քանակը 500-700 մմ է, խոնավացման գործակիցը՝ 0.6-1.0: Տափաստանային գոտում հողերը մոզ շագանակագույն են կամ սևահող, հումուսի 6-10%, տեղ-տեղ մինչև 12% պարունակությամբ: Բուսականությունը բարձրախոտային համակեցություններ են: Առանձնատուներ և փնտրախոտային, փնտրախոտա-շողախոտային, հացազգա-տարախոտային, կծմախոտային, տրագանտային և այլ տիպերը: Բոլոր խոտերը հյութային են որպես կերախոտ, մինչև ծաղկելը: Աշնանը դրանք կոշտանում և չորանում են: Այդպիսի տեղամասերը հիմնականում օգտագործվում են որպես արոտավայր և խոտեղբ: Միջնաշխարհի տափաստանային գոտու սահմաններում, այնտեղ ուր բավարար խոնավության պայմանները նպաստավոր են, աճում են թփեր, նոսր անտառներ և անտառներ (Մնձուրի, Դմրսիմի լեռների արևմտյան լանջերին, Ճորոխի ավազանում, Մեծրաց լեռներում, Ազատ և Վեդի գետերի վերին հոսանքի ավազաններում, Ջանգլուրում, Մաղկունյաց, Թեղենյաց լեռնաշղթաների և Արփայի վերին հոսանքի ավազանում, Արա լեռան հյուսիսային լանջին): Անտառներ կան նաև խոշոր գետերի հովիտներում՝ սրահային անտառների ձևով: Սրահային անտառներում գերակշռում են ուռենին, բարդին, լաստենին, հացենին և թփատեսակներ, որոշ տեղերում հանդիպում են եղևզնուտներ (Եփրատ, Արաքս, Արածանի, Մեծ Ջաբ, Որոտան, Արփա):

Կենդանական աշխարհի հիմնական ներկայացուցիչները կրծողներ են՝ դաշտամկներ, առնետներ, ջրառնետներ, համստեր, ճագարամկներ: Մյուս կենդանիներից կան կզաքիս, աղվես, գայլ, լուսան, անտառակատու, իսկ Արաքսի և Կարսիբոլոր գետերի ավազանում՝ նաև ընձառյուծ: Ըստ հարուստ է թռչնաշխարհը, մայրահավ, աղավնի, ուլար, կռունկ, կաքավ, լոբ, փասիան, ծիծեռնակ, ճնճղուկ, սադյակ, անգղ, բազն, իսկ գետերի, լճերի ու ճահճուտների ափերին ջրային թռչուններ: Կան բազմառոնսակ մողեսներ, օձեր, կրիաններ, ոզնի, խոզուկ, իսկ տափաստանի վերին մասում բանդիպում են միայն լորտուներ ու անտառային իծ: Գետերում կան կարմրախոտ, խրամուլ, գայլածուկ, բնդու

ձկնատեսակները և խեցգետին: Միջնաշխարհում ամենից լավ յուրացվածը տափաստանային գոտին է: Մշակում են հացահատիկներ, կարտոֆիլ, տեխնիկական մշակաբույսեր (ծխախոտ, ճակնդեղ, արնուածաղիկ, նզիրացորեն, խորդենի, աֆիոն, կաննի, գանգրավուշ, բնդավորներ, գետնանուշ մեն), բանջարեղեն, պտղատուններ, եամու ցանոպի կերախոտեր: Լայնորեն օգտագործվում են ֆրիգանային անտառակների զանազան դեղաբույսերը և ներկատուները, իսկ Սարիզամիշի անտառների ասճու բնափայտը՝ շինարարության մեջ: Այդ պատճառով այստեղի անտառը համարյա ոչնչացման վտանգի մեջ է և չի վերականգնվում, խիստ պահպանման կարիք է զգում:


Մերձալպյան գոտին Միջնաշխարհում զբաղեցնում է տափաստաններից, իսկ տեղ-տեղ անտառներից բարձր գտնվող գոտին: Հյուսիսից հարավ այն ավելի բարձրադիրք է դառնում: Պոնտական և Փոքր կովկասի լեռնահամակարգվմամբ այս գոտին տարածվում է 1900-2100 մ-ից մինչև 2400-2500 մ, իսկ Սոհուրդ, Սարալան, Սիփան, Ջիլո լեռնազանգվածներում՝ 2500-3000 մ: Այս գոտին ընդարձակ տարածություններ է զբաղեցնում հրաբխային սարավանդներում ու սարահարթերում, որոնք համեմատաբար հարթ են կամ ալիքավոր-փոքրաթեք: Ծալքաբեկտրավոր լեռներում այս բնատարածքները ձևավորվել են գառիթափ և մեծաթեք լանջերի վրա և լայնատարած չեն: Մասնատված ռելիեֆի ալպաններում այդտեղ հողմահարումն ու տեղատարումը ընթանում է ուժգին թափով: Մերձալպյան գոտում կլիման ցուրտ է, տարվա մեծ մասը ձնածածկ: Ամռանը, զերեկային ժամերի զով է ու հաճելի: Հունվարի միջին ջերմաստիճանը $-8-10^{\circ}$ է, հունիսին՝ $+6-10^{\circ}$: Գիշերային ժամերին գետնի ջերմաստիճանը արագորեն ընկնում է, եաճախակի են ցրտահարությունները: Այս գոտու բնատարածքները թեկուզև միայնացից շատ հեռու են բայց ընդհանուր նմանության շատ գծեր ունեն: Հողերը մարգագետնային և ճանարգագետնային են: Բուսական աշխարհը ներկայացված է տարածավելի ծաղկող խոտատեսակներով (աղվեսագի, սնգ, ռզնախոտ, հասկիկ, ցորնուկ, շյուղախոտ, ռափորսու, գարի, սագ, տիվարսակ, կելերիա, նրիցուկ, դաշտավուկ, դեղձանիկախոտ, փետրախոտ, տարնկան, վիկ, վիրախոտ, առվույտ, կորրնգան, մանանի, իշառվույտ, նրնքնուկ, բոշխ, ճիլիկ, գանգակիկ, քիմոն, տերմիուկ, մեխակ, նզանլնզու, սինձ, նդինց, մայրամախոտ, անմռուկ, կուժկտրուկ, խառուտիկ, ուրց, բերնեկլեմ, մակարդախոտ, մանդակ, սիբնի, դաղձ մեն): Հիմնականում բարձրախոտ մարգագետնիկներ են: Օգտագործվում են որպես արոտավայր և խոտհարքներ: Ընդարձակ մերձալպյան մարգագետնիկներով հայտնի են Փոքր Հայքի, Բյուրակնի, Սիփանի, Վարդենիսի, Արագածի, Սարալանի, Գնդամա, Սյունիքի, Արպահանի, Ճաեմրդի, Լառվա, Աշոցքի սարահարթերի արոտավայրերը և խոտհարքները: Հարուստ է նաև կենդանական աշխարհը: Խոտակներներից բնորոշ են բեզապրյան այծը, այծյամը, վայրի ոչխարը: Գիշատիչներից այս գոտուն հատուկ են գայլը, աղվեսը, կզաքիսը, ընձառյուծը, արջը, նրբման նաև բորենին: Կրծողներից հատկապես տարածված

նն նապաստակը, գմտնաւկոտը, համտոնը, ճագարամուկը, Փոքրասիական սուղիկը, պարսկական ավազամուկը, դաշտամուկը, խլուրդը ևւ այլն: Թշնաշխարհին բնորոշ են շվողները: Ամռանը մարգագետինը լցվում է եկվոր թռչունների ճովողութեամբ: Ամենուր շատ են մայրախաւները, կաքաւները, յորը, արոսը, կտցարը, ուլարը, աքարը, արտույտը, ուրուրը, բազմների ևւ արծիւների տեսակները, ագռավը, սնրիխոսը, կնքնիւր, նրաշտախաւը, ծիծնեաւը, հոսպալը, սնրմնաքաղը ևւ այլն: Սողուններից հանդիպում են միայն լորտուներ ևւ մողեսնն, ճահճուտննդում՝ նրկկննցաղներ, վայրի բաղնը: Գետներն ու լճերը հարուստ են զանազան տեսակի ձկներով (կարմրախայտ, իշխան, ծածան, բնդու, խրամուլ, օձածուկ, լոքո, գայլածուկ) խնցզմտիներով ու խաչիւտներով:

Ալպյան մարգագետինների գոտի: Միջնաշխարհում ալպյան գոտին համարարփակ տարածաշրջոտ չի զբաղնցնում, այլ հանդն է զալիս ասանծին տնդամասնում՝ 3000 մ-ից բարձր լեռնազանգվածներում ևւ լեռնաշղթաների մերձզազաթային տարածքներում: Հյուսիսում այս գոտին տարածվում է 2500-3000 մ բարձրութունների վրա, իսկ հարավում՝ 3000-3700 մ: Հյուսիսի հրաբխային լեռներում խոնավութայամբ պայմանավորված ալպյան մարգագետինների գոտին ավնի մնծ մակերններ է զբաղնցնում քան հարավում: Հյուսիսում առավնլալան աչրի են ընկնում Աբուլի ևւ Սանսարի, Արսիանի ևւ կարմիր Փորակի, Արագածի, իսկ հարավում՝ Բյուրակնի, Սիփանի, Գնդամա, Վարդնիսի, Սյունիքի, Սաքալանի բարձրավանդերը: Մակերնութի խիստ մասնավածութան սրտոճառով ալպյան մարգագետինների գոտին զբաղնցնում է ննդ բարձրաշրջոտ: Այս գոտում կլիման խիստ է, ճմնը նրկարատն: Ձնատնդումը սկսում է հոկտնմբերի կնսից ևւ մնում է 8-9 ամիս: կարճատնն ամանը օդի ջնրմաստիճանը միայն գնրնկով է 0°-ից բարձր: Ճառազայթման լարվածութունը հասնում է մտ 2 կալ/սմ², ռոպն: Հունիսի միջին ջնրմաստիճանը հյուսիսում +2-3° է, հարավում՝ +4-5°, հունվարիինը՝ -10-12°: Տարնկան թտիվում է 800-1000մմ տնդում: Հողատնսքնրը մարգագետնային են, դնւլի գոտու վնրին սահմանը ստտիճանաքար վնրածվում են կմախքային հողերի ու քարքարտտների: Հարթ ու մնդմաքնր լանջնրում խոտնրը գմտնատարած են, հավատարաչափ փոված, ինչպնն խոզվածք: Բուստտնեակները քիչ են բայց ցրտադիմացկուն, աչրի են ընկնում վառվտուն ծաղիկ ննրով: Ամռանը կննդանատնեակները այստնդ են բարձրանում մնրճալպյան գոտուց ևւ համնմատաքար ավնի քիչ են: Բացի կրճողներից ևւ թռչուններից, նրքնմն հանդիպում են գայլ, աղվնս ևւ կզաքիս: Ալպյան մարգագետնների գոտին օգտազործվում է անասնապահութայն (խաշոր ու մանր նդքնրավորներ) համար որպնն անասային հիանալի արտտավայր: Ալպյան արտտավայրնրով հռակված են Բյուրակնի Արագածի, Սիփանի, Ծաղկանց, Աբուլի, Արսիանի լեռները, Սյունիքի բարձրավանդակը: Ալպյան մարգագետինների քնական այս շտայլ սարգնը միշտ էլ զրգնւ է հարնւան անասնապահ ևւ թռչվոր ցնդերի ու ժողվութուրդների նվաճողական ախորճակը, որի սրտոճառով Հայաստան աշխարհը

բազմիցս ենթարկվել է ասպրտակոթյունների: **Ամբոճնային գոտի:** Այս գոտին որպես մերձարևադարձային գոտու լեռնային երկրներին բնորոշ օրինաչափություն գրադնցնում է 3500-3700 մ-ից ավելի բարձր գտնվող տարածքները և փաստորեն համատարած գոտի չի կազմում: Հայկական լեռնաշխարհում այս գոտին հանդես է գալիս որոշ լեռնագագաթների մերձգագաթային մասերում որպես նեղ օղակաշերտեր: Այդ լեռնագագաթներից են Արագածը, Վերջնակը, Սիփանը, Ջիլոն, Կապուտյուղը, Գոմշասարը (Գյամիշ), ՄՆժ և Փոքր Արարատները, Աս-հունդը, Սաբայանը, Թաֆնյանը, Մորսարը, Չախալը, Մոլուկը, Զաօքարը, Գժասա-րը, Թասարեն, Սամբին, Ջարասալը, Մանգանան, Հերավիլը, Մնասարը, Ավրինը: Բնկիռնում գերիշխում են մեծ թերությունները, քարակառկաքններն ու ժայռերը: Ջառիթափ լանջերը ամենուր պատված են քարաթափվածքներով, իսկ փոքր գոգերում ձյուն է կուտակված: Հողային ծածկը համարյա բացակայում է, ուտի և բույսերը հանդիպում են քարերի արանքներում, տեղ-տեղ կոքոսակների ու գորգների ծնուկ (քարկոտրուկ, բոջի, շյուղախոտ): Ավելի վեր բարձրանալիս ճնաքծերը ավելի մեծ տարածք են գրադնցնում և բույսերը վերանում են: Ամառը այս գոտի են գալիս թռչուններից մկնաբազն, ուլարը, իսկ կրծողներից հանդիպում են միայն դաշտամկներ:

Ջնածածկ գոտի: Հայկական լեռնաշխարհում մշտական ճնածածկ գոտին համատարած չէ, այլ տարածված է միայն 4250մ-ից ավելի բարձր գագաթներում, որոնք հավերժական ձյան գծից էլ բարձր են: Այդ գագաթներն են ՄՆժ Արարատը (5165 մ), Սիփանը (4434 մ) և Սաբայանը (4821 մ): ՄՆժ Արարատի հյուսիսային լանջին ձյան գիծը սկսում է 4250 մ-ից, հարավային լանջում՝ 4400 մ-ից: Սաբա-լանի հարավային լանջին ձյան գիծը սկսում է 4500մ-ից, իսկ հյուսիսայինում՝ 4360մ-ից, Սիփանի հյուսիսային լանջին՝ 4200 մ-ից, հարավային լանջին՝ ձյան գիծը մոտենում է կատարային մասին՝ 4420 մ-ի վրա է: Հայկական լեռնաշխար-հում ամենամեծ սառցադաշտը գտնվում է ՄՆժ Արարատի գագաթին, որի լեզվակներից մեկը հարավային լանջին իջնում է մինչև 2700 մ բարձրությունը, իսկ հյուսիսային լանջին՝ 3200 մ բարձրության վրա գտնվող Մասյաց վիհի սառ-ցադաշտային կրկնում, ուր շուրջ տարի պահպանվում են գագաթային սառցա-դաշտի պեղկից պոկված և Լկմ ցած գահավիժած սառցադաշտի մեծ զանգված-ները:



Միջին տարեկան խոնավացման գործակիցը (M_d)

- 1 - հարավահայկազ լանջեր
 - 2 - հարթավայրեր
 - 3 - հյուսիսահայկազ լանջեր
 - - գիտականներ
- } ներքին չգրային մարկ

Նկ. 28. Մթնոլորտի խոնավացման գործակիցի կոնսյացիոն կապը տնդի թարձրության հետ

Հայկական լեռնաշխարհի բնատարածքային կտրվածքները՝ ըստ շրջանների

Հնրատարածքային գոտիի ցուցիկը	Քվեառանձնական				Ճաշք կարգիստ				Ասխիսուս-Ճախիստ				Տարիսուս-Վիսիստ				Արիսիս				
	H	X	Z	K=X/Z	H	X	Z	K=X/Z	H	X	Z	K=X/Z	H	X	Z	K=X/Z	H	X	Z	K=X/Z	
Խախիսիս-Վիսիսիս	0.0-1.0	1000-2500	700-900	1.3-1.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
Միստարածքային	-	-	-	-	2500-800	1200	0.25	1200-1400	250-100	1350-1200	0.15-0.25	-	-	-	-	-	-	-	-	-	-
Միստարածքային	-	-	-	-	400-900	1000-850	0.1-0.6	1500-1800	250-400	1150-850	0.25-0.7	500-800	400-600	1400-1200	1200-1800	0.7-1.3	1500-2500	700-500	1000-600	0.35-0.6	
Միստարածքային	-	-	-	-	1000-2600	500-550	0.6-1.1	1900-2600	500-700	1000-900	0.6-1.0	800-1200	800-1150	1200-750	1500-2500	0.7-1.2	1500-2200	500-700	1000-600	0.5-1.1	
Միստարածքային	-	-	-	-	800-2000	800-550	1.0-1.3	-	-	-	-	-	-	-	-	-	800-1650	1200-700	600-1000	0.8-1.1	
Միստարածքային	200-2500	2200-3000	600-500	4-0.6-0.9	2000-2700	600-500	1.2-1.5	2500-3000	650-850	700-550	1.0-2.0	1600-1400	1500-700	2000-480	1200-1000	2.0-3.0	1200-1200	800-1000	700-500	1.1-3.0	
Միստարածքային	2500-3300	2500-3000	550-400	5.0-3.0	2700-1600	800-400	1.6-2.5	2900-3400	800-900	500-400	1.7-2.5	3400-1800	1500-2000	500-400	1.0-5.0	3200-3450	850-1000	500-400	1.6-2.5		
Միստարածքային	3200-3000	3000	4000-8000	7.0-11.0	3600-900-1100	400-400	2.2-3.0	-	-	-	-	3800-2050	2000-2050	400-400	3.0-4.0	3800-4200	900-1100	400-300	2.5-3.8		

H- բացարձակ բարձրությունը, K- խնամակցման գործակիցը, X-տեղումների քանակը, Z-գոլորդանվությունը

ԳԼՈՒԽ X
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՐԶԱՆԱՅՈՒՄԸ

Երկրագնդի մակերևույթի որևէ տարածքի ֆիզիկաաշխարհագրական շրջանացում կատարելիս որպես կանոն հաշվի է առնվում նրկու տարբեր հատկանիշներ ունեցող տիրույթների անցման շերտը կամ գիծը: Այդ հատկությունների տվյալների ճշտությունը կախված է հետազոտողի ընտրած մեթոդից և սկզբունքից: Այդ կանոնակարգված հիմնավորումների համաձայն մեր դիտարկումները վերաբերում են Հայկական լեռնաշխարհին: Դեռևս 11-12-րդ դդ.-ից սկսած Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրակն ուսումնասիրություններին վերաբերող աշխատություններում տարբեր հնդիմակներ նրա արտաքին սահմանները անցկացրել են ամենատարբեր տեղամասերով: Ճիշտ է, նման մտնցումներում ակնհայտ են ուսումնասիրողների մասնագիտական ըմբռնումները (պատմաաշխարհագրություն, նրկաբանություն, կլիմա, լեռնագրություն, գեոմորֆոլոգիա, ֆիզիկական աշխարհագրություն) և իհարկ նաև պատմական ժամանակաշրջանի քաղաքական նկատառումներն ու գիտության զարգացման մակարդակը: Այդուհանդերձ, նույնիսկ 1960-ական թվականներից հետո օբյեկտի ֆիզիկաաշխարհագրական համալիր մեթոդով կատարված ուսումնասիրություններում ևս նկատվում է նրա սահմանների անորոշություն, վիճելի սյուբեկտիվություն և սկզբունքի խախտումներ: Չխորանալով դրանց պատճառների մեկնադրման մեջ նշենք միայն, որ դա բխում է ոչ թե օբյեկտի բարդությունից, այլ դիտարկման խորության և համակողմանիության բացակայությունից, անշուշտ նաև ոչ ճիշտ ընտրված մեթոդից: Հայտնի է, որ գիտության տարբեր քննազավառներում շրջանացումը ունի խիստ կարմուր նշանակություն: Հաշվի առնելով ուսումնասիրվող օբյեկտի համար շրջանացման անհրաժեշտությունը, ստանձնեցինք այն կատարել: Հայկական լեռնաշխարհի համար ֆիզիկաաշխարհագրական շրջանացում կատարվում է առաջին անգամ: Անհրաժեշտաբար խնդրի լուծման համար սկզբում հարկավոր էր ճշտորեն անցկացնել նրա արտաքին սահմանները՝ շխախտելով Առաջավորասիական տարածաշրջանի լեռնային նրկրներից յուրաքանչյուրի համալիր ամբողջականությունը: Դրանից հետո սկզբունքային նույնպիսի մոտեցմամբ կատարել սահմանագծված օբյեկտի ներքին շրջանացումը: Այդ կարմուրագույն խնդրի լուծման համար ֆիզիկաաշխարհագրական համալիր մեթոդին զուգակցել ենք մաթեմատիկական մոդելավորման մեթոդները (սև արկղ, գրաֆների տեսություն, ալգորիթմներ, ֆունկցիաներ և այլն): Նշված մեթոդներով ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել:

1. բացառել սյուբեկտիվ մոտեցումը;

2. տվյալների համակարգչային բազային ցանցում ճշտորեն որոշելու տարածքի ֆիզիկատաշխարհագրական յուրաքանչյուր բաղադրիչի ֆունկցիոնալ կախվածության աստիճանը (ստորադասությունը):

3. բուստարածքի ցանկացած տնդամասի ծնագորման մեջ միավորներով հաշվարկելու բաղադրիչներից յուրաքանչյուրի դրսևորած դերի արժեքը (ցննգը):

4. պատճառահետևանքային հնտադարձ կապի օգնությամբ հաշվելու դրսնց սզդնցության աստիճանը:

Այդպիսի մոտնցմամբ համակարգչային հաշվարկումներից հնտո ստացնլ ներ Հայկական լննաշխարհի ու հարմուն տարածքների արտաքին տարանցատվածության սահմանաշնրտի չափներն ու բնությունը: Պարզվնց, որ այն իրննից ներկայացնում է մի ժապավնն (անցուղիկ շնրտ), որի տարբեր հատվածննրում, ըտտ տնդամասների, փոխվում են բնատարածքի ծնածազումնարանական, ծագումնամիտանությունն ու մթնոլորտի խոնավացման ցուցանիշննրը: Տարբեր բնատարածքննրում փոխվում է այդ ժապավննի լայնությունը 60-420 մ սահմանննրում: Ստացված այդ ուրվապատկննր համադրելով Հայկական լննաշխարհի աւււա մասնզհտական ու տնդագրական տարամասշտար քարտնզննրի, ինչպնս նաև սդատիկնրական հանությունն ինֆորմզցիայի հնտ, ճշգրտվնց օբյնկտի կոռնիկացված նգրզգիծը: Այն առավնլ ճշտության բարձր մակարդակ է ապահովում՝ ներկայիս բնական իրափիճակին համապարտասխան: Այդ սահմանննրում ներփակված Հայկական լննաշխարհը ներկայանում է որպնս մի ֆիզիկական աշխարհագրական միածույլ ու ուրույն ամբողջականություն (տնս քարտնզսխնման, նկ. 27): Նրա գլխավոր առանձնատկությունը ընլինֆի բարձրադիրությունն է, հստակ արտահայտված ազոնալ գոտիականությամբ: Որպնս սկզբունք այդ սահմանաշնրտը անցնում է ընլինֆի ցածրադիրներով: Հայկական լննաշխարհի ֆիզիկատաշխարհագրական կարգաբանական մարզ միավորի սահմանննրի մաւին տնս գլուխ I, կնտ I-ում: Համածայն ֆիզիկատաշխարհագրական շրջանացման կարգաբանական համակարգի՝ լննաշխարհում առանձնացվում են հնտնույլ նրնք ստորադաս միավորննրը՝ ննթամարզննրը:

I. Հուսիսային ծալբարեկոթավոր լեոնների եւ միջլեոնային գոգավորություննների ենթամարզ:

II. Հրաբխային բարձրավանգակնների (Միջնաշխարհ) ենթամարզ:

III. Հարավային ծալբարեկոթավոր լեոնների եւ միջլեոնային գոգավորություննների ենթամարզ:

Ենթամարզնում առանձնացված են ստորադաս մյուս միավորննրը՝ նախանգննրը (կամ պրոփնցիաննրը), գավառննրը (կամ ննթապրոփնցիաննրը) ու շրջանննրը:

Այսպես.

I. Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների եւ միջլեռնային գոգավորությունների ենթամարզում առանձնացվում են՝ *Ա. Արմինյան Պոնտոս, Բ. Փոքր Կովկաս, Գ. Անտիաբնտոս* կամ *Բարձր Հայք, Դ. Փոքր Հայք* ֆիզիկաաշխարհագրական նահանգները (պրովինցիաները) (նկ. 29):

II. Հրաբխային բարձրավանդակների (Միջնաշխարհի) ենթամարզում առանձնացվում են՝ *Ա. Հյուսիսային հրաբխային բարձրավանդակ, Բ. Հարավային հրաբխային բարձրավանդակ, Գ. Մերձմիջնարարս, Դ. Արմինյան հրաբխային բարձրավանդակ* ֆիզիկաաշխարհագրական նահանգները:

III. Հարավային ծալքաբեկորավոր լեռների եւ միջլեռնային գոգավորությունների ենթամարզում առանձնացվում են՝ *Ա. Հայկական (Արմինյան) Տավրոս, Բ. Միջգանդք Հայոց, Գ. Կորդոս, Դ. Արմանա-Ճսիբերդ (կամ Մերձուրնի)* եւ *Մերձկասպ ֆիզիկաաշխարհագրական նահանգները:*

Նահանգներում առանձնացվում են ֆիզիկաաշխարհագրական գավառներ (ենթանահանգներ կամ ենթապրովինցիաներ) եւ շրջաններ միավորները: Այսպես, **I. Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների եւ միջլեռնային գոգավորությունների ենթամարզի Ա. Արմինյան Պոնտոս** նահանգում առանձնացվում են 1. Ջանիկ-Գյումուշխանա գավառը ա) Ջանիկ, բ) Գիրնուտն, գ) Գյումուշխանա շրջաններով; 2. Ջիզանա-Պարխար գավառը ա) Ջիզանա, բ) Խաղտյաց, գ) Պարխար շրջաններով; *Բ. Փոքր Կովկաս* նահանգում առանձնացվում են 1. Մուսխիթ-Թունդ գավառը ա) Շավշիթ, բ) Մնսխիթ, գ) Թունդ շրջաններով; 2. Գուգարաց (կամ Դեբեւ-Աղստնու) գավառը ա) Գուգարք, բ) Բաղնոփոր, գ) Տավուշ շրջաններով; 3. Ծաղկունյաց-Մեւան գավառը ա) Ծաղկունյաց, բ) Մեւան շրջաններով; 4. Գարդման-Ճակաշեն գավառը ա) Գարդման, բ) Ճակաշեն շրջաններով; 5. Արցախ գավառը ա) Մռավսար, բ) Խաշեն, գ) Վարանդա, դ) Դիզակ, ե) Վայկունիք շրջաններով; *Գ. Բարձր Հայք* նահանգում առանձնացվում են՝ 1. Անտիպոնտոս գավառը ա) Ակնախա, բ) Եշիլորմակ, գ) Սվագ, դ) Թոքատ շրջաններով; 2. Դարանաղ-Կապույտ գավառը՝ ա) Դարանաղ, բ) Սլիդնու (Չիմնու), գ) Կապույտ շրջաններով; 3. Տայք գավառը ա) Կոփա, բ) Ճորոխ, գ) Տայոց շրջաններով; *Դ. Փոքր Հայք* նահանգում առանձնացվում են՝ 1. Թեջնի-Տնորիկ գավառը ա) Սնքաստիա, բ) Վերին Ծամրնդակ, գ) Տնորիկ (Դիվրիգ) շրջաններով; 2. Կյուրին-Չալգան գավառը ա) Վերին Մելա, բ) Կյուրին, գ) Ալբիստան, դ) Չալգան, ե) Աբաբեկի, գ) Ստորին Մելա (Թոխմա) շրջաններով:

II. Հրաբխային բարձրավանդակների (Միջնաշխարհի) ենթամարզի Ա. Հյուսիսային նահանգում առանձնացվում են՝ 1. Արսիան-Ջավախք գավառը ա) Գողերձի, բ) Արսիան, գ) Էրուշիթ, դ) Ջավախք, ե) Կենուտ (Խոնավ), գ) Չլդր (Ծովակ Հյուսիս), է) Եղնախաղ, ը) Արդահան շրջաններով; 2. Վանանդ-Շիրակ գավառը ա) Կարսի Փորակ, բ) Կարս, գ) Շիրակ, դ) Արագած, ե) Արագածոտն,

գ) Արարատյան շրջաններով; 3. Ծիրանյաց-Մեծրաց գավառը ա) Ծաղկավնտ, բ) Կարին, գ) Ծիրանյաց-Մեծրաց, դ) Բասն, ե) Կնշուան շրջաններով; 4. Սյունիք գավառը ա) Գեղամա, բ) Վարդնիս, գ) Սյունյաց շրջաններով: *Բ. Միջնարարք* նահանգում առանձնացվում են՝ 1. Ուրծ-Վայք գավառը ա) Երանոս-Ուրծ, բ) Վայք, գ) Շարուր, դ) Նախիջուան, ե) Գողթն շրջաններով; 2. Ջանգձուր գավառը ա) Բաթգուշատ, բ) Ողջի-Մեղրի, գ) Ջահուկ, դ) Մալվարդ-Կապուտջուղ շրջաններով; 3. Արտագ-Կոտուր գավառը ա) Մակու, բ) Արտագ, գ) Կոտուր-Խոյ, դ) Շիրական շրջաններով; 4. Պարսպատունյաց գավառը ա) Կամքի, բ) Հայոց (Ղարալաղ), գ) Ահար շրջաններով: *Գ. Հարավային* նահանգում առանձնացվում են՝ 1. Հայկական Պար գավառը ա) Ջրաբաշխ, բ) Բարդուղ-Սինակ, գ) Մասիս, դ) Կոզհովիտ, ե) Ալաշկերտ, գ) Շարիան շրջաններով; 2. Մերձվան գավառը ա) Թոնդրակ-Ծաղկանց, բ) Ծաղկոտն, գ) Մանազկերտ-Դոթթաղ, դ) Բզնունյաց, ե) Մարմնտ, գ) Մարդաստան շրջաններով; 3. Բյուրակն-Տարոն գավառը ա) Մեղնդուք, բ) Բյուրակն-Խնուս, գ) Տվարածատափ, դ) Տարոն շրջաններով; 4. Մերձարածանի գավառը ա) Մեմասկուտ, բ) Կոհնր, գ) Ճապաղջուր, դ) Բալու շրջաններով; 5. Ներքին Տավրոս գավառը ա) Մնձուր, բ) Մերջան, գ) Գայլախագ (Պախր), դ) Այծպոկունք, ե) Դերսիմ, գ) Պաղին: *Զ. Արևմտյան* նահանգում առանձնացվում են հետևյալ գավառները իրենց շրջաններով. 1. Սոհունը (Մեհենդ, Հարամղաղ) գավառը ա) Թավրիզ, բ) Սոհունդ, գ) Մարալու, դ) Շու շրջաններով; 2. Սաբալան գավառը ա) Սաբալան, բ) Վարարատ, գ) Կատիշաց, դ) Մոխրատար (Մարսուար), ե) Միանն, գ) Արդարիլ շրջաններով:

III. Հարավային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների ենթամարզի Ա. Հայկական (Արևմտյան) Տավրոս նահանգում առանձնացվում են՝ 1. Մալաթիա գավառը ա) Նուրիակ-Ղնկուզնկ, բ) Մարաշ-Պագարցիկ, գ) Մալաթիա, դ) Այնթափ, ե) Արսանսուր, գ) Շիրիմ (Տեր-Վեր) շրջաններով; 2. Ծոփք գավառը ա) Անձիտ, բ) Ծոփք, գ) Անզնդ, դ) Իշխանի սար; 3. Ադձնիք գավառը ա) Նփրնտ, բ) Տիգրանակերտ, գ) Դիարբեքիք, դ) Արգան, ե) Տավորիկ-Անդոկ, գ) Սասուն-Մալանձոր շրջաններով; 4. Մոկր-Աղբակ (Կամ Վերին Մեծ Ջաբ) գավառը ա) Կեծան (Խիզան), բ) Մոկու-Շատախ, գ) Ռչտունիք, դ) Հայոց ձոր (Խոշար), ե) Աղբակ շրջաններով: *Բ. Միջագնոր Հայոց* նահանգում առանձնացվում են՝ 1. Մասիտու-Մարդին գավառը ա) Մուսավիրակ, բ) Բուրաճ, գ) Մասիտու-Մարդին, դ) Ծավդնք շրջաններով; 2. Ուռեա (Ուրֆա)-Արվաստան գավառը ա) Ուռեա, բ) Վերին Խաբուր, գ) Արվաստան, դ) Միդիաք, ե) Մասիտու շրջաններով: *Գ. Կորդուք (Կորձայք, Կորդվաց)* նահանգում առանձնացվում են՝ 1. Կորդուք գավառը ա) Ջերմաձոր, բ) Կորդուք, գ) Ագարակ, դ) Կորդիք, ե) Անձնուաց շրջաններով; 2. Նիխորական գավառը ա) Ջողա-Մորսար, բ) Նիխորական, գ) Մահկերտ շրջաններով; 3. Արմաձին գավառը ա) Դասն, բ) Արմաձին շրջաններով: *Զ. Արմասև-Շախերդ* նա-

հանգում առանձնացվում են՝ 1. Ուրմիա գավառը ա) Սալմաստ, բ) Տամբեր, գ) Թրաբի, դ)Մարի, ե) Արասխ (Հովնա) շրջաններով; 2. Արմանա գավառը ա) Հորակն, բ)Գուշտակ, գ) Գանձակ, դ) Սարկապ շրջաններով; 3. Շահբերդ գավառը ա)Շահբերդ, բ) Մարադաշտ, գ) Կարմրան, դ) Ծովշտիկ շրջաններով; Ե. Մերձկասպ նահանգում առանձնացվում են՝ 1. Փայտակարան գավառը ա) Սուրանդարան, բ) Մուղան, գ) Թալիշ շրջաններով; 2. Գնդան գավառը ա) Գնդայք (Գիլան), բ) Բոգրով, գ) Կոլուր (Կլոբ) շրջաններով:

Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական ներքին շրջանագման քարտեզ-սխեման (տե՛ս Բզ. 11) և անվանումների աղյուսակը տես կից էջ ... ում: Աշխատությունում աշխարհագրական տեղանունները հիմնականում տրված են հայկական (արտոմական) անվանումներով, որոշ դեպքերում անհրաժեշտաբար փակագծում նշվելով օտար (ներկայիս գործածական) անվանումը:

Մարզ	Ենթամարզեր	Նահանգներ (այրովիմցիաներ)	Վավառներ (եմթապրովիմցիաներ)	Երթաններ
ՀԱՅԿՍՏԱՆԻ ԼԵՈՒՍԱՇԽԱՆՆԵՐ	I. Հյուսիսային ծալքաքեկորավոր լեռներ եւ միջլեռնային զոգավորություններ	Ա Արեւելյան Պոնդրոս	1. Ջանիկ- Գյումուշխանա	ա) Ջանիկ, բ) Գիբուտու, գ) Գյումուշխանա
		Բ Փոքր Կովկաս	2. Ջիզանա-Պարխար	ա) Ջիզանա, բ) Խաղտլազ, գ) Պարխար
			1. Մեսխեթ-Թոնդր	ա) Հավչեր, բ) Մեսխեթ, գ) Թոնդր
			2. Գուգարազ	ա) Գուգարազ, բ) Բողոմիոր, գ) Տավուշ
			3. Ծաղկունյազ-Սեւան	ա) Ծաղկունյազ, բ) Սեւան
			4. Գաղղման-Շակաչեն	ա) Գաղղման, բ) Շակաչեն
		Գ Բարձր Հայք (Անդրիպոնդրոս)	5. Արցախ	ա) Մոսավար, բ) Խաչեն, գ) Վարանդա, դ) Դիզակ, ե) Վալկու- մից
			1. Ամասիա-Թոքատ	ա) Ամասիա, բ) Եշիլորմակ, գ) Ավազ, դ) Թոքատ
			2. Դառանադ-Կապուլտ	ա) Դառանադ, բ) Ակիղնս (Չինեն), գ) Կապուլտ
		Դ Փոքր Հայք	3 Տայք	ա) Կոփա, բ) Կոթուխ, գ) Տայք
	1. Թեցեր-Տերիկ		ա) Սեբաստիա, բ) Վերին Ուսարնյալ, գ) Տերիկ (Դիվրեկ)	
	II. Հրաբխային բարձրավանդակներ (Միջնաշխարհ)	Ա Հյուսիսային	2. Կյուրիմ-Չալկան	ա) Վերին Մելաս, բ) Կյուրիմ, գ) Մջիստան, դ) Չալկան, ե) Արաքլիտ, գ) Ատորին Մելաս
			1. Արսիան-Ջավախք	ա) Գողերծի, բ) Արսիան, գ) Էրուշեր, դ) Ջավախք, ե) Ելուտ, գ) Չոլք, է) Եղնաղխաղ, ղ) Արասիան
			2. Վանանդ-Շիրակ	ա) Կարմիր Փորակ, բ) Կարս, գ) Շիրակ, դ) Արալած, ե) Արազածոտն, գ) Արարատյան
			3. Ծիրանյազ-Մեծրազ	ա) Ծաղկավեժ, բ) Կարին, գ) Ծիրանյազ-Մեծրազ, դ) Բասեն, ե) Կելուան
		Բ Միջնարարս	4. Սյունից	ա) Գեղամա, բ) Վարդենիս, գ) Սյունազ
			1. Ուրծ-Վայք	ա) Երանո-Ուրծ, բ) Վայք, գ) Ըաքուր, դ) Նախիջեան, ե) Գողթն
			2. Ջանգեզուր	ա) Բարպուչատ, բ) Ուրդի-Մեղրի, գ) Ջանուկ, դ) Սալվարդ- Կապուտջուղ
			3. Արտազ-Կոտուր	ա) Մակու, բ) Արտազ, գ) Կոտուր-Խոյ, դ) Շիրական
			4. Պասապատունյազ	ա) Կամքի, բ) Հայք, գ) Ախար